




« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը չիրպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտե- նական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նչ հոգին չմարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միտք կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնու- թիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ



# ԱՆԱԾԻՏ

ՀԱՆՊԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1899

ԹԻԻ 7

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ

— 0 —

Ի՞նչ արդիւնքի պիտի յանգի Ձէնընկեցութեան Դեսպանաժողովը, որ պիտի սկսի մայիս 18ին: Ձեռք գիտեր: Յոռետեսները, խորամանկները, սկեպտիկները Ձարին հրաւերին մէջ թաքուն մեքենայութեանց զսպանակներ միայն կ'ուզեն նշմարել եւ հիմակուց կը շտապեն պատգամել թէ այդ գումարումը ուրիշ բան պիտի չըլլայ բայց եթէ մեծազոր գիւսաֆո մը: Բայց ժողովուրդները սկեպտիկ չեն: — Բարեբաղդաբար: Անոնք խոշոր տղաքներ են, երեւակայութեամբ ու զգայնութեամբ ապրող. եւ անոնց համար իրողութիւնները յաճախ կ'առնեն իմաստ մը՝ իրենց հեղինակին ուղածէն շատ տարբեր: Ժողովուրդները Ձարին հրաւերը ըմբռնեցին իրենց պարզողական եղանակովը, իրենց երազին եւ կամքին մէջէն զանի այլափոխեցին, ընդլայնեցին, եւ Պատերազմին դէմ պատերազմի կոչ մը նկատեցին ինչ որ խորամանկները դիւանագիտական դադար մը ձեռք ձգելու միջոց մը կը համարին ապագայ հսկայական բազխումին աւելի ընդարձակօրէն պատրաստուելու համար: Ժողովուրդներն են թերեւս որ իրաւունքունին, եւ անկարելի չէ որ անոնց մեկնութիւնը յաղթանակէ: Տիտղոսն իսկ Համաժողովին — Ձէնընկեցութեան Համաժողով — հիանալի խեղաթիւրում մըն է որով ժողովուրդները ուզեցին սպառազինմանց բարձունն ու պատերազմին ջնջումը նկատել ինչ որ պատերազմական

ծախքերու համեմատական նուազումն ու պատերազմի գործիքներէ ոմանց վրայ վէճ մը պիտի ըլլար լոկ: Եւ տեսէք, առաջին քայլէն իսկ, ժողովուրդները յաղթանակը տարին: Անոնց ստեղծած տիտղոսը, հակառակ պաշտօնական հեղքումներուն, տիրական դարձաւ, բոլոր արձագանգներէն կըրկնուեցաւ, ու մնաց: Եւ տիտղոս մը, — մանաւանդ այսպիսի տիտղոս մը որ մարդկային ամենէն ընդարձակ նշանակութիւնը ունի — չափազանց կարեւոր տարր մըն է ինքնին: Դէպքը որ պիտի տեղի ունենայ այդ տիտղոսին ներքեւ, անշուշտ առժամապէս պիտի չհամապատասխանէ տիտղոսին. բայց տիտղոսը, խորհրդաւոր գորութեան մը պէս՝ պիտի սաւառնի Համաժողովին բոլոր դաւերուն ու կիսճիւղներուն վրայ, ու ժողովուրդներուն կամքը պիտի ներկայացնէ բանակցողներուն նենգութեանն ու հոսկանութեանը վերեւ կախուած: Ինչ ալ ըլլայ Համաժողովին արդիւնքը, սա իրողութիւնը միայն որ Ձար մը ձայն բարձրացուցած եղաւ այն ջախջախիչ բեռին դէմ զոր պատերազմի վախը կը ծանրացնէ մարդկութեան ուսին, եւ հրաւեր կարգաց մարդոց պետերուն որ այդ բեռը թեթեցնելու միջոցները խորհին, այդ իրողութիւնը միայն քայլ մըն է քաղաքակրթութեան ճամբուն մէջ: Ձարը ատով աւելի բան ըրաւ խաղաղութեան գործին յաջողմանը համար քան մտածողներու բոլոր տեսութիւններն ու ընկերվարականներու բոլոր ճառերը: Այլեւս յետին հիւզակին մէջ, ամենէն խոնարհ ուղեղին խորը, ուր պատերազմին անհրաժեշտութեան գաղափարը կը տիրէր տակաւին, մէկ հար-

ուածով թափանցեց սա մտածումը թէ՛ Պատե-  
րազմը չարիք մըն է , եւ թէ կարելի է դայն  
բառնալ , քանի որ Չար մը , պատերազմի  
գաղափարին պաշտօնական ներկայացուցիչնե-  
րէն մէկը , այդպէս կը յայտարարէ : Չարին  
հրաւէրը հզօր ոլորակներէն մէկը եղած  
պիտի ըլլայ որոնք մարդկային բարբարոսու-  
թեան վրայէն կ'անցնին ու զայն կը հարթեն,  
կ'ողորկեն : Լա Հէի ժողովքը , ինչ արդիւնք  
ալ տայ , ինչպէս ալ մեկնուի , քաղաքակըր-  
թութեան ճիգ մըն է իր բնութեամբը :

Բերանաբաց լաւատեսութեան մը բարբա-  
նացնելը չեն ասոնք : Իրողութիւնները դի-  
մացնիս են , ու բաւ է որ զանոնք տեսնել ,  
զանոնք հասկնալ գիտնանք : Պատերազմներու  
հաշիւը մաքրելու համար տեղի ունեցած են  
այս դարուս մէջ Համաժողովներ , որոնք կա-  
րեւոր փոփոխութիւններ յառաջ բերած են  
աշխարհիս քարտէսին վրայ . բայց ոչ մէկ  
Համաժողով այսքան ազմուկ յարուցած , այս-  
քան ժողովրդականութիւն գտած եւ առաջուց  
այսքան վիճուած ու մեկնուած չէ որքան այս  
Համաժողովը որ պիտի գումարուի՝ Պատերազ-  
մին դէմ : Ու ամէն ինչ որ ըսուեցաւ ու գը-  
րուեցաւ Չարին առաջին հրաւէրէն ի վեր ,  
հաստատում մըն է այն գաղափարին թէ ժո-  
ղովուրդները Պատերազմին ջնջումը կը բող-  
ձան : Բաց ի բրուսիական անտառին մէկ քանի  
վարազներէն որոնք Պատերազմին սրբազնու-  
թեան , հարկաւորութեան եւ բարեբարու-  
թեան մարգակերական վաղնջուց վարդապե-  
տութիւնը յանդգնեցան խանչել , ըսողը ձայ-  
ները որ բարձրացան՝ մշտական խաղաղութեան  
ի նպատակ բողձանքներ արտայայտեցին : Եւ  
եթէ ճշմարիտ է որ , Խաղաղութեան Հոմա-  
ժողովէն անմիջապէս առաջ իսկ , մէկ քանի  
կառավարութիւններ , — Գերմանիա , Անգլիա ,  
Ամերիկա , եւ նոյն ինքն Ռուսիա — իրենց  
սպառազինութիւնները աճեցնելու շտապով  
մը բռնկեցան՝ արտառոց բայց դերահասկա-  
նալի հակասութեամբ մը , նոյնչափ ճշմարիտ  
է որ ժողովուրդները , իրենց ձգտումները ար-  
տայայտող հաւաքական մարմիններուն , ինչ-  
պէս եւ իրենց հոգին թարգմանող մեծ ան-  
հասներու ձեռքով , ցուցուցին թէ նոյնիսկ  
կառավարութիւններուն կողմէ տրուած այս  
առիթին կարեւորութիւնը բմբռնած են եւ  
պիտի գիտնան կառավարողներուն քմայքին  
դիմացը հանդիտաւորապէս բարձրացնել իրենց  
կամքը , որ վաղուան օրէնքը պիտի ըլլայ :

Ինչ որ Բոլ Ատան կը տենչար իր գեղեցիկ  
յօդուածին մէջ , որուն թարգմանութիւնը կը  
հրատարակենք ստորեւ , պիտի կատարուի :  
Աշխարհիս ամէն երկիրներէն , ամէն ազգե-  
րէն , ամէն կուսակցութիւններէն եւ ամէն  
դատերէն շնորհակալութեան ուղերձներ զըր-  
կուեցան Չարին , ի պատասխան իր հրաւէ-  
րին : Կոմս Մուրավիէֆ , իր երրորդ չըջա-  
բերականով , Չարին շնորհակալութիւնները կը  
յայտնէր բովանդակ մարդկութեան կողմէ ի-  
րեն եւ իր գաղափարին ցոյց տրուած այդ  
փութկոտ ու ջերմագին խանդավառութեանը  
համար Պ . Սթէա , «Րիվիուօլ Րիվիուօ»ի տը-  
նօրէնը , որուն գործակցութեան բաժինը Չարին  
յղացմանը մէջ՝ մատնանիչ ըրած էինք նա-  
խորդ յօդուածով մը , կը շարունակէ իրա-  
գործել իր ծրագիրը որով Չարին խոստացած  
էր արեւմտեան Եւրոպայի հանրային կարծիքը  
բորբոքել ի նպատակ Խաղաղութեան . Անգ-  
լիոյ մէջ իր միթիւնները ամենամեծ յաջո-  
ղութիւն ունեցան , հակառակ կառավարու-  
թեան առջի բերան ցոյց տուած պաղ ու գրե-  
թէ հեզոտ վարմունքին . անգլիական հան-  
րային կարծիքը կ'ազմակերպուեցաւ ու հուսկ  
ապա ազգեց նոյն իսկ պաշտօնական մարմիննե-  
րուն վրայ . այն պատասխանը զոր Պ . Պալ-  
ֆուր տուաւ Սոլդաէրիի կողմէն Պ . Սթէաիւ  
Խաղաղութեան պատգամաւորներուն որոնք  
զացած էին կառավարութեան ձգտումները  
հարցնել , Չարին առաջարկին ամբողջութեանը  
համար — բաց ի մէկ քանի որոշ վերապահու-  
մերէ — շատ յարգալից եւ նոյն իսկ հաւատա-  
ւոր էր : Պ . Սթէաի ստեղծած շարժումը Ծը-  
բանսայի մէջ ալ փոխանցուեցաւ , ու մտքերը  
պատրաստ են այստեղ խաղաղասիրական գոր-  
ծին մասնակցելու : Նոյն երեւոյթը տեղի  
կ'ունենայ Իտալիոյ , Գերմանիոյ , Աւստրիոյ  
հասարակութեանց մէջ , ինչպէս եւ Ամերիկա :  
Մայիս 18ին , Լա Հէի պաշտօնական համա-  
ժողովին շուրջը , խաղաղասիրական ազատ հա-  
մագումար մը պիտի ձեւանայ՝ մարդկային  
մտաւորականութեան ներկայացուցիչներէն  
կազմուած : Միւսնոյն ատեն , ընկերվարա-  
կաններու եւ անիշխանականներու երկու հա-  
մաժողով պիտի գումարուի Լա Հէի մէջ , նոյն  
ինքն ժողովրդին , տառապող ու դժգոհ ժո-  
ղովրդին բողոքն եւ իզճը անպատրուակ  
յայտնելու համար կառավարական Համաժողո-  
վին քովն ի վեր : Վերջապէս , ճնշուած ազ-  
գերու , անիրաւուած երկիրներու , կեղե-

քուած դասակարգերու ձայնը , յիշատակա-  
գրերով կամ պատգամաւորներով , պիտի  
հասնի Լա Հէ , եւ պահանջէ բարձու մը բոլոր  
լուծերուն , գոհացումը բոլոր արդար պահանջ-  
ներուն , անհրաժեշտ պայման իրական խաղա-  
ղութեան մը հատաստման :

Ինչ ալ ըլլայ Համաժողովին արդիւնքը ,  
մարդկային ամէն դասակարգերու եւ կուսակ-  
ցութեանց այս մեծաշուք համախմբումը՝ մեծ  
գաղափարի մը յաղթանակին համար , իր գե-  
ղեցկութիւնը պիտի ունենայ . եւ գեղեցկու-  
թիւն մը ամուլ չի կրնար մնալ : Ամէն գաղա-  
փար նախ կը ներկայանայ երազի մը ձեւով ,  
յետոյ կը կազմակերպուի ու գեղեցկութիւն  
մը կ'ըլլայ ամենուն մատչելի ու ցանկալի ,  
մինչեւ որ տիեզերական ցանկութեան ու պա-  
հանջին զօրութեան տակ՝ մարմնանայ եւ իրա-  
կանութիւն դառնայ : Այս Համաժողովը մարդ-  
կային մտքին արդի մէկ պէտքին ծնունդն է :  
Պատերազմին դէմ առելութիւնն է որ մտա-  
ծողներու շրջանակէն կ'ելլէ ու մինչեւ կայսեր  
մը ուղեղին մէջ կ'երթայ տեղաւորուել : Անոնք  
որ կ'երեւակային թէ Ջարին այս առաջարկը  
միմիայն դիւանագիտական հաշիւ մըն է , իրենց  
յոռետեսութիւնը անձիշտ ծայրայեղութեան  
մը տարած կ'ըլլան . անշուշտ , ոուս դի-  
ւանագիտական բարձրագոյն շրջանակները  
նիւթապաշտ , գործնական , շահադէտ աչ-  
քով մը կը նկատեն խնդիրը , եւ անոր մէջ  
կը տեսնեն իրենց քաղաքականութեան մաս-  
նաւոր շահը , որուն համար իրօք , արդի կա-  
ցութեան մէջ , մեծապէս հարկաւոր է զինու-  
զադար մը եւ սպառազինմանց ծախքերու թե-  
թեւացում մը . բայց Ջարին առաջարկը այդ  
հաշիւներէն չէ ծնած . ամէն անոնք որ—ինչ-  
պէս Պ . Սթէտ , —առիթ ունեցած են մօտէն  
ճանչնալ Նիքոլա Բ . ը , անոր մէջ գտած են  
գաղափարապաշտ միտք մը , Ֆրանսացի ի-  
մաստասէրներու ազդեցութեամբ կազմուած ,  
Թալսթոյի ներգործութիւնը կրած : Ջարը , կը  
հաստատէր Պ . Սթէտ , իր մտքին մէջ սաղմի  
ձեւով ունէր արդէն խաղաղութեան ի նպաստ  
նախաձեռնութիւն մը ստանձնելու մտածումը ,  
եւ իր որոշումը տուաւ կարգալէ յետոյ Պլիոքի  
գլխիքը , եւ տեսակցելէ յետոյ Պ . Սթէտի հետ  
որ արեւմտեան Եւրոպայի համակրութիւնը ա-  
պահովեց այդ ծրագրին համար : Ուրեմն Ջարին  
արարքը կը ծագի ոչ թէ հաշիւէ մը , այլ գա-  
ղափարէ մը : Եւ Ջարի մը կողմէ այսպիսի  
գաղափարի մը ընդգրկումը մեր ժամանակին

մեծ նշաններէն մէկն է : Այդ գաղափարին իրա-  
կանացման առաջին քայլը առնել անձնապէս  
առաջարկելով , Ջարը դրական հողի վրայ դրաւ  
գաղափարը որ մինչեւ հիմայ ցնորք մը կը նկա-  
տուէր կամ հեռաւոր խոհալ մը , եւ նպաստեց  
որ անոր իրականացումը փութացուի : Այդ  
իրականացումը եթէ չսկսիայս Համաժողովին,  
պիտի չուշանայ կատարուած իրողութիւն  
դառնալու : Կը բաւէ որ մարդկութիւնը Հա-  
մաժողովին մէջ մեծագոյ ու յստակ կերպով  
բարձրացնէ իր ձայնը ի նպաստ խաղաղու-  
թեան . եւ ատոր համար պէտք է որ լուա-  
տեսները եւ խանդավառները աւելի բազմաթիւ  
ըլլան քան տարակուսողները . պէտք է որ  
մարդկութիւնը բացէ ի բաց յայտնէ իր կամքը  
եւ իր հաւատքը , եւ այդ բարոյական ուժին  
առջեւ ոչ մէկ գէնք , ոչ մէկ հաշիւ կրնայ կանգուն  
մնալ : Այս Համաժողովը ճամբու դարձք մըն  
է՝ պատմութեան մէջ : Մարդկային մտքին  
նոր մէկ ուղղութեան արապետմանը սկըզբ-  
նաւորութիւնն է :

Մտքի այս նոր վիճակը փոփոխութիւնն է այն  
եղանակին որով մարդկութիւնը հիմա կ'ըմբռնէ  
«հերոս» : Հերոսը , այսինքն գերագոյն մարդը ,  
տիպար-մարդը , հին աշխարհին մէջ , եւ դեռ մին-  
չեւ երէկ , այն մարդն էր որ ամենէն աւելի ճար-  
տար էր եւ յանդուգն՝ սպաննելու արուեստին  
մէջ . կեանքի պայքարը կը հիմնուէր մարդ-  
կային արիւնի վրայ . քաղաքակրթութիւնը  
կ'ընթանար մարդազոհերու միջոցով . եւ կը  
կարծուէր իսկ թէ կեանքին անյեղլի մէկ օրէքն  
էր ատիկա : Բանաստեղծները որ մայրերուն  
բողոքը թարգմանեցին , մտածողները որ  
մարդկային անհատին իրաւունքը հաստատե-  
ցին եւ մարդազոհերուն խուժողութ անխմաստու-  
թիւնը մատնանիչ ըրին , արդէն քայքայեցին  
այն սրբազնացուցիչ լուսապսակը որով Պա-  
տերազմը կ'երեւար մեր հայրերուն՝ գեղեցիկ  
ու հրապուրիչ : Պատերազմը ի յայտ եկաւ իր բուն  
դէմքով , իբր արհաւիրք մը , իբր աղէտք  
մը , իբրեւ մարդուն նախապատմական կիսա-  
նասնային կեանքին մէկ մնացորդ . բայց  
դեռ համոզուողներ կային թէ այդ Աղէտքը  
անխուսափելի , ճակատագրական եւ անհրա-  
ժեշտ ուժն էր կեանքին ընաչըջութեան համար .  
եւ կտառաւորները իրենց շահուն համաձայն  
կը գտնէին այդ վարդապետութեան վրայ  
կըթընել , թէ՛ իրենց ժողովուրդները զսպե-  
լու եւ թէ՛ միջազգային մրցումին մէջ  
յաղթանակը ձեռք բերելու համար : Գիտուե-

թիւնը եւ Վաճառականութիւնը , իրենց արդի տարապայման դարգացումովը , մահացու հարուածը տուին այդ բարբարոս վարդապետութեան , եւ մարդկային մտքին այս կազմութիւ սկսող նոր վիճակին հաստատութիւն մը եւ զօրութիւն մը փոխանցեցին որ վաղը զայն տիրական եւ մշտական վիճակը պիտի դարձնէ : Գիտութիւնը , իր շոգիովն ու ելեքտրականութեամբը , ազգերու միջեւ յարաբերութիւնները ընդլայնեց , սահմանազլուխները կտրեց եւ քաղաքակիրթ աշխարհը կապակից մարմին մը դարձուց . ժողովուրդներուն այս անմիջական ու շարունակական համահարգութիւնը հին մոլեռանդութիւնները մեղմեց , եւ ստեղծեց «մարդկային» իտէալ մը , եւ «մարդկային» շահեր . եւ ատոնք արդէն պատերազմի դրութեան ջնջումը պատրաստող իրողութիւններէին : Միւս կողմէ , Գիտութիւնը , պատերազմի մարդոց մատակարարելով ջնջումի գործիքներ հետզհետէ աւելի զարհուրելի , ատով խի սատանորդի խաղ մը խաղացած եղաւ Պատերազմին , եւ անոր ծառայել թուած ատենը , զայն սպաննեց . այսօր երկու մեծ ազգերու միջեւ պատերազմ մը , շնորհիւ Գիտութեան ստեղծած միջոցներուն , միլիոնաւոր մարդոց փճացումը պիտի յառաջ բերէր եւ երկու երկիրներուն հիմնական քանդումը . այս հաշիւն է որ ուս հեղինակը , Պլիոք , կատարած է ապագայ պատերազմին վրայ իր գործին մէջ , որուն ընթերցումը Ձարը իր որոշմանը միող դէպքերէն մէկը եղաւ . Պլիոք մատիւնութիւկական եղանակով մը ապացուցած է որ եթէ սպառազինմանց աճման եւ կատարելագործման այս դրութիւնը շարունակէ , պատերազմը անհնարին պիտի դառնայ երկու մեծ ազգերու միջեւ , որովհետեւ այդ պատերազմը բացարձակ սպառումը , փճացումը պիտի ըլլար երկու ազգին ալ համար , ու ո՛չ մէկ ազգ պիտի յանձնատնէ այդ յիմարական զոհողութիւնը : Վաճառականութիւնը , որ Գիտութեան բացած ճամբուն մէջ եւ անոր շնորհիւ , գտաւ իր արդի տարածումը , շարունակեց ու ընդլայնեց Գիտութեան սկսած բարոյական պայքարը ընդդէմ Պատերազմին . Վաճառականութիւնը , որ երկրագնդին բոլոր ազգերը ամենէն սերտ հաղորդակցութեան մէջ կը դնէ , այսօր գլխաւոր լծակը դարձած է քաղաքակիրթութեան . մեծ ազգերուն միջեւ զանուած վէճերը յառաջ կուգան այն եւանդէն զոր իւրաքանչիւրը կը ցուցնէ իր երկրին արտադրութեանց համար կարելի եղածին չափ ընդարձակ վաճառանոցներ

ունենալու . մեծ ազգերը կ'ուզեն իւրացնել բոլոր տրամադրելի երկիրները որոնք նախնական կիսավայրենի կազմակերպութեան մը մէջ մնացած են , ինչպէս Ափրիկէն , Սաղաղականի կղզիները , եւ կազմալուծուած ու պիւրենք կառավարելու անկարող երկիրները ինչպէս Չինաստան , Տաճկաստան , վաղը , այդ բոլորը Վաճառականութեան դաշտը պիտի դառնայ եւրոպամերիկեան ազգերուն . քաղաքակիրթութեան համաշխարհային տարածումն է որ կը սկսի ատով , ու ընդհանուր մարդկութեան ներդաշնակումը՝ մէկ քանի քաղաքակիրթական մեծ վարիչ ուժերու ներքեւ , որոնք են անգլո-սաքսոն , ուս , գերման , լատին ուժերը : Վէճը բաժանման չափին ու համեմատութեանց վրայ կը կայանայ , եւ Վաճառականութիւնը որ իր բնութեամբ խաղաղեցուցիչ տարր մըն է գերազանցապէս եւ խաղաղութեամբ միայն կրնայ ապրել , խաղաղութեան մէջ միայն զարգանալ , չի կրնար թոյլ տալ որ իր շահերը պատերազմով լուծուին , որովհետեւ Վաճառականութեան տարածումը նպատակ ունեցող պատերազմ մը երկու ազգերու միջեւ , Վաճառականութեան փճացումը կրնայ յառաջ բերել . եւ Վաճառականութիւնը որ այսօր գլխաւորապէս կրնայ գործ ունէութեան հիմնաքարն է , պիտի արգիլէ որ այդ աղետաւոր ձեռնարկը իրականանայ : Կեանքի պայքարը պիտի շարունակուի . բայց զէնքերը պիտի փոխուին . թընդանօթին , հրացանին , պայթուցիկներուն՝ բարոյական զէնքեր պիտի յաջորդեն . մրցումին մէջ պիտի յաջողին անոնք որ աւելի հարուստ են գիտութեամբ , աւելի ճարտար , աւելի հնարամիտ , աւելի աշխատող , աւելի շարժուն . Անգլիան , որ այն երկիրն է որուն լեղուն , ազդեցութիւնը եւ վաճառականութիւնը երկրագնդիս վրայ ամենէն աւելի տարածուած են , այդ բարոյական զէնքերուն կը պարտի գլխաւորաբար իր դիրքը . Անգլիա սպացուցուց որ երկաթուղիներն ու վաճառականական նաւերը շատ աւելի բեղուն միջոցներ են ազգի մը տարածման ու մեծացման համար քան պարզապէս զէնքով նուաճումը : Այսուհետեւ պատերազմի գործիքները միայն պիտի գործածուին , եւ այն ալ մինչեւ որոշ ժամանակ մը , քաղաքակիրթական մեծ մարմիններուն կցելու համար նախնական երկիրները եւ փոսած երկիրները , որպէսզի փակ ճամբայ չմնայ , անապահով ու վայրենի անկիւն մը չմնայ մարդկային գոր-

ծուռնեութեան առջեւ . այսպէս . անդլիա-  
կան բանակը Ափրիկէի կիսավայրենիները  
ստիպեց , զէնքով , եւրոպական մտքին  
առջեւ խոնարհելու , եւ կարելի դարձուցոր  
Աղեքսանդրիայէն մինչեւ Բարեյուսոյ Գլուխ  
անդլիական երկաթուղին առանց խոչընդոտի  
յտնաջանայ . այսպէս, Ամերիկա , զէնքով , ա-  
զատեց Քուպան սպանիական բարբարոսու-  
թենէն . այսպէս, Եւրոպա , զէնքով , փրկեց Կը-  
րէտէն Թուրքին մահացուցիչ ազդեցութենէն .  
այդ բոլոր երկիրները հիմա կեանքի , շարժ-  
ման , քաղաքակրթութեան նոր բոյնիւր պիտի  
դառնան : Եւ ահա Չինաստանը որ, նոյն իսկ առանց  
զէնքի զիմուելու , անճատուր կ'ըլլայ եւրո-  
պական քաղաքակրթութեան ծաւալմանը .  
Ռուսիա իր անգրիտիպերիականով կը յառաջա-  
նայ զէպ ի անոր սիրար , եւ վաղը Չինաստա-  
նին վարիչ ուժը պիտի դառնայ . Անգլիա ,  
Ֆրանսա , Գերմանիա իրենց ազդեցութեան  
ուրոյն շրջանակն ունին այնտեղ , եւ խնդիրը  
այդ մրցակիցներուն միջեւ համաձայնու-  
թեան մը անհրաժեշտութիւնն է :

Ի՞նչպէս պիտի յառաջ գայ համաձայնութիւ-  
նը : Յոռետեսները կը մոռնան թէ առանց եւ-  
րոպական խոչոր պատերազմի մը անհնար է  
այդ մեծ բաժանմանց որոշումը :

Բայց արդէն կը տեսնենք որ այս վերջին  
օրերուն մէջ ազգերը ամէն ջանք կը թափեն  
խնդիրները առանց պատերազմի լուծելու : Հա-  
մաժողովէն առաջ իսկ , օրինակները տրուե-  
ցան բանակցութեամբ խնդիրները լուծելու .  
խորշելով պատերազմի հրէշաւոր միջոցին դի-  
մելէ . Ֆրանսա տուաւ առաջին օրինակը , Պ .  
Տէլքասէ արգիլեց որ տեղի ունենայ պատե-  
րազմը որ վայրկեան մը անխուսափելի դար-  
ձած էր Անգլիոյ ու Ֆրանսայի միջեւ . բանակ-  
ցութիւններով երկու երկիրները լուծեցին ի-  
րենց վէճը . Անգլիան ունեցաւ իր երկա-  
թուղին Աղեքսանդրիայէն մինչեւ Քաբ , ու Ֆը-  
րանսան ունեցաւ Թուրուզէն ու Ալճէրիայէն  
մինչեւ Փրանսական Քոնկոն միաձոյլ ահագին  
պետութիւն մը :

Վերջին պահուն , Սամոայի խնդրոյն մէջ ,  
Գերմանացիք եւ Ամերիկացիք կը նախընտրեն  
համաձայնութեան մը յանգիլ քան պատերազ-  
մի զիմել : Եւ նոյն իսկ ծայրագոյն Արեւելքի  
մէջ , երկու մեծագոյն մրցակիցները , Անգ-  
լիա եւ Ռուսիա , կը թուին համաձայնութեան  
մը հասնիլ . յոռետեսները կը կարծեն թէ ասի  
զազար մըն է սպասելու համար որ վաղը Ռու-

սիա , իր երկաթուղին աւարտելով , Անգլիոյ  
դէմ ցցուի եւ զայն վանել սպառնայ Չինաս-  
տանէն ու նոյն իսկ Հնդկաստանէն Ո՞վ կրնայ  
պնդել թէ յոռետեսներուն այդ գուշակութիւնը  
անխուսափելի իրողութիւն մըն է . Անգլիոյ  
եւ Ռուսիոյ միջեւ այդպիսի բաղխում մը օգե-  
րեւութային աղէտքի մը ծանրութիւնը կրնայ  
ուսննալ երկու ազգերուն ու երկրագունդիս  
համար . ո՞վ կրնայ սպահովցնել թէ վաղը  
պիտի գտնուին դիւանագէտներ այնքան ճիւղ-  
աշին անխղճահարութեամբ որ յանձն առնեն  
այդ վիթխարի պատասխանատուութիւնը .  
դիւանագէտները մարդկութեան ամբողջութե-  
նէն անջատ ու տարբեր էակներ չեն . մարդկա-  
յին արիւնի հեղման դէմ արդի մարդկութեան  
զգուանքը անոնց ալ ուղեղին մէջ փոխանցուիլ  
սկսած է , եւ վաղը այլեւս անհնարին պիտի  
դառնայ որ դիւանագէտ մը իր հաշիւներուն  
համար հազարաւոր անհատներու ջնջումը հրա-  
մայէ : Պատերազմը մօտ է իր մահուանը . խըն-  
դիրը կը մնայ գիտնալ թէ ի՞նչպէս պիտի կա-  
տարուի այդ մահը : Կա՛մ ժողովքներով ու դաշ-  
նակցութիւններով պիտի կատարուի ան , կա՛մ  
նոյն իսկ պատերազմով մը . եթէ , զժբազդ  
պատահականութեամբ մը , գլուխները բոնկին  
եւ Անգլիոյ ու Ռուսիոյ միջեւ բաղխումը տե-  
ղի ունենայ , այդ զէպքը այնպիսի պակու-  
ցանողական համեմատութիւններ պիտի առնէ  
որ ապահովապէս վերջին պատերազմը պիտի ըլլայ  
եւ Պատերազմին վախճանը :

Մարդկային գիտակից խումբերէն ունչա-  
նակաւոր անհատականութիւններէն կախուած է  
որ այդ աղէտքը չպատահի : Պէտք է որ ժո-  
ղովուրդները իրենց ատելութիւնը յայտ-  
նեն , առաւել ուժգին քան երբեք , Պատերազ-  
մին դէմ : Պէտք է որ Գիտութիւնը եւ Վաճա-  
ռականութիւնը Դիւանագիտութեան հանդէպ  
կանգնին խրոխտ ու անվերապահ եւ արգիլեն  
Չարիքը :

Լա Հէի Համաժողովը մեծ առիթ մը պիտի  
ըլլայ : Պէտք է որ մարդկութիւնը հոն իր  
բաղձանքը լսելի ընէ , վարողներուն հաշիւնե-  
րուն հանդէպ :

Տրուած ըլլալով արդի ձգտուած կացու-  
թիւնը , մէկ քանի հրատապ խնդիրներու  
գոյութիւնը , եւրոպական ազգերու կասկա-  
ծանքներն ու վախերը , անհաւանական է որ  
սպառազինմանց թեթեւացման եւ զէնքերու  
տեսակներուն պարտաւորիչ որոշման առաջարկը  
ընդունուի : Բայց իրաւարարութեան միջազ-

գային դրութիւն մը անկարելի չէ որ իրականացում գտնէ : Մարդկութիւնը ցանկալու է որ այդ խնդիրը լուծուի Համաժողովին մէջ : Իրաւարարութեան միջազգային մարմնոյ մը հարտատու մը Պատերազմին բարձումը կը նշանակէ : Եւ այդ ուզողութեամբ ինչ քայլ ալ որ կարենայ առնել Լա Հէի Համաժողովը , մարդկութեան համար բարիք մը պիտի ըլլայ :

Բոլոր ժողովուրդներուն մէջ որ իրենց իղձը պիտի հասցնեն այդ Համաժողովին , մենք Հայերս պարտինք մեր ձայնը լսելի ընել , խորխառ ու ազնիւ չեշտով մը : Իմաստակ ու ստախոս յոխորտանքները , կործանումի ու խաղաղութեան սպառնալիքները , մեր ցեղին պատմական դերին դէմ հայհոյանքներ պիտի ըլլային : Ուրիշ բան չունինք ըսելու բայց եթէ մենք հինէն ի վեր եղած ենք ցեղ մը խաղաղութեան , ցեղ մը քաղաքակրթութեան , ցեղ մը կեանքի եւ արտադրութեան , թէ մենք եւրոպական մտքին յառաջապահ գունդն ենք Փոքր-Ասիոյ մէջ , եթէ մեր իրաւունքն ու եւրոպայի պարտքն է , տիեզերական շահերուն յաղթանակին համար , որ մեր վրայ ծանրացող անբնական , անճշմարտաման , հակամարդկային բարբարոսութիւնը ջնջուի , որպէսզի մենք կարողանանք կատարել , խաղաղութեան եւ ազատութեան մէջ , քաղաքակրթողի գործը որ մեր գործն է :

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ



ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՈՒԵՆԱՐԸ

— 0 —

Եթէ Հապէշներուն զինեալ շարժումները ճամբուն գծուածքը չկտրեն , Բարեյուսոյ Գլուխէն մինչեւ Գահիրէ բրիտանական երկաթուղին պիտի չուշանայ բանելու : Հիւսիսէն մինչեւ հարաւ գիտութեան այդ ուժին անցնելովը , բիրտ Ափրիկէն պիտի քաղաքակրթութուի , քիչ տարիէն պիտի ծածկուի արտերով եւ գործարաններով : Նոր դիւրակեցութիւն մը պիտի ստրածուի մարդկային ազգին վրայ որ , հողին արտադրութեանց բազմապատկումովը , աւելի աժան պիտի սնանի ,

հագուի ու զուարճանայ : Գիչ ատենէն միեւնոյն բարերար գործը պիտի կատարէ Ասիոյ մէջ անդրսիպերիական երկաթուղին , որ , մեքենական արագութեան միակ թափով մը , պիտի կապէ Բորթ-Արթուր քաղաքն ու Մանչուրիան՝ Մոսկուա , Բեթերսպուրկ , Պերլին , Բարիզ , Պոէսթ քաղաքներուն : Հին ցամաքերկիրը իր ցեղերուն միութիւնը գտած պիտի ըլլայ իրենց բարօրութիւնը ստեղծելու հաւաքական գործին մէջ : Պոէսթ եւ Վլատիվոսթոք երկու ծայրերը պիտի ըլլան բազմագոյն ժապաւէնին որ պիտի խորհրդապատկերէ ազգային զինանշանները ժողովուրդներուն ուրոնց մէջ զարգացան միտերքական Քաղզէաստանին մայր կրօնքները , յետոյ յոյն-լատին գաղափարը որ բովանդակ աշխարհս իր արդարութեանը օրէնքներուն եւ իր արուեստներուն իտէալին հետեւող դարձուց :

Ահաւասիկ ամբողջ փառքը տասնեւիններորդ դարուն : Չկարծենք թէ ան կը պատկանի պատերազմներու յաջողութեանց կամ մարդկային մեծ կոտորածներու փողահնչմանց : Գըլուխ չձոնք անոնց որ ազգերու մէջ ատելութիւն կը քարոզեն , որ կը ջանան հակառակորդութեանց բարբարոսութիւնը պահպանել , որ մեզ կը կուրացնեն հին դրօշակներուն աւրիւնտ գոյները խաղցնելով :

Ընդհուպ , անդրսիպերիական վակոնին միեւնոյն բազրոնակին վրայ , պիտի եզբայրանան քրիստոնեան եւ պուտտայականը , հրէան եւ մահմետականը , ամենքն ալ նմանօրինակ հեռագրով մը մտադրաղ՝ որ Եանկ-Տէի Խաղանին մէջ հանքային արժէթղթերուն բարձրացումը պիտի ծանուցանէ իրենց : Երկրագործական սենտիքաներու մետաղագործական գաշնակցութեանց գլխազրական (commanditaire) զբամատուները հիմնելու համար , Պրահմա , Մովսէս , Յիսուս եւ Մուհամմէտ պիտի միացնեն իրենց զբամազուխ-ստակը : Ապահովագրութեան եւ գործակցութեան շնորհիւ ամրապնդուած , զբամազուխ-աշխատութեան խմբակները , արտադրութեան գրքերուն ցուցակին վրայ հաւասար զօրութեամբ մը պիտի ներկայանան : Ահա կուգան Եղբայրները : Եղէոկլ եւ Պոլինիկ արդէն կը գերկընդխառնուին : Չփայտինք , զիւրին սկեպտութեամբը չարերուն եւ վատերուն : Վերջին երկու շարժումն մէջ , Յունաստան , Ամերիկա եւ այլուր , մեծ հարուստներ մեղան : Փոխանակ հարստութեանց ամբողջութիւնը ժա-

ոանգորդներուն փոխանցելու , կտակները ա-  
նոնց ստուարագոյն մասը յատկացուցին հի-  
ւանդանոցներու , համալսարաններու , բա-  
րեգործական ընկերութեանց : Հոգիներու կեր-  
պարանափոխութեան ակներեւ նշան մը չէ՞ այդ :  
Մեռնելու մօտ , փարթամները կը նշմարեն  
թէ եսասիրութիւնը այլասիրութիւնէն վար  
է , թէ պարտին մարդկային խմբակներուն  
դարձընել արգասիքը իրենց անձնական ջանքին  
որ յաղթանակեց նոյն այդ խմբակներուն գի-  
տակից կամ անգիտակից գործակցութեամբը :  
Եւ աս , այն պահուն ուր ընկերվարական ա-  
ռաքեալները ամենէն աւելի խստութեամբ հա-  
րատութեան վրայ կը յարձակին : Այդ կը-  
տակներէն ոչ մէկը ո՛ր կամ հեռ չի յայտնե-  
ր «գրամագլխու թշնամիներուն» : Ընդհակա-  
ռակն : Օրհասականները իրենց հուսկ կամքովը  
կը խոստովանին թէ երկայն ատենէ ի վեր  
նոր ճշմարտութեան հետեւող սկսած էին ըլ-  
լալ : Իրենց վերջին մտածումն ընտանիքը  
մարդկութեան կը զոհէ :

Արդարեւ , ատելութիւնը հնոտի կը դառ-  
նայ : Տասնվեցերորդ դարուն վերջերը , ո՞ր  
նիզակակիցը իր ժառանգութիւնը բողոքական  
եկեղեցիին կտակեց : Եւ ո՞վ պիտի կրնայ  
պնդել թէ այս դարուն մէջ որ երեք յեղա-  
փոխութիւն ունեցաւ , ընկերական պատե-  
րազմը այնքան ջերմեանով չէ որքան երբեմնի  
կրօնական պատերազմները :

Հայրենիքի հպարտութիւնը մէկդի գնելով ,  
մենք դեռ երէկ Նեղոսի հովիտը ձգեցինք անգ-  
լիական գործունէութեան : Տկարութիւն ,  
թերեւս : Թերեւս , խոհականութիւն : Եթէ  
խորհրդարանն ու երկիրը յանձն առին տեղի  
տալ , պէտք չէ՞ խոստովանել թէ Ֆրանսա-  
կան հոգին ատով ներքնապէս յարգանք մը կը  
մատուցանէր բրիտանական կորովին : Երկու  
դարու մէջ , ձոն Պըլ՝ Հնդկաստանի , Ամերի-  
կայի , Աւստրալիոյ եւ Բարեյուսոյ Գլխուն  
արուեստագործական եւ իմացական կեանքերը  
ստեղծեց : Այդ միջոցին կատինները չէին յա-  
ջողի բարքերու բարբարոսութիւնը մեզմեկ  
Փիլիպպեանց մէջ եւ ի Քուպա : Բաղգատե-  
ցէք Հարաւային Ամերիկան , ուր , չորս  
հարիւր տարիէ ի վեր , սպանիական ուժը կը  
ձգնի , Հիւսիսային Ամերիկային հետ զոր բը-  
նականորեցին Վիքինկները , Լուիզիանայի մէջ  
Ֆրանսական ապարդիւն փորձերէն յետոյ : Ալ-  
ճերիան , մեր ձեռքը , դեռ երկիր մըն է ա-  
ռանց վերջնական բարգաւաճման , դիւահար-

ներու միամիտ ու աղմկայոյզ զայրոյթներուն  
մատնուած : Գիտենք որ Սեսիլ Բոտ եւ Քիչ-  
ներ սիրտարը շուտով պիտի կառուցանեն եր-  
կաթուղին որ Ափրիկէն պիտի քաղաքակրթէ ,  
մինչդեռ մենք ուրիշ բան պիտի չընենք այդ  
նոյն երկրին մէջ բայց եթէ գործ մը թուլու-  
թեան : Պելճիքական Գոնկոն երկաթուղիով  
մը կ'աղօտուի , մինչդեռ մեր Ֆրանսական  
Գոնկոն , որ աւելի հնուց գտնուած է , դեռ  
չունի երկաթուղի : Ամէն տեղ մեր ստորա-  
գասութիւնը կը հաստատուի , մեզի ամօթ  
բերելով : Տղայականօրէն , մեր դրամագլուխ-  
ները կ'երթան Ոսկիի Հանքերուն , կամ կը  
չատանան փոքրիկ ապահով շահով մը որ հա-  
մեստ հասառուին միջոցը կը հայթայթէ առ-  
բողջ կեանքի ընթացքին մէջ կապելայի նըս-  
տարանի մը վրայ գիրնալու , ո եւ է մտա-  
ծումէ հետու , մանկ խաղալով : Գործել ու  
մտածելը մեզ կը սարսափեցնեն , եւ ահա կը  
խոստովանինք պաշտօնապէս , մենք յաւիտե-  
նական թուղթ խաղացողներս , մեր անկա-  
րողութիւնը :

Պ . Լըռուա Պոլիէօ կը ջանայ դրամը ձեռք  
ձգել՝ ափրիկեան անապատին մէջ արձակելու  
համար : զէպ ի Չատ գետը , երկաթեղէն ար-  
ջառը որ սուտանական վաճառականութիւնը  
պիտի բերէր Չատ լճէն մինչեւ մեր ալճերեան  
ափունքները : Չի յաջողիր :

Որովհետեւ մեզի կը պակսի կրօնք մը ,  
այլեւս ճշմարիտը , Բանգիտութեան կրօնքը :  
Կը յամառինք հնոտի զգայնականներ մնալ ,  
այնպիսի շրջանի մը մէջ զոր պատմութիւնը  
զաղափարին համար զորչմած է արդէն : Տակաւին  
սքանչելի կը գանենք զինեալ ձեռքով գողութիւ-  
նը իբր աշխարհակալութեան եղանակ : Չենք  
ուզեր զղալ թէ մաթեմատիկոս մը , զրահաւորի  
մետաղեայ աշտարակիկին մէջ լծակներ մղելով ,  
մէկ շարժումով փառքի պոստախոսներէն հա-  
զարներ պիտի ջնջէ : Սանթիակոյի մէջ Ամե-  
րիկացիք ատոր ապացոյցը առին Սերվե-  
րա ծովակալին մանկական դիւցազնութեանը  
հանդէպ :

Տեսէք սա կարճատես ու տխրոյ պղտիկ  
մարդը իր հաստ ակնոցներուն ետին կծկուած :  
Կը դիտէ յառաջանալը քաջարի հեծելախումբի  
մը զոր կը վարեն աւանդավիպական բարասե-  
ներուն թոռները : Նիզակազրօշները հովուն  
կը սարստան : Չիբրը կը սուրան : Փողերը  
կը թնդան : Հեծելագունդներուն առջի կարգը  
կը նշմարէ Աքելլէսը , էասը եւ Ռոլանը :

Միտքը կը բերէ իր խոնարհ հաշուակալ հայրը որ փոքրիկ նպարավաճառանոցի մը «պարտի ու պահանջէ»ին վրայ կը ծերանար որպէս զի իր զուակը կարենայ դպրոցին մէջ արձեպրա սովորիլ : Կը ժպտի : Կը մեղքնայ այդ հերոսները որոնք հնչուն խրախուսանքներ կ'ազդակեն : Վայրկեանը եկած է : Կը կոխէ մէկ կոճակը այն անագին մեքենային որ զէպ ի այդ հոյակապ այրուծին ուղղուած է : Կրակ կը փայլատակէ : Որոտում կը գոռայ : Ու մինչեւ հորիզոնը ուրիշ բան չի մնար բայց եթէ յոշոտուած գիակներու շեղջակոյտեր : Ռոպիտիքը քանդումի գործը կատարեց : Մարդուկը ակնոցը կը սրբէ : Արքիմեդէս յաղթեց Ռուսներն , առանց ո եւ է ճիգ թափելու , որովհետեւ

$$x + x^2 + \frac{a \times V + V' + V''}{T \times 725,4} = U \text{ ահ ,}$$

Վաղուան գործելու եղանակն է այդ , որուն դէմ ոչինչ պիտի կրնան ընել տ'Ասաս ասպետներն ու Լաթուռ տ'Օվէններն , ո'վ պարոն Տեոուլէտ :

Այսօրուան ազնուականութիւնը , գիտնալը , մտածելն է , եւ ոչ թէ , ինչպէս երբեմն , ինքզինքը վտանգի ենթարկելով՝ սպաննելը : Անգլիական կամ ամերիկեան , սաքսոն ցեղերը բովանդակ աշխարհիս պիտի տիրանան , որովհետեւ երկաթուղիները կը բազմապատկեն մեր մոլորակին վրայ : Ծամբորդելով , ցեղերը իրար կը թափանցեն , իրար կը գնահատեն , իրարու կը ներեն , եւ կ'եղբայրանան , մէկտեղ կ'աշխատին : Այդ երկաթէ անասունը , որ մուխ կը փչէ ու կրակ կը միզէ իր ճամբու գծերուն երկայնքը , մարդկային մեծութեան համար աւելի արդիւնաւոր պիտի ըլլայ քան բոլոր սխրագործութիւնները կիսաստուածներուն :

Այս ձմեռ , բարիզեան սալոններուն մէջ , նորաձեւութիւն մը զարձաւ ծափահարել կենսաւորուած լուսանկարները Պիոկրաֆին զոր կը ներկայացնէ Նորմանտէն չափագէտը : Այդ պատկերներուն մէջ ամենէն զարմացուցիչը Երուսաղէմի կայարանին պատկերն էր , ճամբայ ելլող կառախումբին յետսակողմէն առնուած՝ Երուսաղէմէն մեկնող ճամբորդի մը ձեռքով : Արարական տիպարներ են , գլուխներն ֆէս , գրեթէ եւրոպական ձեւով հագուած , եւ որոնք վակոններուն անցնելը կը դիտեն՝ արեւուն տապէն նեղուած ծամածոթութիւններով : Այդ մարդիկը կը ժպտին օտարական

ներու մեկնումին : Լուսանկարչական գործիքը նշանակած է այդ թուխ դէմքերուն բարեկամ արտայայտութիւնները : Իրօք համակրութիւն կայ այդ արեւելցիներուն աչքին մէջ այդ մեծ սրագոյ ջիմառին համար որ կը փախչի շշելով : Կրեց երազներուն ո՞ր կործառիւծը . Հագար ու մեկ գիշերներու ո՞ր վիշապը ատոնց նախահայրերուն կրցաւ երբեք նախագուշակել տալ այս զօրութիւնն արարածի մը որ գետնածուխ կ'ուտէ , կ'այրէ ու կը մարսէ , աբրահի տեղ շոգի կ'արտագրէ , որպէս զի այդ շոգին զինքը կենսաւորէ ու դաշտերն ի վարարձակէ , լեռը մազլլցի , հովիտը սողոսկի , զէպ ի կոհակն ընթանայ , հոն ձեւափոխուի՝ ծովերը կտրելու համար , եւ դառնայ վիթխարի դրօշաղարդ ձուկ մը , որուն թնդանոթներուն ձայնը փոթորկին նման կը գոռայ :

Այս հրէշին երեւակայումը , Հիճրէթին ատենը , պիտի զարհուրեցնէր վաչկատունը որ կարենար զայն յղանալ աւաղամորիկէն պաշարուած վրանին մթութեանը մէջ : Հիմա , իւրականացումը հաճ ժպտը միայն կը գըրգըռէ թողներուն : Բարի ճիւղին բերած բոլոր լաւութիւններուն կը խորհին : Ուժին եւ շարժումին գիւթախաղովը կը զբօսնուն : Կը խնդան Եւրոպացիներուն որ զայն ստեղծեցին : Եւ անա ազգական կը դառնան Արեւմուտքի մարդոց որոնց դէմ ա'յնքան զարեր կուտեցան :

Ո՞ր պատերազմները , ո՞ր ձեռնարկները , փիլիսոփայութեանց կամ կրօնքներու ո՞ր իմաստութիւնները այսպիսի հրաշք մը կրցան իրագործել : Բաւեց որ պողպատէ վաղորդ վեց անիւներուն զուգեակին վրայ չմշկէր Եւրոպայի դաշտերուն մէջէն , Ասիոյ ափունքներուն մօտ , եւ շոգի փչէր մինչեւ մինարէններուն կատարը , որպէս զի մուէզզինը իր ատելութեան սրբութիւնը մեղմացնէր : Որովհետեւ , Ռոնի եղբայրներուն գեղեցիկ մտածմանը համեմատ , մարդը աստուած զարձաւ Լոքոմոթիվը եւ Տինամօն ստեղծելով , երկու գործարանաւորեալ էակներ որոնց կամաւոր ուղեղն է մեքենավարը : Եւ այդ աստուածութիւնը ճանչնալով , մարդը պիտի շահի ցեղերու փոխադարձ սէրը , կենդանացուցիչ , արգաւանդ խաղաղութիւնը , լաւագոյնը ընկերական վարձատրութեանց :

Մեր Եւրոպայէն ոմանք սիլիժանը կը կարօտանան , կը գանգատին թէ դաշտանկարը չափազանց արագ կ'անցնի վակոնին պատուհանէն : Իրենց պանդաղ միտքը կը սիրէր ցըն-

ցումներն ու փոշին , եւ մրափն ալ՝ կառքին  
անկիւնը : Կը գանգատին թէ ցեղերը կը սկը-  
սին շփոթուիլ , լեզուները կը խառնուին ,  
կը մերժեն անգլիական բառերը որ մեր ֆռազ-  
ներուն մէջ կը ներանկուին , բիֆթները որ մեր  
տանտիկիներուն քողերէն քանդուին , տեղը կը  
բռնեն , գերման արտագրութիւնները որոնք  
իրենց աժանութեամբը աշխատաւորին նիւար  
քսակը կը հրապուրեն , կարօտը կը քաշեն  
ատելութեան , բաժանման , պատերազմնե-  
րուն ու փողերուն : Դաշնակցութիւններ կը  
կազմեն անոնց հետքերը պահպանելու համար :  
Մայթին ապուշները եւ գինետան փառասէր-  
ները կ'ոգեւորեն Յիշատակին անունովը : Իւ-  
րենց նայելով , ամէն բան կորսուած է եթէ  
չգիտազրկենք եղբայրութեան համաձայնման :  
Ատելութիւն պէտք է իրենց եւ սպանութիւն ,  
ու սարուկ կիներ որոնց արգելուած ըլլայ  
մտածել եւ որոնք սիրոյ խաղալիքներ ըլլան  
լոկ , մինչեւ որ պառուելով էրիկ-մարդ տի-  
րոջ ձեռքը ողբալի գերիներ դառնան :

Պ . Սիւլլի Բոնիտոմ վերջերս այս նիւթին  
վրայ յօդուած մը գրեց , որ աղմուկ յարոյց :  
Ինքզինքը անկարող կը զգար ընդունելու թէ  
կիւնը արժանապատուութեամբ հաւասար է մար-  
դուն , եւ թէ ան կրնայ զերծանիլ սիրոյ եւ  
մայրութեան շրջանակէն ուր բարբարոսները  
զանի սահմանափակեցին : Իրեն համեմատ շատ  
արագ է արգի կեանքը : Խոչընդոտներուն  
շուքին տակ պակելու տեղ՝ անոնց վրայէն  
անցնելու անյադ եռանդը , իրեն կը թուի  
պատրոզական սովորութիւն մը որ հաստա-  
տուելու վրայ է : Անշուշտ նոյնչափ անա-  
խորժ է իրեն համար տեսնել որ Յանքիներուն  
պոռոտախոտութիւնները օրինակ կը բերենք  
եւ ոչ թէ մեր կառքոններուն , բիւժոնթական  
տնտեսագիտութիւնը եւ ոչ թէ մեր Թուռէնինը  
կամ Բիքառտիայինը , Անգլո-Սաքսոններուն  
վարպետորդի գործօնութիւնը եւ ոչ մերձին Նոռ-  
մաններուն որոնք Երկու-Սիկիլիաներուն  
տիրեցին Ռոպէտ Կիսքառի ձեռքով , գերման  
յամաութիւնը բարդաւածման համար եւ ոչ  
թէ Ֆլաման կամ լոռէն հաստատամտութիւնը :  
Եւ իրօք , մեր նայուածքը հետզհետէ աւելի  
հեռուն կը տարածուի : Մեր տեսութիւնը կը  
բարւոքուի : Պատուհանները կը բանանք , եւ  
միջնորմները կը փլցնենք : Օտարականը ,  
թշնամին , կը դառնայ զրացին , եւ պատե-  
րազմը պիտի ըլլայ վերջ ի վերջոյ իրաւա-  
բարութեան դատ մը պարզապէս : Կը զար-

մանանք որ թաղապետութիւնները չեն բարձ-  
րացներ կուրուի զո՞ն գացած հանքագործնե-  
րուն , կառախուժ մը փճացումէ եւ հարիւր  
ճամբորդ մահէ աղատող մեքենավարին , հազար  
կեսնք համաճարակէն փրկող բժշկին՝ այն  
փառքի մահարձանները որ ամէն տեղ կը կանգ-  
նին ի յիշատակ հայրենիքին համար մեռնող  
զինուորներու , քաղաքը պաշտպանող սպա-  
յին : Արգարութեան գործերը մեզի աւելի գե-  
ղեցիկ կը թուին քան թէ քանդումի գործերը :  
Նոր ոգի մըն է , որ իր հերոսութիւններն ,  
իր գեղեցկութիւններն , իր մեծութիւններն  
ունի : Եւ ասոնք վար չեն մնար երբեմնի մե-  
ծութիւններէն :

Տիլիմաններուն ցնցումները չկարօտ-  
նանք : Մոռնանք երէկուան կիւնը , տը-  
ղայամիտ , սիրունիկ , բարեձեւ , ստախօս  
ու խոհարարուէի , եւ ցանկանք վաղուան  
կիւնը , աննենգ բարեկամուէին , հմտու-  
թեամբ ու ազատութեամբ մեզի համա-  
նըման : Մեր ետախրութիւնը նախ պիտի  
տառապի երբ այլեւս զայն մեր հրամանին տակ  
չունենանք հլու եւ զողզողուն : Դիչ քիչ ,  
պիտի վարժուինք անոր ուժին հաւասարու-  
թեանը : Խաբուած տէրեր ըլլալու տեղ , պիտի  
ըլլանք ներողամիտ բարեկամներ որ կը հաս-  
կընան , կը չբռնազցնեն եւ կը խրախուսեն :

Երբ ատելութիւնը անհետանայ ընտանեկան  
յարկէն՝ կնոջ ամբողջական ազատագրու-  
թեամբը , շուտով պիտի անհետանայ ազգե-  
րուն մէջէն : Այն ատեն պիտի աւարտի գործը  
մեր արարածներուն, —Շոգի , Ելիքտրականու-  
թիւն , —որոնք կարողացան ցեղերը մերձեցնել  
եւ մարդկային ախորժակները եղբայրացնել :

Ղէնընկեցութեան Համաժողովը պիտի գու-  
մարուի Լա Ղէի մէջ , Չարին նախաձեռնու-  
թեանը պատասխանելու համար : Այսօրինակ  
յոյսերու լաւագոյնները պիտի բանաձեւուին  
այնտեղ : Կ'ուզէի որ հսկայական ցոյց մը  
ըլլար այդ Լա Ղէի գումարումը : Պէտք էր որ  
խաղաղասիրական նիզակակցութիւնները ,  
ժընէվի Խաչին նիզակակցութիւնը , ընկեր-  
վարական դաշնակցութիւնները , անիշխա-  
նական խմբակները , գիտական միջազգային  
ընկերութիւնները խուռնամբոյ բազմութեամբ  
մասնակցէին անոր . պէտք էր որ ամէն ինչ  
որ խաղաղութեան շնորհիւ կ'ալրի , գրգուէր  
այնտեղ երեւալու : Գիտութիւն , վաճա-  
ռականութիւն , արուեստագործութիւն , մար-  
դասիրութիւն , ընկերվարականութիւն , ան-

հատապաշտութիւն, կրօնքներ ու դաւանանքներ, ամենքն ալ պէտք էր որ իրենց ազանդներէն անդամներ պատգամաւոր զրկէին : Այն ատեն, հաշիւն ընելով, պիտի տեսնուէր թէ ո՛րքան քիչ բարեպաշտ կը մնայ ատելութեան եւ պատերազմի :

Պէտք էր որ կազմակերպուէին խաղաղասիրական անսահման ուխտաւորութիւններ այդ օրերուն համար, եւ աշխարհիս ամէն կողմէն կառախումբերը եղբայրութեան սիրահար ամբոխներ բերէին այդ քաղաքը ուր Սբինոզա տիեզերքը կը մտածէր՝ ակնոցի ապակիները

մաքրելով որոնք իր եղբայրներուն անսողութիւնը եւ աստուածային բնութիւնը ըմբռնելու անոնց եղանակը կը բարելաւէին : Պէտք էր որ բոլոր ազգերը միահաղոյն, իրենց ամենէն վեհանձն սրտերովը, բարախէին, այդ հուշանտական սիրուն քաղաքին մէջ ուր նախ ծնաւ մտքի ազատութիւնը, միջին դարու նեղ մտասեղմումէն յետոյ :

Մարդկութեան համար առիթ մը կայ հոս՝ պատմական մեծ ծափաղաղակ մը թնդացնելու :

Թարգմ. Փրանս. ԲՈՂ ԱՏԱՆ

Յ Ա Յ Գ Ե Ր Գ



Ջութակներու զրոհիկ ու ցաւագին  
 Հեծիւնին մէջէն,  
 Լալկան հոգին դաշնակին  
 Կը կողկողի արցունքներով որ չիթ առ չիթ կը հընչեն :  
 Հոծ մարդկութիւն մ'անորոշ, խառն, անծանօթ,  
 Չորսդիս կ'ոռնայ կը խընդայ .  
 Սըրճարանին քըրտնած օդին մէջ հեւքոտ,  
 Ուր կը վառին սուտ չըրթունքներն էգերուն  
 Արուններու նայուածքին տակ մոլորուն,  
 Յաճ հըրճուանքի խըթուկ մ'յամառ կը թընդայ .  
 Ու հոգիիս պաղ պարապին մէջ աղօտ  
 Ձանձրոյթ մը խուլ կը հորնտայ :

Դուբան, ամպոտած ապակիէն անդին, լոյսեր երերուն,  
 Կարմիր լոյսերն անցնող տենդոտ կառքերուն,  
 Ու խըռպոտ ձայնն անագին  
 Ջըլախտաւոր, քընատ, կատղած քաղաքին, —  
 Լոյսեր, շարժո՛ւմ ու ձայներ,  
 Կեանքին խոշոր գաւե՛շտը . . .  
 Թանձր անձկութիւն մը կը դիզուի կուրծքս ի վեր .  
 Ջութակին ողբն հիմա, անոր սուր շեշտը  
 Կը ցաւցընէ սիրտս որպէս թէ դայն խածնէր .  
 Աչքիս, տարտամ պատկերներով յեղյեղուկ,  
 Կ'ընդերեւան գունատ ձեւեր խուսափուկ,  
 Ձեւեր չըփոթ, գաղափարի ըստուերներ,  
 Ձեւեր անեղ, խորհրդաւոր, ծաղրելի . . .  
 Ու մեծ խոնջէնք մ'ուզեղիս մէջ զանդաղաբար կը հալի :

Ա՛խ , խեղճ հեշտանքը շինծու .  
 Դէմքե՛րը վատ ,  
 Կեղծ լոյսին տակ , մըթնուլորտին մէջ յայրատ .  
 Ա՛խ անխմատ այս յոգնութիւնն ապրելու . . .  
 Ու կը խընդան ատոնք , անգո՛ւլ կը խընդան  
 Ապուշութեամբ գինովցած . . .  
 Ու կը տեսնեմ կանգնիչն անա մեծարաց՝  
 Ցանկութեամբ վառ աչուըներուն վերեւ՝ նայուածքը Մահուան . . .  
 Շուրջըս երկայն կ'իյնայ ըստուեր մը պըղտոր .  
 Կը արժգունին յանկարծ լոյսերը բոլոր .  
 Դէմքերը , պաղ ու գեղին ,  
 Ուրուականներ կը թըւին .  
 Օգը գիակ կը հոտի . . .  
 Ու կը փախչիմ , առանձնութեան ու խաւարի անօթի :

ՏԵՐՎԻՇ



Մ Տ Ք Ի Ս Խ Ա Ռ Ն Ա Ր Ա Ն Է Ն

— 0 —

Պ Ա Մ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա .

. . . Զիս բեմ հանեցին , ու ըսին ինծի .  
 «Պատմէ՛ մեզի հոգիիդ բոլոր տառապանքը ,  
 օ՛ն , պատմէ՛ մեզի ինչ որ գիտես :»  
 Ու բանալով Հառաչողի յիշատակարանս ,  
 սկսայ կարգալ այսպէս .  
 «Սաղմոս , շարական , ալիւու , աղօթք , ար-  
 ցունք ու կոծ ստա՛կ մը չեն արժեր . . .» «Ոչ  
 միայն հացի . . .» ըսուեցաւ . ես կը հարցնեմ ,  
 «Հապա ինչո՞վ կ'ապրի մարդ .» սուրը՝ կո-  
 կորդիդ , բուռնցքը՝ բերնիդ , ծունկեր՝ փո-  
 րիդ կը ծանրանան . կը գալարիս , կը ճուստ  
 կը նուաղիս , մէկը չի գթար . ան , սառ-  
 նորէն իր զօրը կը մատուցանէ իր պաշտած  
 կուռքին , մնապա՛շտ , մոլեանդ , կատաղի :  
 «Մանուկները կը ճուան հեղձամղձուկ լա-  
 ցով , կոյսեր կը հեկեկան , կը թալկանան , կը  
 մարին : Հայրն իր զաւակներուն մորթուիլ  
 տեսաւ , մայրն իր աղջկան առեւանգումին  
 աչքովը հանդիսատես եղաւ , արցունքն աչքին  
 մէջ չորցաւ պապանձեցաւ , եւ զաւակը  
 տեսաւ իր ծնողքին անխնայ յոշոտուիլը , եւ  
 սակայն մէ՛կը չեղաւ որ ողորմէր , աշխա-  
 տէր , փրկէր :  
 «Սաղմը սրովայնէն հանեցին , հարսն իր  
 փեսային ծոցէն քաշեցին անջատեցին , մոր-

թեցին փեսան եւ արիւնովը լուացին հարսին  
 արցունքը . օրոցքին երախտան սուրին ծայրը  
 անցուցին , օգին մէջ բարձրացուցին :  
 «Ինչքերը , հարստութիւնը , դաշտին հացն  
 անգամ կողոպտեցին տարին , արտերու հունձ-  
 քերն այրեցին , սուները կրակի տուին ,  
 վառեցին մոխիր դարձուցին . ետքը առին ի-  
 րենց թմբուկները , սրինգները , գափերը ու  
 դեւերու հարսնիք մը սարքեցին :  
 «Աղին , շտեմարաններուն մէջ թաքչելով  
 ապրող քանի մը մարդոց սաղմոսը , շարա-  
 կանը , ալիւղէն , աղօթքը , արցունքն ու  
 կոծը օգո՛ւտ մը չունին :»  
 Աս ըսի ու ինկայ աթոռի մը վրայ , գլուխս  
 թեւերուս մէջ ծածկելով :  
 Ու հազար հոգի մեծաձայն միաձայն ու-  
 նացին . «Փառք քեզ , Աստուած , փա՛ռք  
 քեզ , յազազս ամենայնի՛ փառք քեզ , Տէ՛ր :»  
 Ես կուլայի յուսահատ կատաղութեամբ :

Բ .

Ո՛վ իմ սիրականս , արցունքը գեղադէտի  
 բերեղն է որուն մէջէն զուարճալի պատկեր-  
 ներ կը տեսնենք , երբ մանաւանդ քովերնիս  
 աստուածաբան նկարիչ մը կայ որ՝ խոշոր  
 գիրք մը ձեռքը՝ անդադար կը բացատրէ մեզի  
 գեղադէտի առերեւոյթ պատկերները :  
 Այսպէս ըսաւ քովիս մարդը բեմին վրայ .  
 Ես սկսայ մանուկի մը պէս խնդալ՝ արցունքն  
 աչքերուս մէջ . ու այդ մէկ ժամը երկու տա-  
 րիի չափ երկար էր : Նորէն յաջողեցան զիս  
 համոզել որ . . . համբերեմ :

Գ .

Եւ ըսին . «Եկէք աղօթենք :»  
 Ու սկսայ աղօթել այսպէս .  
 «Դուն Գեղ իբրեւ Ամենակարող ճանչցուցիր . եւ, որքան ատեն որ սիրելի ժողովուրդդ Գեղմէ հեռացաւ, Դուն ետեւէն գացիր : Սպառնալիք ըրիր, համոզեցիր, շոյեցիր եւ սրտին ուզածը կատարեցիր, ուզեցիր անոր հաճելի ըլլալ . եւ ան մինչդեռ ընդհակառակը թողուց լքեց Գեղ եւ օտար աստուածներու փարեցաւ, նախանձեցար, բարկացար, ու յետոյ նորէն անոր ետեւէն գացիր, երբ որ ան անգգայ, անատրբեր մնաց Գեղի նկատմամբ ու չսիրեց Գեղ :  
 Դուն անէծք ալ տուիր ժողովրդիդ, իրեն սիրելի բաները նզովեցիր եւ ջանացիր անոր սիրտը Գեղի դարձնել . շատ անգամ ալ կամքը կատարեցիր, երբ համոզուեցար թէ ժողովուրդդ չփացած տղայ մըն էր դարձած ալ, կամ սիրուհի մը որ ինքզինքը սուղ կը ծախէ . եւ Դուն անոր սիրահարը եղար ու ամէն բան գոհեցիր անոր համար :»

«Ես ալ այդ ամէնը ըրի իմ սիրականիս, եւ անոր հաճելի չեղայ : Դուն որ գիտես թէ ինչ դժուար է սիրել եւ չսիրուիլ, սիրականիս սիրտը ինձի դարձուր . վասն զի կ'ըսես թէ . «Ես կը քննեմ սրտերը ու երկկամունքներու խորհուրդը կը ճանչնամ . դետերը ցամաք կ'ընեմ, կ'ըսես՝ երկինքը աթոռդ կ'ընես, երկիրն ալ ոտքերուդ պատուանդան : Այո՛, գետերը կը ցամաքին Գու անունովդ, բայց իմ արցունքներս կը վազեն յաւիտենապէս . ըսէ՛, չը՞պիտի ուզես այդ ահագին կարողութիւնէդ մաս մը գործածել որպէս զի սիրականս ինձի դառնայ :

«Դուն կ'ուզես որ ամէն մարդ երջանիկ ըլլայ . արդ՛ ես անով երջանիկ պիտի ըլլամ, իսկ անիկայ ալ ինձմով թշուառ պիտի ըլլայ, երբ սիրէ զիս ու ինձի հաւատարիմ մնայ : Դարձուր, Տէ՛ր, սիրականիս սիրտը ինձի . թող իր չրթունքներովը համբուրէ զիս, ու իր շունչովը խնկաւէտէ դարտակ սենեակս . իր այտերը թող չրթներուս դնէ եւ աչքերը թող ինձի նային, կուրծքը կուրծքիս վրայ թող բարախէ եւ ձեռքերը թող սեղմին ձեռքերս, թող իր ծիծաղն ու արցունքը խառնէ ծիծաղիս ու արցունքիս : Բայց երբ ան ինձի դառնայ, երբե՛ք չպիտի պատահի որ լամես, վասն զի միակ իրեն համար կուլամ եւ աչքերս կը տխրին իր բացակայութեամբը :»

«Եւ ահագին ու անվերջ անհատնում կոխներ ունեցար ժողովրդիդ հետ, ու զարե՛ր տեւեց ձեր կուրք . մերթ իրար չհասկցաք . մերթ ալ, երբոր հասկցաք անհամակերպութիւն ծագեցաւ ձեր միջեւ : Եւ այդ կուխներուդ մէջ սիրուհիդ յաղթական ելաւ . այն-

պէս որ գահէդ վար իջեցուց Գեղ, իրեն հաւատար ըրաւ երկրի վրայ, հասկցնելու համար թէ որքան թշուառ է ինքը բռնաւորներու ձեռքը եւ պառկելու տեղ մը անգամ չունի . եւ Դուն մօտէն անձամբ, շոյափեցիր իր վէրքերը, Դուն ալ նոյն տառապանքները կրեցիր, ու օր եղաւ որ քաջածներուդ չգիմաւ նալով լացիր : Սո՛ւտ եմ : Ըսէ՛, հիմա չը՞պիտի ուզես որ երկրի թագաւորներն ալ իջնեն իրենց գահերէն վար եւ իրենց զրած լուծին ծանրութիւնը զգան իրենք ալ : Շարժէ՛, Տէ՛ր, եւ որոտա՛, փառքովդ թող երկիրը զրդիի, եւ ամբարտաւանները թող խոնարհին, վասն զի նոր ժողովուրդդ չարչարեցին, եւ սուրին բերանը տուին անմեղներն ու երեսմաները . ժամանակն է բսելու թէ սուրէն զարնուածներու թիւը քաղցէ մեռնողներու թիւէն աւելի է, եւ սովատանջները անհամար են :»

«Թող անոնց պալատներուն մէջ դատարկութիւն տիրէ, անոնց տանիքներուն վրայ բուերը երգեն, բուրձակները վայել հո՛ն թող սորվին, վայրի գազաններով թող լեցուին անոնց զբօսատեղիները եւ անոնց ցորենի արտերուն մէջ մարախները ճարակին, ծաղկազարդ պարտէզներն ու մրգաշատ այգիները փուշ ու տատասկ բերեն . բազմաբեր ծառերը ու անտառները թող գոսանան եւ մոխիր դառնան, վասն զի սիրականդ չարչարեցին :

«Որքան ալ որ սիրականդ—նոր Իսրայէլը— հեռանայ, թողու Գեղ եւ որքան որ Դուն սրտմտիս, սակայն եւ այսպէս նորէն դուք իրարու հարազատներ էք, մինչդեռ օտարն օտար է միշտ . արդեօք պիտի թողո՞ւս որ Հին Իսրայէլին վիճակին ենթարկուի :

Գ .

Ու տեսայ որ կարմիր ամպ մը կը գողգողար դիմացս, եւ անոր մէջէն Եհովային ձայնը ինձի կը հասնէր . եւ անոր խօսքերը ասոնք էին .

«Գնա՛ ըսէ սիրականիս, այսպէս կ'ըսէ տէր Եհովան . դուն ինձի չկանչեցիր ու քու աղօթքդ ինձի չհասաւ, դուն խստացուցիր քու սիրտդ եւ օտար աստուածներու փարեցար . մարդոց որդիներուն յուսացիր եւ փրկութեանդ յոյսը երկրի իշխաններուն վրայ դրիր . չխորհեցար որ ե՛ս Գու նախանձոտ սիրահարդ եմ ու երկայնամիտ Եհովան, որ Հին Իսրայէլը Եգիպտոսէն հանեցի եւ Յակոբին որդիները անցուցի ծովէն .

«Ես տեսայ մարդոց անիրաւութիւնները, ու թագաւորներու անօրէնութիւնը չափեցի . աւնոնք ուզեցին իրենց աթոռը իմինիս հաւատարեցնել ու զիս մոռցան : Հիմայ իրենց սուղքին չափովը հատուցում պիտի ընեմ իրենց . վասնզի հաճեցայ զոհիդ արիւնին, եւ ուղջակէզիդ ձենձերին հոտը ընդունքներուս հասաւ . . .

—«Յւ գունն , որդի՛ մարդոյ , լսէ՛ իմ խօսքերս , լոյսի մէջ պիտի բնակեցնեմ անոնք որ գիշերանց կը կարդան ինծի . ու սգաւորները պիտի մխիթարեմ . ու լքուածներու սիրականները իրենց պիտի դարձրնեմ . . . »

Ե .

Երկաթէ խուրճ մը դրին ուսիս ու ըսին . «Ասիկա տա՛ր . » ու ես հնազանդեցայ . բայց այնքան ապուշ էի որ չհարցուցի թէ ու՛ր տանելու էի :

Ու երկաթի այդ ծանր խուրճը ուսիս սկսայ քալել ու քալել : Երկար ու վտանգաւոր ճամբաներէ անցայ . կիրճերէ , լեռներէ ու անդունդներէ ալ անցայ :

Ճամբուն երկայնքն ի վար , երկայնքն ի վեր ճամբուն , պատահեցայ անդունդներու եւ վիհերու , օձեր ու բոցեր տեսայ :

Ու ճամբուս վրայ փոթորիկներ պայթեցան , փոթորիկներ անցան կեանքիս երկինքէն ու գլխուս ձիւն մաղուեցաւ :

Այսպէ՛ս ձերմկեցան մազերս :

Յոգնեցան սրունգներս ու աչքերուս ջլուները թուլացան . միայնակ ու վաստակարեկ՝ դարձուցի աչքերս շուրջանակի ու մարդ մը տեսայ :

Մտեցայ այդ մարդուն որ տեսայ . խոնջա՛ծ էր ինծի պէս , թէպէտ բեռնաւոր չէր ինծի պէս .

«Օգնէ՛ ինծի , ըսի , նուազ վաստակաւո՛րդ թափառական , օգնէ՛ ինծի : »

Մարդը բռնեց ձեռքէս ու տարաւ զիս սպանդարան մը :

«Կ՛աղաչեմ , ըսի , վար առէք ուսէս այս բեռը ծանր երկաթի , հանգչիլ կ՛ուզեմ եւ փորձ մը կատարել հոս : »

Ամենքն ալ ապուշ հնազանդութեամբ երկաթի խուրճը վար առին ուսէս , եւ ես կը հանգչէի . լայն շուռչ մը քաշեցի եւ ապա մօտենալով խնդրք մըն ալ ըրի :

Գլխաւորնին դանակն առած եկաւ ու խրնդրանքիս համաձայն ամէն տեսակ կենդանիներու բիբերը հանեց ու շարեց կարգաւ :

Աս քրաւ , եւ ես սկսայ մէկիկ մէկիկ աչքիս դնել ատոնք ու ատոնց մէջէն նայիլ երկաթէ խուրճին : »

Վարպետը՝ օսմամբ հարցուց . «Ի՞նչ կ՛ընես» , ըսի՝ «Յս գիտնական մըն եմ եւ փորձ կը կատարեմ : »

Աս ըսի ու նայեցայ ոչխարի բիբէն ու դառի բիբէն . այծի ու ուղտի բիբերէն . եղնիկի բիբէն ու եգի բիբէն . շունի ու գայլի բիբերէն . արծուի բիբէն ու առիւծի բիբէն . կատուի ու մուկի բիբերէն :

Ու ամէն անգամ որ դիտակս կը փոխէի , նոր տեսակ նոր օրինակ կը տեսնէի երկաթէ խուրճը :

Շարունակելով գործողութիւնը ապշած ամբոխին առջեւ , նայեցայ կոկորդիլոսի բիբէն ու աղուէսի բիբէն , բորենիի ու վագրի բիբերէն , թռչունի բիբէն ու օձի բիբէն , ձիու եւ իշու բիբերէն , հուսկ ուրեմն մարդո՛ւ բիբէն . . .

Մարդ ալ մորթած էին :

Աս ըրի ու ոտքի կանգնեցայ դալկահար , դողասարուռ . յիմար նայուածք մը դարձուցի շուրջանակի , եւ շարունակեցի ճամբաս :

Ճամբան հանդիպեցայ քանի մը մեծասիրտ ու մեծամիտ ու մեծագլուխ կավրոշներու :

Լուսնազարդ գիշերուան մը կէսը մօտ էր . պատանի Լուսինը ա՛յնքան ճամբայ քալած էր որ գնաց պառկելու : Ճրագը մարեց ու պառկեցաւ : Աստղերն սկսան ծաղկիլ : Մենք կախեցինք մեր լապտերը ծառի մը խիտ ոստերուն մէջ , ու ճամբայ ելանք . մարած էինք մեր լապտերն ալ :

Աս ըրինք եւ գետափն իջանք : Ու ըսի ընկերներուս . «Եկէք քարեր ժողուենք . » ու գետեզերքէն քարեր ժողուեցինք , — գետեզերքէն ուր կենդանի ջուրին անընդհատ բաղխումով քարեր կը շինուին ու քարեր կը մաշին — , ու մեր ժողված քարերով լեցուցինք մեր գըրպանները :

Աս ըրինք ու սկսանք քալիլ վերստին : Երբ հասանք անծայր դաշտին ծայրը՝ չէնք մը տեսանք :

Ու ըսի . «Եկէք քարեր նետենք սա շէնքին պատուհաններուն : »

Ու քարեր նետեցինք , կոտրեցինք ապակիները պատուհաններուն :

Ասիկա էր մեր բողոքը :

Ու քարերուն վրայ գրած էինք այսպէս . «Մորթուածներու յիշատակին : »

Քարերէն ոմանք պատուհաններէն ներս ինկան . . .

Միւս կողմէն ալ պատուհանի ապակիներ պատուհասի պէս գլխնուս կը թափէին . կը պատժուէինք . . . : Սրբապղծ ութի՛ւն էր ըրածնիս . . . :

Աս ըրինք , ու ընկերներս ըսին ինծի . «Մեզի անհասկանալի բաներ երզէ՛ ու մտիկ ընենք . երբ մը երզէ մեզի : »

Ու սկսայ երգել .

«Փոքրիկ էի ես , նիհար ու տկար . հայրս փայտի մը կոճղ առաւ ու շերտերու վերածեց : «Հայրս շերտ մը ընտրեց ատոնց մէջէն ու սկսաւ տաշել :

«Ամբողջ գիշեր մը աշխատեցաւ ու աղեղ մը շինեց . ու նետեր ալ շինեց . եւ ըսաւ , «Ա՛ռ ,

ո՛րդեակ , ու վաղը , դա՛շտը գնա վար-  
ժութեան :

«Երկչոտ էի ես եւ անուժ :

«Առի նետս ու աղեղնափայտը , ու կապարճն  
ալ առի . բայց անտասը չգացի . ու դաշտ ալ  
չեղայ . քաջուեցայ մեր մեծ , հնոճ տան մէկ  
անկիւնը , հոն անոր հետ խաղացի քիչ մը  
ատեն :

Ետքը գրիչ մը առի , ու թուղթեր ալ ա-  
ռի , եւ սկսայ գրել . ու գրածս ես չէի հաւ-  
կընար . սակայն կ'ուզէի գրել , գրել ,  
գրել : »

«Օր մըն ալ զբօսանք ընել ուզեցի , երբ ալ  
տակաւ ներսն ու ներսի կեանքը ինձի ձանձ-  
րալի թուեցաւ .

«Կապարճս ու նետս առի եւ որսացի ագռաւ  
մը . այդ չարագուշակ ագռաւը կուգար յաճախ  
մեր տան բակին պատերուն կը թառէր ու ա-  
նախորժ կակտցով կը գուժէր տխրածերմակ  
ձմեռը — ճերմա՛կ գետին ու սեւ երկինք . . .

Լուծեցի վրէժս , զարկի սպաննեցի սննկա  
ու տուն բերի :

«Կտրեցի ագռաւին թեւերը , ու կշռեցի ագ-  
ռաւին թեւերը իր մարմնոյն հետ դէմ գիմաց ,  
ու ինքզինքս ալ կշռեցի :

Ու սկսայ ինձի համար թեւեր շինել թռչե-  
լու ու հեռանալ դադարելու անապատին  
մէջ . . .

«Բացի , տարածեցի թեւերս կապոյտ օդին  
մէջ , թոյս հեռացայ երկրէ երկիր , եւ ծո-  
վեզերքի քաղաք մը հասնելով թառեցայ սարի  
մը կատարը :

«Անկէց զիտեցի անհունութիւնը ծովին , եւ  
կընքին անհունութիւնը .

«Ու ցանկացայ . . .

«Ուզեցի որ անհուն մըն ալ ես ըլլամ : Եր-  
կու անհուններուն մէջ ընակողն անհուն :

«Ու չյաջողեցայ : Այն ատեն աղօթեցի որ  
ինձի ծով-ծով մեղան տան , ու թեթ-թերթ  
երկինք տան , ատոնց վրայ գրելու : Անյա-  
տակ սրտիս խորքերէն փրփրացող յաւիտենա-  
կան յուզմունքը կ'ուզէի գրել :

Բաղձանքս կատարուած էր : «Մ'ո քեզի մե-  
լան , ծով-ծով մեղան , » ըսին ինձի . ու ծո-  
վին ջուրերը կարմիր մեղանի վերածեցին . . .

Վայրկեան մը յանկարծակներու եկած սար-  
սափահար մարեցայ , եւ երբ սթափեցայ , ա-  
ռաջին խօսքս եղաւ սա երգը :

ԾՈՎԻՆ

Ամէն գիշեր , երբ զայկահար լուսինը ,  
Սիրտ չունեցող կնոջ մը պէս սգաւոր :

Կ'երթայ պահուիլ սեւ ամպերու ետին ,  
Փրփրէ՛ , սառնասիրտ ծով , փրփրէ՛ :

Մի՛ լուր երբ մթութեան մէջ  
Չար մարդիկ , դատապարտեալներ շղթայած  
Բերեն ու նետեն ծոցդ .  
Այն ատեն անգունդէդ վեր բողբոջէ՛ ,  
Ու փրփրէ՛ , անզգա՛յ ծով , փրփրէ՛ :

Քանինե՛ր գիտեմ ես , եւ դուն չե՞ս յիշեր ,  
Քանինե՛ր եզերքէդ վար . . .  
Եւ դուն անյապ անգունդիդ մէջ  
Կլլեցիր զանոնք լո՛ւկ մեջիկ .  
Փրփրէ՛ , անկո՛ւշտ ծով , փրփրէ՛ :

Դուն ե՛լ աշխարքին պատմելու  
Չար մարդկութեան մը հրէշային արարքը :  
Սրինկզակ իշխանիդ դէմ՝ ըմբոստացիր ,  
Եւ ըսէ որ չե՛ս կարող գործիք մը ըլլալ իրեն .  
Ան չպիտի կարենայ լուսնել քեզ կամ պատժել  
Փրփրէ՛ դուն , թմրա՛ծ ծով , փրփրէ՛ :

Ո՛ւր մնացին այն հրաշքի գարերը ,  
Երբ քոյրդ ձամբայ տուաւ տանջուած ժու-  
ղովրդի մը .

Հիմա ալ դուն սի՛րտդ բաց , ու քիչ մը գթով  
Օգնէ՛ հալածուող ազգի մը .  
Դէ՛հ , փրփրէ՛ , սիրակա՛ն ծով , փրփրէ՛ :

Մենք մեզի համար ծնանք ,  
Ապրեցանք ուրիշի՛ն համար ,  
Որո՞ւ համար կը մեռնինք հիմա ,  
Սօսէ՛ , ու փրփրէ՛ , խոհատա՛նջ ծով , փրփրէ՛ :

Ըսէ՛ , ի՛նչ եղան այն հոգիները  
Որ անմեղ էին .  
Եւ ի՞նչ եղան նահատակները  
Որոնց գերեզման ըլլալ խոստացար  
Բռնաւորին՝ զաղսնաբար .  
Օր մը զանոնք մեզի պիտի դարձընե՞ս ,  
Ըսէ՛ ու փրփրէ՛ , վատասի՛րս ծով , փրփրէ՛ :

Սիրտս միայն քեզի բացի ,  
Այրած սիրտս քեզմո՛վ միայն պիտի զովնայ  
Եթէ՛ քիչ մը շարժի գութդ .  
Ե՛լ , գոռա՛ , ու փրփուրներ ցայտեցո՛ւր  
Հողիտ կրակին , որ կը մրկէ կեանքս .  
Սրի՛ , փրփրէ՛ , անուշի՛կ ծով , փրփրէ՛ :

Թող Արեւմուտքէն հով մը փչէ :  
Ուժգին հով մը՝ Արեւմուտքէն ,  
Եւ յուզէ քեզ խորքերէդ .  
Կոհակներ թող թաւալին կուրծքիդ վրայ :

Եւ թող ամպերը տեղան իրենց անձրեւը .  
Վերէն , տեղատարափը թող ծածկէ՛ մար-  
մինդ լուսնիստ .  
Ճերմակ արիւնդ թող հոսի գուրս ,

Ու մարմինդ ճերմակ փրփուրներով ծածկուել .  
Ե՛լ , փրփրէ՛ , հինաւո՛ւրց ծով , փրփրէ՛ :

Դուն որ չես ստոր , ու կը մրմնա՛ս միշտ .  
Ինչո՞ւ կը վախնաս բարձրաճախ աղաղակելէ .  
Անարդարութեան դէմ բողոքելէ ինչո՞ւ կը  
փաշուես .  
Եթէ կը լոն՛ս , ապա ուրեմն ինձի ալ ե-  
ղի՛ր գերեզման .  
Այն ատեն քնացի՛ր յաւիտենական քունդ ,  
Վասնզի , ա՛լ մէկը չպիտի խոռովէ հանգիստդ .  
Եւ ըսէ՛ «Փրփրէ՛ ծո՛վ , գերեզմա՛ն դարերու ,  
փրփրէ՛ » :

2 .

Աս ըսի , բացի թեւերս ու թեւաբախ թը-  
ռայ , եւ սկսայ գրել երկնքին անծալ ու ան-  
ծայր ու կասպոյտ եւ արիւնով բծաւորուած  
թերթերուն վրայ այսպէս .

«Թող իր ճամբուն մէջ մոլորի , ու իր ծրա-  
պիրներուն մէջ վարանի , սատամսի . ձեռ-  
նարկներուն մէջ անյաջող թող ելլէ . ջրա-  
կունքը թող գոցուին իր առջեւ :

«Բոլոր աղբիւրները աղջուր թող հոսին , եւ  
որքան խմէ այնքան թող ծարաւի ան :

«Դարունը թող վերնայ իր երկրէն , ձմրան  
ցուրտէն թող կիսաստոի . ամառուան տաքը  
թող խորովէ զինքը . գեղեցկութիւնը թող  
անցնի օրուան մը պէս , ու գիշերահանդոյն  
թող սեւնայ երեսը :

«Իեռ մէկ օրուան լուսնակերպ յոնքերը լուս-  
նի պէս թող սաճին , թող կլորնան ու ծած-  
կեն իր աչքերը տասնըինգ օրուան մէջ . եւ  
աչքերը ամպին տակ մնացած կարմիր լուսնին  
պէս թող ըլլան :

«Եւ մթնած աչքերով թող խարխափի ան ,  
ու խորխորատ մը զահավիժի . ծովին բացերը  
թող իննայ , չլիզողութի՛ սակայն , ու խեղ-  
դուելու սարսափն ալ թող իր սրտէն չպակսի :  
«Օգնութի՛ւն աղաղակէ թող ան , ու երկն-  
քի թռչունները փակեն իրենց լսելիքը . եւ  
ծովին թղթատարը թող չմտնայ իրեն , ծո-  
վին ուղտերը թող հետուներէն անցնին . այս-  
պէս , մէկը չգտնուի որ ազատէ զինքը իր  
տագնապներէն :

«Երկիրը թող չորնայ , հովիտները մրկին .  
դաշտերը բանջար չբուսցնեն իրեն համար :

«Անոր վրայ պալարներ թող վխտան ու  
վէրքեր պղպղան , բժիշկները տունէն չպակ-  
սին , ու բժիշկներուն զեղը օշինդր ըլլայ ,  
պաղլեղով թող ծածկին ծեփին իր բորբոքած  
վէրքերուն ծորանները :

Ցաւէն թող ճիչ արձակէ ու կոծ , մինչեւ  
արեւուն մտնելը , ու մինչեւ Արուսեակին երեւ-  
նալը թող ողբայ :

«Այն ատեն զիս կանչէ քովը ու պաղտոի .  
«Օրհնէ՛ զիս ու անէ՛ծքներդ ետ առ . հրախառն  
ծծումբի պէս վրաս թափեցան անոնք ու մարմ-  
նիս վրայ առողջ տեղ մը չկայ , մահը կը կան-

չեմ , եւ ան խկ խոյս կուտայ ինձե՛ :

«Իրկունը անօթի թող մտնէ անկողին եւ  
առտուն կանուխ արթննայ , քաղցը տանջէ  
թող զինքը մինչեւ լոյս եւ ցորեկն ալ ու-  
տելու բան թող չգտնէ :

«Անոր տունը կրակի թող տան իր թշնա-  
միները , եւ այն օրը բոլոր գետերը ցամքին  
թող . ու ժգին հով մը թող օգնէ հրձիգներուն :

«Թող նստիան մոխրի վրայ , ու ամպերն  
ըլլան տանիքն իր գլխուն . քուրճ հագնելու  
յանձնառու ըլլայ ու ա՛ն ալ չգտնէ :

«Սիրտը պաղեցնելու համար լալ թող ուզէ  
ու չյաջողի . արցունքին սկունքը թող գո-  
ցուին , ու մկանունքն արցունքին թող քա-  
րանան :

«Վասնզի անպութ եղաւ ան ինձի ու իմ  
սրտիս տուած վէրքերուն ծանրութիւնը չըմ-  
բանց :

«Զիս խարելուն մէջ գտաւ իրեն հաճոյքը .  
երբ տեսաւ արցունքս՝ հրճուեցաւ . ծափա-  
հարեց՝ երբ հառաչեցի :

«Տեսաւ արեան հոսումը բերնէս եւ ուրախ  
եղաւ , իմ ողբերս իր սիրտը բերկրութեամբ  
լեցուցին :

Է .

Բոլոր ազգերը միացան ու մեզի մեծամեծ  
յոյսեր տուին . «Ահա եկած ենք , ըսին ,  
մեր բանակներովը , եւ մեր մարդոցմով ձեզ  
պիտի դարձնենք գերութենէ :

Երկրիս բոլոր թագաւորները ժողովքի  
գումարուեցան , եւ Նոր Իսրայէլիկ համար  
դաւաճանութիւն ըրին բոլոր իշխանները :

Տէ՛ս , Տէ՛ր , անոնք հոյակապ պալատնե-  
րու մէջ կը բնակին եւ մենք խրճիթ մը չու-  
նինք , անոնք բեհեզ կը հագնին ու ծիրանի-  
ներով կը զարդարուին , մենք գրգռեակէ զըր-  
կուած ենք :

Փառաւոր եկեղեցիներ կը կանգնեն այդ  
իշխանական աւազակները , եւ հոն իբր հնու-  
թիւն ցոյցի կը դնեն իրենց հաւատքը պատու-  
տած :

Կեղծաւորութիւնն անչա՛փ է . Գեզ չըր-  
թունքով կը պաշտեն լոկ , ու բառերով կը  
խոստովանին մեծութիւնդ :

Տուն տան կը կցեն ու կը կցեն ազարակ-  
ներն իրարու : Իրենց պալատներուն ճակատը  
«Աստուած սէր է» կը գրեն , կը քանդակեն  
ալ՝ անոնք որ աւելի կեղծաւոր են , եւ ա-  
նոնց ներսի պատերը արիւնով ներկուած են :

Ազգերը մեզ հալածեցին , Տէ՛ր , ու զրկե-  
ցին մեզ մեր ժառանգութենէն : Գացէք գոր-  
ծեցէք երկիրը ու ապրեցէք» ըսիր , ո՛ւր է մեր  
բաժիրը :

Մեր հողերը գրաւեցին , ու մեր սպաննը-  
ւածները թաղելու տեղ անգամ չտուին . մեր  
մեռելները ծովը նետեցին , եւ ասոր համար  
հարկ խկ պահանջեցին .

«Ու մէկին թաղումին համար ուրիշ մըն ալ մեոցուցին իբրեւ զին գերեզմանի :»

«Իսկ Դուռն , ո՛վ վրէժխնդիր Աստուած , այս ամէնը տեսար եւ լուռ մնացիր , չենք զիտեր . զեռ ո՞ր օրուան կը սպասես .

«Երկիրն իր ամբողջութեամբ քուկդ է ու երկինքը ձեռքիդ մէջն ունիս . Ի՞նչ չա՛հ ուրեմն Գեղի՝ մեր մեռելներէն , ու մեր օրուան չոր հացը Քեզի ի՞նչ օգուտ ունի :

«Արեւմուտքէն որոտում թող լա՛է ուղտին հեծեալը , եւ արեւելքէն ողնիները վրան թող խուժեն , եւ երբ աչքը հիւսիս դարձնէ , կայծակ ու փայլակ թող սպառնան իբրին : Հարաւն ալ խորշակ չնչէ , անապատ դարձնէ երկիրը :

«Թող ձերմակ Արջը սուտ մեռուկ ձեւանայ եւ յանկարծ վրան յարձակի ու բզկատ անիկա : Ծովերու Իշխանը իր անգնդային բերանը բացած կ'լլէ թող զինքը : Ովկիանը վրան թող խուժէ ու ծովե՛ր թաւալին իր քաղաքներուն վրայ :

«Իր Մեծ Քաղաքը երկրաշարժով թող կործանի , եւ բոլոր շէնքերը աւերակ դառնան , աշտարակները կործանին , ոչ մէկ պարիսպ կանգուն թող չմնայ : Ի՛յնա՛յ թող Բարեւո՛նը :»

Ը .

Օհ , յոգնա՛ծ եմ , յոգնա՛ծ եմ .  
Կառքեր զրկէ՛ ինձի , ո՛վ իմ Աստուածս , հրէղէն կառքեր զրկէ ինձի . գամ՝ Գեղի պատսեմ երկրի վրայ անցածը . կ'ուզեմ այս մարմնովս վեր ելլել , ու վէրքերս ցուցնել Գեղի :

Այս ժամանակներուս , երբ զաւակները քսան տարուան կ'ըլլան , հայրերը կ'ըսեն . «Քինա զաւակս , ա՛լ քու գլխուդ ճարը նայէ . գնա՛ ըրէ՛ ինչ որ կ'ուզես :»

Դուռն ալ հիմա ծերացած , երբ տեսար թէ մարդկութիւնը . . . գիտնական է եղեր , ձգեր ես ազատ , անոնք ալ անդադար . . . իրարու միս կ'ուտեն , ու Դուռն ձայն չես հաներ :

Իրարու արիւնով բաժակաճառեր կ'արտասանեն իրենց Ծերունի-Հօր կենաց . . .

Ու կը փափազին ալ որ իրենց Հայրը մեռնի եւ իրենք ժառանգեն Անոր յաւիտենական թագաւորութիւնը , տիեզերակալ աշխարհակալութենէ չյազենալով . . .

Լռին էր մանկութիւնս , ու տխուր ալ էր . սրտիս վէրքերը՝ զեռ ինձի ալ անձանօթ , արդէն սկսած էին անհանգիստ ընել սիրտս :

Թուուցիկ մը շինեցի ու բարձրացայ լեռան մը վրայ :

Ի՛նչ ահաւոր է լեռը . ի՛նչ վսեմ խորհուրդ մը կ'ապրի լեռան մէջ , լեռան վրայ , ուր երբեմն Աստուա՛ծ իջաւ :

Ի՛նչ ահազին մտածումներ կը խոկան անոր ուռած կուրծքերուն մէջ ու ամպահուպ ալեւոր գագաթներուն մէջ . ահա կը պայթի՛ն կը բորբոքին :

Ելայ բարձրացայ լեռան կատարը ու անկէջ արձակեցի թուուցիկս , թռչունս անշունչ : Դէպ ի երկինք ելաւ , գնա՛ց , գնա՛ց , գնա՛ց ու կապոյտ եթերին մէջ կորաւ :

Ատիկա իմ թղթատարս էր ճարտար ու յանդուգն , որ յաջողեցաւ խօսք բերել երկինքէն՝ «Ե՛լ քրքրելու կրակէ մոխրաթաղ , ու բոցը պիտի արձարծեմ ես :» Եղաւ . . . ու կը վառի՛մ հիմայ . . .

Թ .

Եւ օր մըն ալ տաճարը մտիր , սիրակա՛նս , ու այն մտը որ հետդ վառեցինք Աստուածամօր պատկերին առջեւ՝ ուխտաւոր սրտերով , մտը ե՛ս առ , եւ թող չվառի , չսպառի այլեւս . պէ՛տք է իւզոտեմ ատով քնարիս լարերը ու նորոգ կեանք տամ անոր :

Դուռն որ չէիր հասկնար ու չես հասկնար ինչե՛ր կը գտնուին սրտին մէջ մարդուն , հիմա արդեօք կարողացա՞ր գտնել գաղտնիքը ինչո՞ւ եւ ինչպե՞ս կը բարախեն սրտերը . ի՞նչ կը զգան , ի՞նչ կը խորհին , ինչո՞ւ կուլան կամ կը խնդան :

Ի՞նչպէս են կերպաւորուած մկանունքը ժպտող այտերուն , եւ ի՞նչպէս կը գործեն այդ բերբերը որ արցունք թափել սովոր են .

Ըսէ՛ ինձի , քար-սիրտ որ կ'ըսեն , ի՞նչ ձեւ ունի ան . ի՛նչ երեւոյթ՝ լալկան գլուխները . ո՞ւր կը հանգչի կամօք մարդուն . . .

Ժ .

Երբ փակեմ աչքերս ու չտեսնեմ լոյս աշխարհքը , աչքերս կը տեսնեն ներսի կողմս աշխարհք մը մութ , խորվիրապ :

Հոն ովկիան մը կայ ալեծուփ . եւ ո՛րքան յիմար եմ ես որ կը ջանամ գրչի մընուրը ծորակէն հոսեցնել այդ ջուրերը շեղջակոյտ :

Եւ այդ ջուրերուն վրայ կը շրջի Աստուծոյ հողին , ստեղծագործելով՝ անպատրաստ ու անկազմ ջուրերէն , երգերու աշխարհ մը քընարիս համար :

Եւ ահա Բանը յորդառատ կը հոսի կուրծքս , ու տաղնապններու ջերմութեամբ կը գոլորչիանայ եթերին մէջ կը ծաւալի ,

Եւ չկայ ականջ մը հողեղէն ունկնդիր . . .

ԽՈՍՐՈՎ



ՔԱՐԻ ՊԱՆԻՔԸ

— 00 —

Յունիս 18ին, կիրակի առտու, արեւուն ծա-  
վելէն առաջ, մարդ մը պիտի կախէին Փարաս-  
քուրի հրապարակին վրայ:

Երբ ֆէլլահները, մութը կոխելէն ետքը,  
դաշտի աշխատանքը լննցնելով՝ կը վերադառ-  
նային էգպէ, մզկիթին պատերուն տակ կը կը-  
զած, պզտիկ խումբեր կազմելով, ասոր  
վրայ կը խօսէին մէջերնին, օրերէ ի վեր:

Կախուելիք մարդը իրենց պէս երկրագործ  
մըն էր. Փարասքուրի մօտ գտնուող Քաֆր-էլ-  
Շինաուի գեղէն, տասներինը տարեկան երի-  
տասարդ մը, Մուհամմէտ Ապու Ալի:

Մուհամմէտի հայրը երկու կին առեր է. ու-  
րոնց առաջինէն ունեցեր է Մուհամմէտը եւ  
երկրորդէն՝ ուրիշ երկու մանչ տղաք: Իր մա-  
հուրնէն ետքը երկու կիները եւ երեք եղ-  
բայրները շարունակեր են միասին ապրել,  
մշակելով իրենց ժառանգութիւն մնացած երեք  
ֆէտտան հողը:

Օր մը սակայն զինուորական ծառայութեան  
կը կոչուի Մուհամմէտ: Պէտք էր ձգել հողն  
ու ընտանիքը եւ երթալ չորս տարի Սուտանի  
մէջ կողմի տէրվիչներու դէմ: Ա՛հ, եթէ  
քառասուն ոսկի ունենար, եթէ երեք ֆէտ-  
տան հողն ամբողջ իրը ըլլար, այն ատեն  
կրնար մէկ ֆէտտանը ծախել, պայմանեալ  
զբամը վճարել եւ ազատիլ զինուորական ծա-  
ռայութենէն: Մայր ու տղայ, գլուխ գլխի  
տուած, օրերով կը մտմտան ճար մը գտնե-  
լու համար:

Մայրը կը գոնայ ճարը:

— Դիչեր մը սպաննէ՛ երկու եղբայրներդ.  
դուն կը ժառանգես իրենց հողը, մէկ ֆէտ-  
տանը կը ծախենք ու ահա գործը պրծաւ:

Մուհամմէտ կը վարանի. նախ խղճահա-  
րութիւններ կ'ունենայ, յիտոյ ոճիբի հետե-  
ւանքներուն վախը:

— Նախ, կը համոզէ մայրը, սպաննելիք-  
ներդ քու եղբայրներդ չեն. հայրերնիդ նոյնն  
է, բայց մայրերը տարբեր. գրեթէ օտարա-  
կան կը սեպուին. ասկէ զատ, ութը ինը

տարեկան պզտիկ տղաք են, զեռմարդ չեն համա-  
րուիր: Քնացած տեղերնին փայտով մը մէյ-  
մէկ հարուած գլխերնուն, լննցաւ գնաց: Մտա-  
ծէ անգամ մը, չո՛րս տարի զինուորութիւն,  
Սուտանի մէջ, տէրվիչներու դէմ: Տարի մը  
ողջ չպիտի դիմանաս, ու այդ պզտիկները  
հանգիստ նստած տեղերնին քու ժառանգու-  
թիւնդ պիտի ուտեն: Անխե՛լք, վարանելու  
բա՞ն է ասիկա:

Տղան միշտ կը վարանի. մայրը միշտ կը  
շարունակէ իր համոզիչ խօսքերը:

Ու առտու մը Քաֆր-էլ-Շինաուի ֆէլլահները  
արթննալով կ'իմանան թէ Մուհամմէտ Ապու  
Ալիի երկու պզտիկ եղբայրները նոյն գիշեր  
սպաննուեր են:

Ոստիկանութիւնը կուգայ եւ քննութեան  
կը սկսի ու գեղացիներու կասկածանքին  
վրայ կը ձերբակալէ Մուհամմէտն ու մայրը:  
Մուհամմէտ կը խոստովանի ոճիբը, մայրը  
կ'ուրանայ ամէն մասնակցութիւն կամ թելա-  
գրութիւն իր կողմէն:

Այսպէս Մուհամմէտ Ապու Ալի կը դատա-  
պարտուի մահուան, իսկ մայրը ազատ կ'ար-  
ձակուի:

\* \* \*

Կիրակի, զեռ լոյսը չծագած, ճամբայ կ'ել-  
լենք Տավարէն դէպ ի Փարասքուր: Ես ձիու-  
վրայ նստած եմ, իսկ քովս ու շուրջս քսանի  
չափ ֆէլլահներ, գլուխնին ծածկած իրենց  
սեւ վերարկուին տակ, լուռ, անշշուկ կը քա-  
լեն աւազոտ թումբերուն վրայէն: Ծնշող,  
անբացատրելի լուութիւն մը կը տիրէ մէջեր-  
նիս. ոչ ոք խօսք մը, բառ մը կը գոնայ  
ըսելու: Անընդհատ կերպով ու ակամայ կը  
մտածենք այն մարդուն վրայ որ երկու ժամէն  
պիտի մեռնի եւ որուն կախաղանը տեսնելու  
կ'երթանք:

Շարքավիէի ջրանցքին երկայնքը կը հան-  
դիպինք ֆէլլահի ուրիշ խումբերու, ամէնքն  
ալ սեւ վերարկուն գլխերնին քաջած՝ ուրուա-  
կաններու պէս կ'անցնին, լուռ ու մուռն:  
Վերարկուներու մէջէն միայն բարեւի ձայնը  
կը լսուի:

— Սալամ ալէքում:

— Ալէքում սալամ:

Ու ա՛լ ոչինչ:

Ժամը 5 ին կը հասնինք Փարասքուր: Դեռ  
արեւը չէ ծագած, սակայն լոյս է ամէն կողմ:

կ'ուզողունք գէպ ի հրապարակ . հո'ն կը գտնուի կախաղանը :

Չորս երկար ձողերու վրայ հաստատած են մահրեմը ուր դատապարտեալը պիտի ելլէ սանդուխէ մը : Մահրեմին վրայ կը բարձրանան ուրիշ երկու փայտեր որոնք իրարու միացած են հորիզոնական ձողով մը . այդ ձողին մէջտեղը կայ երկաթէ օղակ մը ուրիշ կախուած են չուաններ : Չարաշուք գործիքը ամբողջովին ներկուած է սև գոյնով :

Կախաղանին շուրջը արդէն հաւաքուած են քանի մը հազար հոգի, ձերմակ փաթթոցաւորներ սև վերաբերուներով, կիներ ու տղաք : Ուրոյր այդ մարդիկը մտայլ, պակուցեալ, սահմուկած դէմքեր ունին եւ լուռ ու մազնիւ սացած՝ կը նային մահրեմին :

Այս ամէնը անխորժ, նեղացուցիչ տպաւորութիւն մը կ'ընեն վրաս եւ կը զղջամ գացած ըլլալուն : Այտու հանդերձ, զիս ալ կը մազնիսէ կախաղանը, եւ կամաց կամաց բազմութիւնը ձեղքելով կը հասնիմ ճիշդ մտքը, գրեթէ մէկ մէթր անգին կախաղանի սանդուխէն :

Քանի մը վայրկեան ետքը, հրապարակի պահականոցէն՝ ուր կը գտնուէր ոճրագործը, քսանըչորս զինուոր գուրս կ'ելլեն ու կուգան կախաղանին շուրջը կը շարուին :

Հրոս ամենուն աչքը պահականոցի դրան վրայ է՝ ուրիշ պիտի բերուի դատապարտեալը :

Ահա կուգայ :

Ու ամբողջ բազմութեան մէջ սարսուռ մը կ'անցնի :

Իր ֆէլլահի սովորական հագուստներով, գլուխը ձերմակ գտակ մը, ոտքերը բոպիկ, Մուհամմէտ Ապու Ալի, գլուխը վար բռնած, կը յառաջանայ, երկու ոտիկաններու միջեւ, դէպ ի կախաղանին ոտքը : Չեռքերը պինդ կապուած են իրարու՝ կոնակին ետեւ. ոտքերն ալ նոյնպէս չուանով մը միացած են իրարու որպէսզի փախչելու փորձ չընէ :

Երբ որոշեալ տեղ մը եկաւ, ոտիկանները կեցուցին զինքը : Այդ միջոցին Մուհամմէտ գլուխը վեր առաւ : Երբէք չէի տեսած մարդկային երեսի այդօրինակ գոյն մը . կանաչի, ձերմակի ու սևի խառնուրդ մը, անանուն գոյն մը, գոյներուն ամենէն ստուկալին : Ու աչքերուն նայուածքը . . . նայուածքը մարդու մը որ գիտէ թէ տնպատան քանի մը վայրկեա-

նէն պիտի մեռնի, որ Մահը կը տեսնայ աչքին առջեւ, մարմին առած, հո'ն քայլ մը անդին, սեփ սեւ, եւ ուրիշ ազատելու ճար չկայ :

Յանկարձ գինու որները բարեւ կը կենան : Իշխանութեան ներկայացուցիչներն են որ կուգան : Մանուրայի կառավարչին փոխանորդը, հազարապետ մը, Տամիէթի դատրանին նախագահը, Փարսաքուրի քաղաքապետը, կառավարչական բժիշկը, եւ դահիճը :

Կառավարչին փոխանորդը կը հրամայէ ոտիկանի մը որ դատապարտեալը դէպ ի իրենց կողմը դարձնէ, յետոյ հազարապետին քով գտնուած պայտուակէն կը հանէ խոշոր թուղթ մը եւ կը սկսի կարգալ :

Խըտիվին կողմէ ստորագրուած պաշտօնագիրն է, որով Մուհամմէտի դատապարտութիւնը ծանուցանելով հրաման կ'ընէր որ վրձիւր գործադրուի :

Այս ընթացումէն հետք դահիճը առաջ կ'անցնի ու կուգայ դատապարտեալին քով կենալու : Հիմակ ա'լ դահիճին կը պատկանէր ան :

Հսկայ, յաղթամարմին, թուխ Սայիտցի մըն է դահիճը . երկար, մաքուր, սև վերաբերու մը հագած ու գլուխը ձերմակ փաթթոց մը :

—Մայրը բերէ՛ք որ միտս բարով ըսեն իրարու, կը հրամայէ բարձրաձայն հազարապետը :

Ու պահականոցէն գուրս կը բերեն ծեր, չորցած կին մը, թեւերը ապարանջաններով զարգարուած, քիթէն օղակ մը կախուած ու վիզը կապոյտ ապակիէ մանեակ մը : Այդ մանեակը, ըստ ֆէլլահ կիներու, զօրութիւն ունի գիրենք չար աչքերէ պահելու :

Մայր ու տղայ դէմ առ դէմ կը կենան : Մուհամմէտ գլուխը ծածկ հողին կը նայի, եթէ կարելի է նայիլ կոչել իր աչքերուն տարօրինակ, ահարկու արտայայտումը :

Գրեթէ երկու քայլ իրենցմէ անգին կեցած եմ : Իոյրոյ ներկաները գիտեն թէ մայրը ինչ գեր ունեցած է տղուն ոճիրին մէջ ու ամենքն ալ՝ ականջ կտրած՝ կ'ուզեն շեղ երկուքին մէջ փոխանակուելիք գերագոյն բացատրութիւնը : Սակայն ոչ մին բառ մը կ'արտասանէ :

Դահիճը, տասը տասնըհինգ բոպէ համբերելէն ետքը, Մուհամմէտին կը դառնայ ու կ'ըսէ .

—Քանի որ խօսք մը չունիք ըսելու, քալէ՛ . . .  
 Սարսուռ մը կ'անցնի դատապարտեալին բռ-  
 վանդակ մարմնէն : Բնագլուխը , ջղաձգաբար  
 գլուխը վեր կ'առնէ ու կը նայի . . . ա՛հ , այս  
 անգամ կ'ը ՆԱՅԻ . . . իր մօրը :

Ու մայրը , որուն քով երկու ոստիկան ար-  
 դէն եկած են զինքը հետաքննելու համար , ձեռ-  
 քովը կամաց մը տղուն ուսը շոյելով կը մըռ-  
 մըրայ .

— Հալի տուննա , եա՛ ուէլէտ , հալի  
 տուննա . . .

«Աշխարհի վիճակն է այս , տղա՛ս , աշխարհի  
 վիճակը :»

Ոստիկանները կը տանին մայրը :

—Բան մը կ'ուզե՞ս , կը հարցընէ դահիճը  
 իր զոհին :

Առաջին անգամ ըլլալով կը լսեմ Մուհամմէ-  
 տի ձայնը .

—Իտտի՛ նի շուռայիթ մայրա :

«Քիչ մը ջուր տուէ՛ք :»

Պահականոցէն կը բերեն գաւաթ մը ջուր ,  
 զոր անյագաբար կը խմէ :

—Քալէ՛ , կ'ըսէ դահիճը :

Դատապարտեալը , որ մինչեւ այն ատեն  
 կռնակը կախաղանին դարձուցած էր , կը գառ-  
 նայ՝ միշտ գլուխը ծռած , ու քանի մը քայլ  
 առնելով կը հասնի կախաղանի սանդուխին  
 ոտքը : Քունի մէջ մարդ մըն է կարծես որ ան-  
 գիտակցաբար կ'երթայ : Բայց հո՛ն , սանդու-  
 խին առջեւ , նորէն վեր կ'առնէ գլուխը , կը  
 տեսնայ սանդուխին ոտքերը , մահրեմը , եր-  
 կու փայտերը , հորիզոնական ձողը , երկաթէ  
 օղակը եւ չուանները որոնք իրեն կը սպա-  
 սեն . . . :

Ու կ'ընկրկի , ու ոտքը չի կրնար դնել սան-  
 դուխին վրայ , ու իր վիճակին ամբողջ անդառ-  
 նալի սոսկալիութիւնը կը զգայ . . . :

Ա՛հ , յուզումի ի՛նչ ահարկու ուժգնու-  
 թիւն մը ունեցաւ արդեօք այդ բոպէին Մու-  
 համմէտ :

Նոյն միջոցին արեւը կ'ելլէր Մէնզալէի  
 լճին ետեւէն : Տորենի , բրինձի ու բամպակի  
 դաշտերուն մէջ աշխատանքը կը սկսէր : Եղ-  
 ները կը լծուէին արօրին , աղջիկներն ու սը-  
 դաք , կանանչութիւններու մէջ կորսուած ,  
 կը ժողվէին վնասակար խոտերը . թուրքե-  
 ղուն վրայ , էջերու կարաւաններ , արմաթք  
 բեռցած , կը յառաջանային նոյն օրուան մա-

րասքորի սօնավաճառին գալու համար : Ու  
 նեղոսի միւս կողմը կը տեսնուէր Քաֆր-էլ-Ա-  
 ռապի Ֆէլլահ կիները որոնք՝ գետին եզերքը՝  
 իրենց առտուան արդուզարգը կ'ընէին . ու  
 նեղոսի ջուրերուն մէջ բարձրացած պրտունե-  
 ըը կ'երգէին անհամար ճնճղուկներու ձայնով .  
 Փէրուֆաները , առադաստ բացած , դանդաղ  
 կ'իջնէին գետն ի վար : Հեռուն , արմա-  
 ւենիներու անտառակի մը մէջ , պէտէվիներ ,  
 ուղտերով չըջապատուած , իրենց վրաններէն  
 կ'ելլէին , նահապետական վեհութեամբ մը ,  
 նամազին կատարելու : Գիշերուան առժա-  
 մեայ մահուրնէն ետքը , կեանքն էր որ կը վե-  
 րազարթնուէր , տաք , զուարթ , լուսողող :

Մուհամմէտ , սանդուխին ոտքը , կը տես-  
 նար այս ամենքը . . . կը տեսնար մանաւանդ  
 սանդուխը , որուն ամէն մէկ ոտքը զինքը  
 պիտի տանէր մահուան , անգարձ , վերջնա-  
 կան մահուան , հո՛ն ուր ալ իր աչքերը բան  
 մը չպիտի տեսնային , ականջները բան մը  
 չպիտի լսէին , քիթը հոտ մը չպիտի առնէր ,  
 ձեռքերը բան մը չպիտի բռնէին ու ոտքերը  
 ա՛լ տեղ մը չպիտի երթային . . . :

Ու Մուհամմէտ չէր ուզեր ոտքը դնել սան-  
 դուխին վրայ . . .

Այն ատեն դահիճը բռնեց դատապարտեալին  
 ծոծրակէն սւ քաշքշելով հանեց մինչեւ վեր :  
 Անկարելի է երեւակայել աւելի ահռելի տե-  
 սարան մը : Զիուորներէն մին յուզումէն մա-  
 րեցաւ , շատ մը կիներ սկսան փախչիլ աղա-  
 զակելով ու սեւ վերարկուներու տակ ծած-  
 կուած փաթթոցաւոր Ֆէլլահները գոչեցին .

—Ալլա՛հ , Ալլա՛հ :

Վերը , մահրեմին վրայ , դահիճին օգնա-  
 կանը կը սպասէր : Անիկա բռնեց դատապար-  
 տեալը , որպէսզի դահիճը կարենայ չուանը  
 վզէն անցունել : Այդ գործողութեան միջոցին  
 տեսանք որ դահիճը Մուհամմէտի ականջին  
 մօտեցաւ ու քանի մը լոպէ ականջն ի վար  
 խօսեցաւ : Չուանը վիզը անցուելէ ետքը , օգ-  
 նականը վար իջաւ ու դահիճը եկաւ սանդու-  
 խին վրայ :

Հոն , զսպանակի մը վրայ կոխելուն պէս ,  
 մահրեմին գետնի տախտակները երկու կող-  
 մէն բացուեցան ու Մուհամմէտ ինկաւ օդին  
 մէջ , չուանը վզին շուրջը , հաղիւ գետնէն  
 կէս մէթը բարձրութեամբ :

Այն ատեն սկսաւ չուանը իր խեղդչի պաշ-  
 տօնը կատարել :

Ա՛հ , դնդերական ցնցումնե՛րը օգին մէջ կախուած մարմնոյն . . . մէ՛կ , երկո՛ւ , եւրե՛ք անգամ , ու յետոյ կծկումնե՛րը դէմքին , աչքերը դուրս ինկած , սեւ լեզուն բերնէն վար , քիթը ճմուր ճմուր : Քանի՞ րոպէ , քանի՞ դար տեւեց ասիկա . . .

Ոստիկանական բժիշկը , գէր , ակնոցաւոր արար մը , մօտեցաւ Մուհամմէտին , որ ա՛լ չէր ցնցուեր . ձեռքերը , որ կռնակէն կապուած էին , քակել տուաւ , ժամացոյցը հանեց ու դատապարտեալին բազկերակը բռնեց :

Քանի մը վայրկեան այսպէս մնաց , յետոյ դառնալով Մանուրայի կառավարչի փոխանորդին՝ որ ձեռքը թուղթ մը բռնած կեցեր էր , ըսաւ .

—Մա՛թ :

«Մեաւա :»

Փոխանորդը անմիջապէս թուղթը ոտականի մը տուաւ որ վազելով հեռացաւ :

Արդարութեան գործոց նախարարին ուղղուած հեռագիրն էր որով կը ծանուցանէր թէ իւր տիվին վճիռը գործադրուած էր :

Իշխանութեան ներկայացուցիչները մեկնեցան . դահիճը թաշկինակով մը ծածկեց Մուհամմէտի երեսը ու բազմութիւնը սկսաւ ցրուիլ :

Այն ատեն տարօրինակ բան մը պատահեցաւ : Շատ մը արար կիներ , որոնք սայլերուն մէջ հեռուն նստած էին , վար իջան , մօտեցան ու սկսան կախաղանին տակէն անցնիլ դառնալ , օգին մէջ կախուած դիակին քսուելով :

Հետաքրքիր եղայ ասոր պատճառը հասկընալու եւ ըսին ինծի թէ ատոնք ամուլ կիներ են որոնք Տամիէթէն , Մանսուրայէն ու Շէրպինէն յատկապէս եկած են կախաղանին տակէն անցնելու , որպէսզի . . . զաւակ ունենան . ժողովրդական նախապաշարում մը որ հաւատքի պէս արմատացած է եղեր արաբներու մէջ :

\* \*

Կէս ժամ ետքը , մեռելը վար առին : Կախաղանը քակեցին ու երկար անտուկներու մէջ տեղաւորելով տարին գետին եզերքը , որպէսզի նաւով փոխադրեն ուրիշ քաղաք մը ուր քանի մը օր ետքը նոր դատապարտեալ մը պիտի կախէին :

Քանի մը ծանօթներ ժողովուեցանք հրապարակին վրայ , Նեղոսի եզերքը , սրճարան մը ու ահա դահիճը եկաւ :

—Տատալ , եա՛ Սիաի , ըսաւ մէջերնէս մէկը :»

«Հրամեցէ՛ք , Տէ՛ր :»

Ու դահիճը եկաւ քովերնիս սուրճ մը սուսելու :

Հետաքրքիր էինք իւանալու թէ ի՛նչ խօսած էր մահբեմին վրայ , դատապարտեալին հետ :

—Երբ վերը ելանք , պատմեց դահիճը , Մուհամմէտ սկսաւ պաղատիլ որ զինքը չմեռնեմ . այն ատեն ականջին ծոցայ ու ըսի . «Հոգ մի՛ ըներ , ես ու օգնականս չուանը այնպէս մը կարգադրած ենք որ վիզդ չպիտի սեղմէ , միայն թէ դուն այնպէս ձեւացուր որ մեռար , որպէսզի մեռները չկասկածին . անգամ մը որ զինուորները եւ պաշտօնեաները հեռանան , քեզ դազաղի մը մէջ կը դնենք ու կը փախցնենք : Ես այս կերպով չորս հոգի ազատած եմ :»

—Եւ որպէսզի աղէկ մը հաւատայ ըսածիս՝ աւելցուցի . «Բայց , Մուհամմէ՛տ , երզում ըրէ՛ , որ քսան ոսկի պիտի տաս ինծի՝ ու հինգ ալ օգնականիս :» —Ամբողջ ունեցածս ձեզի , ամբողջ կեանքս ձեզի , ձեր գերին պիտի ըլլամ , պատասխանեց Մուհամմէտ :»

Դահիճը իր պատմութիւնը աւարտելով սկըսաւ խնդալ :

Յետոյ յանկարծ , լուրջ , մեղամաղձիկ չեղտով մը .

—Ա՛հ , մեր պաշտօնը չա՛տ ծանր բան է : Ես ուրիշ դահիճներու պէս չեմ որոնք հաճոյքով մարդ կը մեռցնեն : Ամէն անգամ , —եւ այս քառասուն երկուերորդ անգամն է— , մարդ կախած օրս՝ կերակուր չեմ կրնար ուտիլ : Ու շատ անգամ եղած է որ այսպէս խաբած եմ դատապարտեալները , որպէսզի հանգիստ մեռնին . . . ես բարի դահիճ մըն եմ :»

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ



Ա Ր Ա Ղ Ա Ն Բ Ը


—o—

Այս ո՞վ է շախս շուռ կես գիշերին  
Խուշ կողկողանքով խառարի ծոցից,  
Որից դողում են նոճի եւ շիրիւ ,  
Աստղերն են ընկնում դարակ երկրեփից :

Այս ո՞վ է շախս . . . Ա՛հ , հեծեծա՛նքն է  
Կեանքի օրուսն մեզ երգած ցաւերգին ,  
Որ աւելի խոր , աւելի ազդու  
Մնասցանք կուսայ շուռ կես գիշերին :

Բերլին

ԱՐԱՄ ՉԱՐԸԴ



ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒԱԿ

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ (\*)

(Շար . )

է

Այս իր սրանցումէն , սուսերաւոր զինակիր  
Փուշը , մեծապէս շփոթած , իր Նարկիզ գէտը  
կանչեց որ մշտաբաց աչքով Վարդարանին  
վրայ կը հսկէր , եւ անոր հրամայեց որ հետամուտ  
ըլլայ տեսնելու թէ ո՞վ է ան որ քաղաքը  
իրար կ'անցընէ . պատուէր տուաւ նաեւ Նու-  
նուֆար ծագկին , որ քաղաքին լրտեսն էր ,  
հագնիլ իր կապուտագոյն պատմուճանը եւ գի-  
շերանց լրտեսել թէ ի՞նչպիսի մէկն է եւ  
ո՛րկից եկած է եւ ո՛րուն այդքան սիրահա-  
րուած՝ անհանդիստ կ'ընէ ամենքը , այդ ամ-  
բողջը լաւ տեղեկանալով իրեն ճիշդ ու ճիշդ  
իմացնել : Փուշին այս հրամանին վրայ Նար-  
կիզն ու Նունուֆարը ելան դիտելու Վարդա-  
րանին ամէն մէկ անկիւնն ու փողոցը : Եւ  
զգուշութեամբ հետեւելով հետամուտ կ'ըլլա-  
յին Սոխակին ամէն ըրածները տեսնել ու ի-  
մանալու :

Ողորմելի Սոխակը , այդ որոգայթէն բոլորու-  
վին անտեղեկ եւ Վարդին հովանաւորութեանը

(\*) Տես Անանիս, րիւ 1 , 5—6 .

վստահ , գիշերանց իջաւ քիչ մը Վարդարանին  
մէջ պտրտելու եւ զբոսնելու . ու փողոցէ մը  
անցած ատենը , Նարկիս գէտը զայն տեսնելով՝  
Նունուֆարին ըսաւ՝ «Ինձի կը թուի որ սա է  
այն պանդուխտը որուն վրայ տեղեկութիւն  
ուղեց Դշխոյին պահապան զինակիր Փուշը »

Եւ որովհետեւ մռայլ գիշերին մէջ Նու-  
նուֆարը կապուտագոյն լողիկովը պահուրտած  
էր , Սոխակը չտեսնելով մօտէն կ'անցնէր .  
խորամանկ Նունուֆարը անոր առջեւը ելաւ  
եւ կեղծաւորաբար բարեւելով , սկսաւ անու-  
շութեամբ հարցուփորձ ընել :

Բարեսիրտ Սոխակը , Նունուֆարին նեն-  
գութիւնը չգիտնալով , հարագատ սրտով ըսաւ .  
անոր իր ո՞վ ըլլալը եւ իր մանկութենէն ի  
վեր սիրահարուիլը՝ առանց գիտնալու թէ ո-  
րո՞ւն , եւ թէ ի՞նչ գիպուածով Վարդին ա-  
նունը լսեց , եւ անոր սիրովը բռնուեցաւ եւ  
անոր սիրոյն համար եկաւ Վարդարանին մէջ  
օթագայեցաւ , այս ամէնը պատմեց :

Նունուֆարն ըսաւ . «Կը խղճամ վրադ , ո՞վ  
ողորմելի սիրահար , որ ի զուր կը գեղերիս .  
վանդի գձուճ ու աղքատ մէկն ես դուն , եւ  
Վարդը , փառաւոր ու մեծ թագուհի մը ըլլալով ,  
ի՞նչպէս պիտի զիջանի քեզի մտերմանալ :»

Սոխակն ըսաւ . «Միտոյ մէջ՝ աղքատի ու  
հարուստի , մեծի ու փոքրի խտրութիւն չկայ ,  
վանդի ազնիւ սիրտը եւ ճշմարիտ սէրը խըր-  
տոցը կը վերցնէ եւ մեծին ու սարուկին հա-  
ւասարութիւն կուտայ :»

Նունուֆարն ըսաւ . «Եւ ի՞նչէն է սիրոյ այդ  
ներգործութիւնը :»

Սոխակն ըսաւ . «Սէրն է պատճառ եւ հեղի-  
նակ ամէն միութեան . սիրողէն ու սիրուածէն  
ծագելով՝ առնչութիւն ունի երկուքին ալ հետ .  
վանդի յօգն ու կապն է միաւորութեան որ  
իր հզօր ներգործութեամբ սիրողին ու սի-  
րուածին մէջ թափանցելով անոնց հետ կը մի-  
անայ , եւ երեքը անշփոթաբար մի եւ ան-  
բաժանելի կ'ըլլան :»

Նունուֆարն ըսաւ . «Եւ քեզի ի՞նչ օգուտ  
կայ ատկից , քանի որ Վարդը քեզ չի ճանչ-  
նար ու չի սիրեր :»

Սոխակն ըսաւ . «Ինձի համար բաւական է  
որ ես ջերմաբար ամբողջ հողւովս զանի սի-  
րեմ՝ վանդի սիրոյ զօրութիւնը մագնիսի նը-  
ման սիրելին քաշելով սիրողին կը ծանօթացնէ  
եւ կը միացնէ :»

Նունուֆարն ըսաւ . «Ատի շատ տաժանելի  
դորձ է , եւ շատ տանջանք կը պատճառէ քեզի :

Ազէկ կ'ընես եթէ այդ իղձը մէկդի զնելով , հարստանալու ետեւէ ըլլաս եւ անով քու հանգիստդ ու վայելքդ հոգաս :

Սոխակն ըսաւ . «Ես ապահով եմ որ ան ինձմէ կ'ախորժի . ապա թէ ոչ , իմ ձայնս ու իրեն ուղղուած սիրոյ երգս առջի անգամ ըստ սելուն , կա'մ իսկոյն զիս կը պատժէր եւ կա'մ կը հրամայէր իր Վարդարանէն զիս աքսորել :»

Բաւական տեղեկութիւն ստացած ըլլալով , նենդաւոր Նունուֆարը՝ ըսաւ անոր համոզական ձեւով մը . «Ուրախ կ'ըլլայի որ քու ազնկալութիւններդ ի զերեւ չելլէին :»

Եւ այս ըսելով անկից բաժնուեցաւ եւ Փուշին քով երթալով մի ըստ միոջէ պատմեց ամէն ինչ որ իմացած էր Սոխակէն :

ՉԱՔԱՐԻՍ, ՄԱՐԳԱՐ ԽՕՃԵՆՑ ԵՐԵՒԱՆՑԻ  
(Շարունակելի)



### ՈՒՐՈՒՆԱԳՐՄԱՆՆԵՐ

ՔԱՄԻՆ

Ահա իմ դեւս—քամին , քամին կուգայ :  
Ա՛խ , այդ անաւոր հարաւակողմը խելաթափ կ'ընէ զիս : Պղնձի անօթի նման կը դռնչէ ուղեղս , կը պապակիմ , կը թալկանամ եւ կը գալարիմ : Կ'ելլեմ տեղէս , դուրս կը նայիմ պատուհանէն—քաղաքին վրայ տարօրինակ սպիտակութիւն մը կայ : Փողոցները ո՛րչափ մաքուր են : Անապատական հողի մը կը փչէ ամէն տեղ :

Կարծես աներեւոյթ զօրութիւն մը վիզս կը ճմլէ , հեղձամղձուկ կ'ըլլամ եւ բիբերս կը գեղնագունին : Չեմ կրնար տունը նստիլ . պէտք եմ ազատիլ այս խորհրդաւոր լիկութենէն . եւ կը կարծեմ թէ դուրսը վազելով պիտի հանդարտիմ պիտի խաղաղիմ :

Գուները , պատուհանները գոց են : Ես կ'երթամ՝ տօթաշունչ քամին դէմքիս վրայէն ձեռքս հալածելով : Բերանս կիսաբաց կը մնայ :

Վեր կը նայիմ , աչուրներս պզտորած , մազերս զգալուն դարձած , եւ փոշոտ արեգակ մը կ'երեւայ որ թխպոտ երկնից վրայ կար-

ծես կը դառնայ ու կը դառնայ : Կամաց կամաց արագագոյն թաւալելով , շրջրջելով , փոթորկելով , սկաւառակը անուի պէս կը պտուաքի :

Ես կը շտապեմ , կ'երթամ , բայց ո՞ւր : Դեռ խելքս տեղն է , դեռ գիտակ եմ որ սաստիկ չարչարանք մը զիս հալածական կը վարէ : Ես կ'երթամ՝ կը փափաքիմ ոռնալ : Բայց քիչ ետքը ուշս կը տկարանայ , ականջներս կը խօսին , եւ ես կարծես լաստի վրայ կանգուն՝ դանդաղելով կը յառաջանամ , ակամայ եւ անյօժար :

Ճամբուն վրայ կը նշմարեմ նկնահասակ թփեր , մաթղենի , ափրիկեան տատասկներ՝ որ ահագին կատաղութեամբ կ'երերան ու կ'երերան : Արմաւենիք դէպ ի մէկ կողմ կը կորանան եւ իրենց վարսերը մինչեւ գետին կ'իջնան , բայց յանկարծ ընդարձակ գոռոց մը միտքս կը թոթվէ :

Իր բարբառը գտած է հողիս :  
Թխակապոյտ ծովը կ'երեւայ՝ կարծես խորշակէ ախտաժէս : Խոշոր ալիքները ցամաքը կը թանան : Ոչ ոք կայ ամայի ափին վրայ : Ձկնորս ու նաւավար , բոլոր փախած են :

Ես կը կայնիմ երկիւղալից , կը մարմրիմ , ուշաթափ կ'ըլլամ—քամի՛ն է , սեւ դեւը :

Մարքս ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅԵՐՆ Ի ԲԱՐԻՉ. — Բարիդի Հայոց Հայրենասիրական ընկերակցութիւնը խնդրագիր մը շրկեց Վա Հէի Դեսպանաժողովին նախագահին եւ նոյն խնդրագրին մէկ պատճէնը հաղորդեց , նամակով մը , Պ . Տելքասէին :

— Բարիդի ՀայՈւսանողաց Միութիւնը սկսաւ իր երեկոյթներու շարքը : Առաջին բանախօսը եղաւ Պ . Տ . Օտեան , որ մարդկային ընկերութեան մէջ կրօնքներու թմրեցնող ու պառակտիչ դերը բացատրեց :

Երկրորդ բանախօսը եղաւ Տր . Մ . Էլմասեան , որ հայ եւ օսար ունկնդիրներու խումուն բազմութեան մը առջեւ , Ֆրանսերէն լեզուով խօսեցաւ մեքրոպաբանական գիտութեան բնաշըջութեան եւ մարդկային առողջապահութեան մէջ անոր կատարած դերին վրայ :

—ԱՎՈՒՄԲԸ ԵՒ ՆՈՐ ԻՇԽԱՆ ՄԸ—Մեր վերջին թիւը նոր լոյս տեսած էր, երբ առաւօտ մը ժողովնայ, Մարիէն թերթերուն մէջ տեսանք հետեւեալ ազգը՝ «Բարիզի հայ ուսանողները հիմնած են Ակումբ մը, նախագահութեամբ իշխան Սէրժ տէ Դաւիթ-Պէյթ (i)» Քիչ յետոյ իմացանք թէ Ակումբը կը կազմակերպէր երկրորդ պարահանդէս մը . Իլլիւստրասիոնին մէջ ազգ մը կ'երեւար որ կը ծանուցանէր թէ այդ պարահանդէսը կը տրուէր ի նպաստ Հայաստանի սովետներուն, նախագահութեամբ իշխան Սէրժ տէ Դաւիթ-Պէյթի Թէ ո եւ է բազադիսնդեր մը ինքզինքը իշխան, փաշայ կամ կարտիւնալ յորջորջելու մէջ շահ մը տեսնէ, ասիկա ինքնին մեզ անտարբեր կը ձգէ . միայն կ'ուզենք զխանայ թէ Բարիզի հայ ուսանողութիւնը պիտի ներէ՞ որ բարեկենդանի իշխաններ իր անունը գործածեն եւ Հայաստանի սովը շահագործեն՝ անձնական ծրագիրներու իրակաւ նացմանը համար :

—Մայիս 6ին, Պ. Մաթիաս Տիւվալ կենսաբանական քննարկութեան հաղորդեց Ե. Մանուէլեանի մէկ նոր աշխատութիւնը՝ ուղղակին պատաստուն ճիւղաւորմանց պարագամանը վրայ (le développement des arborisations grimpantes du cervelet) . այս աշխատութեամբ Մանուէլեան կը ցած է առաջին անգամ ըլլալով ամբողջութեամբ տեսնել այն բոլոր փուլերը (phase) որոնցմէ ջղային նեարդ մը կ'անցնի իր վերջնական պարագամանը հասնելու համար . Պ. Տիւվալ յայտարարեց թէ այդ աշխատութիւնը կարեւոր է ոչ միայն ջղային գրութեան բնաշրջութեանը տեսակէտով, այլ նաեւ որովհետեւ կը նպաստէ ջղային տարրերու բնախօսութեան շահեկան խնդիրներ լուսաբանելու :

—Փրանսական լրագիրներէն կ'իմանանք թէ պարսիկ կառավարութիւնը 1900 ի ցուցանալէսին համար Պարսկաստանի ներկայացուցիչ ընտրեր է Ժեներալ Գիթապի Խանը, որ Բարիզի հայ գաղթականութեան ծանօթ գէմբերէն մին է :

—Պ. Գրիգոր Գալֆայիան, երիտասարդ երաժիշտը որուն մասին խօսած էինք նախորդ թուով մը, կը շարունակէ իր ուշիմ ու եռանդուն ջանքերը՝ կատարագործուելու համար իր արուեստին մէջ : Ուրախութեամբ իմացանք որ յաջողութիւնը համակրութեւնը շահիլ ֆրանսացի մեծ նուագասանը՝ Վենսան Կիստիին որ մեր ազգակցին ցոյց տուած ընդունակութեանէն գրաւուած, խոստացեր է բարեկամաբար մասնաւոր գասեր տալ անոր եւ յառաջիկայ աշնան զանի Բոնսէլովութուառը ձրի մտցնել :

—Երեւցաւ առաջին թիւը ԲԱՆԱՍԷՐԻՆ, որ կը դարունակէ շահեկան յօդուած մը Պ. Կ. Բասմաջեանի՝ Պեհրատունի բեւեռագիր արձանագրութեանը վրայ, Մանուէլի Մենաստանը թարգմ. յունարէնէ, Հայոց դիր-

քը Վրաց թագաւորութեան մէջ՝ Բրօֆ . Խախանովի, հայերէնի ներդաշնակութեան աստիճանը թուաբանական հաշուով՝ Հ. Ա. Ճաւեանի, Տերսիմցիք՝ Կայծոռիկի, Խորենացոյ պատմութիւնը ուղղագրեալ եւ ծանօթաբանեալ՝ Հ. Ս. Պարոնեանի : Կը շնորհաւորենք մեր Բասմաջեան բարեկամը իր հիմնած գործին համար, եւ կը բազմանք տեսնել ի մօտոյ իր հանդէսը տպագրութեամբ հրատարակուած :

—Այս տարուան Բարիզի նկարչական Սալօնին, մեր հայրենակիցներէն մասնակցած են Պ. Պ. Շահին, Զաքարեան, Տրիանեան եւ Շապանեան :

—ՀԱՅԵՐՆ Ի ՌՈՒՍԻԱ . — Մշակէն կ'իմանանք թէ Վահրամ Սվաճեան մէկ նուագահանդէս մը տուեր է Թիֆլիս եւ երկու նուագահանդէս՝ Պաքու : Պաքուի ռուս մամուլը աւելի ուշիմ գտնուեր է քան Թիֆլիսինը, որ ոչինչ կը ցեր է հասկնալ Սվաճեանի ինքնատիպ ու փափուկ տաղանդէն . «Ռուսկինշթայնի դժուար էտիւզը, Շորէնի Պէրսէօզը եւ Լիւզի Ս. Ֆրանսուան ալիքներու վրայ» Սվաճեան նուագեց շատ տաղանգաւոր ու շնորհալի կերպով, կը գրէ Պաքուի Բասթի լրագիրը :

—ՀԱՅԵՐՆ Ի ԹՈՒՐԿԻԱ . — Պոլսէն Թան ինդրիուած հեռագրէ մը կ'իմանանք թէ՝ Ազուրեան, կաթողիկ Հայոց պատրիարքը մեներ է :

ՀԱՅԵՐՆ Ի ՉԻՔԱԿՈ . — Զիքալոյէն մեկ կըլի գրեն՝ Զիքալո իր արուարձաններով 400 ի մօտ հայ գաղթականութիւն մը ունի, որ բազալատմամբ ուրիշ քաղաքներու, աւելի թուով պարգացած հայ անհատներ կը պարունակէ : Ունինք սկում մը, «Հայ Ուսումնասիրաց Ակումբ ի Զիքալո» անունով, որուն անդամները հայ ուսանողներ են, եւ ուրամէն կերտիկ հրապարակային ժողովներու մէջ զանազան շահեկան նիւթերու վրայ բանախօսութիւններ տեղի կ'ունենան :

Բրօֆ . Պ. Թաթարեան քաղաքիս նշանաւոր Հայերէն է . ծանօթ է Ամերիկացոց իր կատարած մարդարանական քննութիւններով ի Մեքսիկո՝ Զիքալոյի համալսարանին կողմէն . եւ վերջերս նորէն կը մեկնի Մեքսիկոյի լեռնաբնակներու կեանքը ուսումնասիրելու . Թաթարեան քաջ քիմիադէտ մըն է : —Յովսէփ Փաշմանեան եւ Միհրան Սէրէյլեան ծանօթ նկարիչներ են քաղաքիս մէջ . առաջինը շահեցաւ մէկ տարի առաջ Զիքալոյէն Բարիզ զրկուած նկարներու մրցման մէջ՝ առաջին մրցանակը : —Հրանտ Ասատուրեան նշանաւոր երգչի մը անունը սկսած է ունենալ . մէկ ամիս առաջ Ռուսկինշթայնի նուագահանդէսին մէջ մրցանակ ընդունեցաւ իր նարսի կըտորներէն մին երգելով :

—Ընդունեցանք առաջին թիւերը կիսամսեայ հանդէսի մը, Փիլանիկ, որ սկսած է հրատարակուիլ Գահիրէի մէջ, անօրէնութեամբ Պ. Սմբատ Բիւրատի:

—Պ. Յ. Թ. Չարչաֆեան, Նիւ-Նորքի Տիգրիսին նախկին խմբագիրներէն մին, մեզի կ'իմացնէ թէ սկսած է հրատարակել Նիւ-Նորքի մէջ թերթ մը Հայրենիք տիտղոսով:

—Վառնայի թերթերէն կ'իմանանք թէ Պուլկարիոյ Հայերը միթիւնկներ գումարելով որոշեր են Պ. Մինաս Չերազը Լա Հէի Դեսպանաժողովին զրկել իբրեւ պատգամաւոր Պուլկարիոյ հայ պաղթականութեան:




ԽԱՉԱԳՈՂ ՄԸ

Կարապետ ֆալֆայեան անուն երիտասարդ մը տարի ու կէս առաջ թիֆլիսէն Բարիզ եկած էր դերասանական արուեստը ուսանելու: Այդ պարունը արտասայտիչ ու գեղեցիկ գլուխ մը ունէր, առջի օրերուն ցոյց կուտար մեծ խոնդ մը աշխատելու և զարգանալու. և հակառակ իր աներեակայելի տղիտութեան, արտասանութեան արժատական թերութիւններուն ու յիշողութեան հիւանդագին պակասութեանց, մենք անոնցմէ եղանք, որ սիրեցին հաւատալ թէ կանոնաւոր ու երկարատեւ աշխատութեամբ մը այդ երիտասարդը պիտի կարենար իր թերութիւնները սերբազրել և կրթուած ու կողմուած թիֆլիս դառնալ աշխտեղ սկսելու համար իր դերասանական տաղանդը: Բայց քիչ ատենէն տեսնք որ, փոխանակ ուսումնասիրելու, ֆալֆայեան ձգտումներ կը ցուցնէր բեմ ելլելու իբրեւ արդէն կողմուած արուեստագետ մը: Բարիզի հայ գաղթականութեան մէջ շատեր վնասակար համոզութիւն մը չաւայեցին այդ անծանօթ նորեկին և վանի մղեցին օտարներուն առջև իբրև հայ նշանաւոր արուեստագետ մը ներկայանալու. եղան իսկ անձեր որ համարձակեցան Պուլկարիոյ թերթերուն մէջ «հայ Մունէ-Սիւլլի» անունով այդ անկերպարան ու անկազմ արարածը որ իր դէմքէն ուրիշ ոչինչ ունէր. և Բարիզի Հայերը որ գիտական և գեղարուեստական ճիւղերու մէջ շատ աւելի լուրջ տաղանդ ու աշխատութիւն ցուցնող հայ երիտասարդներ երեսի վրայ ձգած են, ու է օգնութիւն չխնայեցին այդ երկդիմի պարունին որ գիշերները կ'երթար իր ծամածուծութիւններով վիբենք գուարճացնել: Մենք ամէն ջանք թափեցինք համոզելու համար ֆալֆայեանը որ ետ կենայ իր բեմ ելլելու որոշումէն, մէկդի դէռ բարիզցիներուն ինքզինքն իբրև մեծ արուեստագետ քշելու անբորոյականութիւնը և ամբողջ եռանդը նուիրէ աշխատելու և կազմուելու թիֆլիսի հայ բեմին համար: Մեր յորդորները ոչ մէկ ազդեցութիւն չունեցան: Եւ իմացանք յանկարծ որ այս մայիս չի երկուրը ֆալֆայեան թիֆլիսի երեք վերջին արարուածները պիտի խաղար մէկ քանի Չերանոսցի արուեստագետներու հետ Պատիմիկի թատրոնին մէջ: Երեկոյթին յայտագիրը, ինքնին, խար-

դախութեան և լիրը ստախօսութեան հրաշակերտ մըն էր և կը բաւէր հասկցնելու թէ գործ ունէինք պարզ խաչագողի մը հետ. այդ յայտագիրը, ուր մեր ֆալֆայեանը baron Calfayan ի կերպարանափոխուած է, կը պարունակէ հետեւեալ ծանօթութիւնը. «Նշակաւոր հայ ողբերգուն կը խաղայ Շէքսպիրի խաղերը, որոնց մէջ, ի թուրքիա, վայրագ ջարդերէն առաջ, որոնց զսհերէն մէկն է, իր անունը նշանաւոր դարձուցած է... ևն...»: Արդ, ֆալֆայեան երբեք ու է դեր կատարած չէ թուրքիոյ մէջ, թիֆլիս չնչին դեր մը խաղացած է միակ անգամ մը՝ մեկտուածի մը մէջ, ու ու է հաւածանք չէ կրած ճաճիկներէն: Այսպէս, բացարձակ ստութեան մը վրայ հիմնուելով, շահագործելով հայ ժողովրդին կրած դժբաղդութիւնները, այդ ֆալֆայեանը գացեր է բարիզցի հարուստ ընտանիքներու, քննադատներու, արուեստագետներու պատմեր է թէ ինքը Պուլկարիոյ թատրոն մը ունէր ուր Շէքսպիր կը խաղար, թէ թուրքերը իր թատրոնը ալրած են, իր բոյրը պղծած են, մայրը կտոր կտոր քրած են, հայրը խողխողած են, և ինքն ալ լեռները ապաստանած՝ քառասուն օր խոտ ուտելէ յետոյ շունչը Բարիզ առած է... Այս ամբողջ վիպասանութիւնը իմացանք Յուանիսք Սառսէէն, որուն այս բողբոք բառ առ բառ կ'լլեցուցեր է: Զկրնալով երեակայել թէ այսպիսի պատմութիւն մը կրնայ ծայրէ ծայր ստատ ըլլալ, Սառսէն յուզուած ու համակիր, էլեր եկեր էր ներկայացմանը. եկեր էին նաև բաւական թուով անձեր Բարիզի բարձր ընկերութեանէն...

Զենք կրնար աչքով չտեսնողներուն բացատրել թէ ի'նչպիսի ճիւղաղային մասխառնութիւն մը եղաւ այս թիֆլիս... Երեակայեցեք թունաւորուած կապիկ մը, որ կը գալարուի, կը կաղկանձէ, կը ցատքբաժէ, կը փեթառուի, ու կ'ունայ... Լէտլէտլ է պիճի շալվարի մը մէջ՝ վտիտ, երկայն, ուրուականային, աչքերը պատուհաններու պէս բացուած, դէմքը այլանդակաւոր զարուած՝ ցաւազին ու ծիծաղելի ծամածուծութեամբ աշխ անձնուրուն որոնց սիրաբէտ գալու ժօս է, այդ մղձաւանջի հրէշը երեք ժամ անդադար զուց ու խառնաց անանուանելի լեզու մը որ աշխարհ կը նմանէր հայերէնին որչափ արջ մը Պեղվետերի Այդոնին... ներկայ օտարները նախ անհոգեցան, յետոյ զգալով որ միմտի մը ծուղակը ինկած են, կոկորդալին քըքքիջներով իրենց վրէժը լուծեցին... Տասնեակ մը հայ ձեռքեր չամչցան ծափահարել այդ գիւհաբար, չմասնակցող որ մեղսակիցներ կը հանդիսանային հայ ցեղին արժանապատուութեանը դէմ Լարուած անլուր ոճի իր մը:

Աւարտին, Սառսէ, զայրոյթէն կարմրած, «կինո' Լ, կինո' Լ» (քարակետ) կը պոռար: Մենք պարտք համարեցինք երթալ ծերունի քննադատին յայտարարել թէ այդ ֆալֆայեանը ուրիշ բան չէր բայց եթէ մեծամալութեան յիմարութեան րուսուած ցուազար մը ըլնէր, որ այդ արարածին և հայ լեզուին ու արուեստին միջեւ ու է յարաբերութիւն չկար, և խնդրեցինք որ իր քրոնիկին մէջ հաճի չյիշատակել այս տխուր արկածը: Պիտի գիտնանք հարկաւոր միջոցները ձեռք առնել այս խայտառակութեան կրկնուիլը արգելելու համար:



ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ .

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՒՆԸ

Բարից , եգիպտոսնակ Հայութիւնը նուպար Փաշայով կը ճանչնայի , եւ լոկեւամբ Թագւոր , Արթին եւ Տիգրան փաշաներով , Ռէիզեան պէյերով միայն գիտէի : — Հոս եկայ եւ հայ կեանքին ու ընկերութեան վրայ տեղեկութիւններ հարցուցի . վարուց կամ նոր հաստատուած գաղթականութիւնը հսկայաքայլ ստաջ գացած է : Ողջ եւ ուղիղ մտքեր , եւ ունեւուն սրտեր , ճշմարիտ հայրենասէրներ , Մայր-Երկրին ու լքեալ օճախին վրայ աչուրնին ու սրտերնին յառած՝ հոս բոյններն շինած են եւ երթալով զայն կը լայնցընեն , կը ճոխացընեն . հանրային գործունէութեան տենդ մը իրենց սրտերը կը վառէ : Որբանոցներ , արհեստանոցներ , հիւանդանոց , հայկական մատենադարան , կրթական հաստատութիւններ , վարժարաններ , ահա գեղեցիկ ու ահագին ծրագիրը զոր գծած են , որուն վրայ կ'ապշխս ու կը զմայլիս եւ որուն իրաւործումը իրենց աչքը չի վախցներ : Ինքնավատահ Հայեր են ասոնք որոնք Եգիպտոսի պէս միջազգային երկրի մը մէջ կը գործեն , կը ճգնին , կը մաքառին Հայութեան արժանի փայլ մը , բարձր գիրք մը տալու համար . — եւ պիտի յաջողին : Արդէն ճարպիկ ու գործունեայ վաճառականներն սկսած են յաջողութեամբ մրցիլ յոյն , հրէայ եւ սուրիացի վաճառականաց հետ : Կը պարծիս հայ ճարտարագէտներու հմտութեանը վրայ որոնք շինութեանց ու երկրագործական ճիւղերուն մէջ ամենուրեք կը սփռեն իրենց գիտութեան ու հանձարին արգիւնքը :

Պիտի լսես հայազգի բժիշկի մը անուն որ հազիւ հասած ու տեղաւորուած՝ արդէն սկսած է եւրոպացի եւ հայ գաղութին մէջ իր բժշկական արուեստը գերազանցօրէն կատարել , վայելելով համատարած հոշակ մը : Պիտի ճանչնաս կիլիկեցի հայ փաստաբանը որ երկու տարուան մէջ առաջնակարգ տեղ մը բռնել գիացաւ դատարանաց մէջ եւ պիտի հիանաս երբ պատմեն յեղի թէ այդ Հայր Եգիպտոս գտնուած պահուն՝ ֆրանսերէն լեզուին գրեթէ բոլորովին անգիտակ , երեք ամիս չարաչար աշխատելէ ետքը կրցաւ Ստան Ստեանին առջիւ իր առաջին գատը ֆրանսերէնով պաշտպանել ու վասակիլ :

Այսպիսի երեւոյթներ հայկական հրաշքներ են որոնք կը ճեղքեն կը բանան սուղած եւրոպացի բերանները :

Եգիպտոսնակ հայ գաղթականութիւնը Հայութեան մեծ յոյսերէն մին է որմէ Հայրենիքը ի հարկին լիուր բարիքներ կրնայ սպա-

սել ու ստանալ : Չվհատի՛նք , փոքրիկ Հայութիւնը մեծ է . չվհատի՛նք , ու պաշտենք Հայութեան սրբազան ծառը որուն արմատը խորունկ ու բունը հաստատ է : Անոր կտրտուած չորս գին ցիրուցան ճիւղերը ուր որ իջնան խորախարխախ արմատներով վերբուսին կը ծլին կաղնիներ կը դառնան , կ'աճին կը բարձրանան ու չորս գին շուքերնին կը տարածեն :

Սփոփանքներ շատ ունեցայ հոս .  
 Լուութեան քողին ներքեւ բարիք բաշխող մը ճանչցայ , վերջին ջարդերուն վրան լացող մը , երկու թեւերը լայն բացած « եկէ՛ք , սիրելիներ , եղբայրներ , թշուա՛ն արեւակիցներ , եկէ՛ք » ըսող սիրտ մը ճանչցայ . պատմեմ ինչ որ լսեցի :

Պէտք է գիտնալ որ Եգիպտոսի մէջ ծխախոտի վաճառականութիւնը ատենօք բոլորովին Զուռաց ձեռքն է եղեր . Հայ ըլլալով թերեւս մէկ կամ երկու հոգի հազիւ գտնուէին : Օր մը սակայն հայ անուն մը սկսաւ լըսուիլ . կամաց կամաց , պահ առ պահ այդ անունը աւելի ուժով հնչեց , սաստկացաւ , մեծցաւ ու վերջապէս չորս գին բռնեց , կաղնիին շուքին պէս զոր վերեւ յիշեցի . այդ անունը այսօր թէ հայ եւ թէ եւրոպացի , յոյն , սուրիացի եւ ընդ ֆէլլահ Եգիպտացիներէ անխափ սիրուած , յարգուած անուն մըն է եւ այդ անունն է Մաթոսեան : Այժմեայ Եգիպտոս մտած հինգ միլիոն ծխախոտին մէկ միլիոն երեք հարիւր հազար քիլոն , այսինք մէկ չորրորդէն աւելին , Մաթոսեան եղբարք են որ կը ներմուծեն Եգիպտոս : Յիշեմ նաեւ այս առթիւ հայազգի առաջնակարգ վաճառականներէն այնքան աղնուասիրտ ու համակրելի կամսարական եղբայրներն եւ ուրիշներ , ինչպէս Սանոսեան , Մեղքոնեան , եւ այլք , որոնք Մաթոսեանց հետ գրեթէ ամբողջապէս Եգիպտոսի գիւղերուն ծխախոտ կը հայթայթեն , ուր յոյն կամ սուրիացի եւ ուրիշ վաճառականներէն եւ ոչ մին կրցած են աւսոնց մրցակիցիլ :

Սակայն խնդիրը հոն չէ .

Սիրաս յուզուած լսեցի Պ . Մաթոսեանի ազնիւ եւ օրինակելի վարմունքերը հայ փախստականներ , գաղթականներ հալածեալ թըռչուններու նման սկսան Եգիպտոս թափիլ . բոլոր հայ Եգիպտացիները ձեռքերնէն եկածը ընելու աշխատեցան . թաղականներու ջանքերուն շնորհիւ եկեղեցիներն ու դպրոցները եւ գերեզմանատունը ուր հապճեպով փասաչէն ստակներ հառուցած էին , փախստական գաղթականներով լեցուեցան որոնք ըստ կարելւոյն հոն կը կերակրուէին . սակայն վիճակնին սասնկ չէր կրնար տեսիլ :

Պ . Մաթոսեան , սրտին ձայնին հետեւելով , առանց իր շահերուն փափառքին ականջ կախելու , հետզհետէ ֆէլլահները իր ծխախոտի

գործարանէն հանեց ու Հայեր գործածեց :

—Սակայն , էֆէնտի , Հայերը ֆէլլաւին չափ ածան աւուրչեքով չեն կրնար աշխատել :

«Վնաս չկայ :

—Հայ գործաւորները ամէնի են , էֆէնտի , գործատունը կարող չպիտի ըլլայ բանիլ :

«Վնաս չկայ :

Այսպէս , առանց իր իրական վնասը տեսնել ուզելու , «Վնաս չկայ» ըսելով , այդ Հայը չորս հինգ հարիւր հոգիի մօտ Հայեր իրր գործաւոր , գրագիր , ծառայ ու խանութպան գործածեց զանոնք անմիջական չքաւորութենէ ազատելով :

Այսօր Մաթոսեան եղբարց գործարաններուն մէջ մինակ սիկարեք շինողներուն կէսէն աւելին Հայ են եւ այս Հայերուն մէջ կան շատեր որոնք երեք տարիէ ի վեր միայն հոն աշխատելով իրենց հետ բանող արաբ . յոյն եւ սուրիացի գործաւորներէն աւելի վարպետ կըրցած են ելլալ : Ասոնց մէջէն քանի մը արդաքներ կան տասնըչորսէն տասնըվից տարեկան որոնք մինակնին , մին (որուն հայրը կամ անդրանիկ եղբայրը սպաննուած էր վերջին աւսելի ջարդերուն մէջ ,) այսօր պատաւ մայր մը կամ քոյրեր կը հոգան : Ի՛նչպէս չհիանամ , ի՛նչպէս սիրտս չսփոփուի այսպիսի միւթարիչ տեսարաններու առջեւ : Անձամբ Մաթոսեան եղբայրները ճանչնալու հաճոյքը ունեցայ . երկարօրէն խօսեցայ անոնց հետ ջարդերու վրայ , փախստականներու եւ թշուառ պանդուխտներու խօսքին չորս կողմը դարձայ , հեռուէն մտաէն ահնարկութիւններ քրքրելու անոնք կը լռէին :

—Անգճե՛րը , կ'ըսէր միայն Պ . Յովհաննէսը , անդրանիկը , ու գլուխը ախորժէն կը շարժէր , ու զէմքը ցաւով կը գրոշմուէր . սակայն , բառ մը չէր ելլար բերնէն «սա ըրինք , նա ըրինք» ի նման :

Եւ սիրեցի ես այդ մարդը սրախ խորէն ու ամբողջ ազգին կողմէն :

Բարիք ընելը դժուար չէ եւ Հայը միշտ կը պարծենայ իր կոթող մը , չէնք մը , արձան մը , Աւիրայի տիտղոս մը կամ եկեղեցւոյ վրայ քանդակուած անուն մը գայն կը յիշեցնէ . հապա ո՛րքան հիացում պէտք է ունենալ անոնց համար որոնք համեստ բուրթեան քօղին ներքեւ կը գործեն առանց փառքի ճանաչի մը սպասելու , միշտ միայն իրենց սրտին թելադրութենէն :

Մաթոսեաններ եւ անոնց նմանողները ուրոնք անձանօթ մնալ կ'ուզեն , փառքէ աւելի՛ յարգանքի արժանիքը կը վայելեն մեր սրտին մէջ ուր անուանին քանդակուած կը մնայ , ինչու որ անոնք համեստութեան Աւիրայաներն են :

Ինչո՞ւ այսքան սիրեցի եղբայրս ուր սակայն սակաւ աչքը կախ գետնին գամուած , մտածող ու արտում հայ պանդուխտներ տեսայ

որոնք , դառն ճակատագրի դատապարտուած , ախրութեան գծագրուած թեւեւ յուսահատութեան գրոշմը կրող նայուածքնին կը ձգեն անցորդին վրայ որուն հայ ըլլալը սրտերնին կը գուշակէ :

—Ի՞նչն ալ , եղբա՛յր . . . . . ահա այն հարցը որ կը կարգայ նոր պանդուխտը եգիպտոսի հայ նայուածքին մէջ :

Ամեննիւս որ ձգած ենք Մայր-Երկիրը , Հայութեան տխուր հոգիէն նշխար մը առած տարած ենք հետերնիս . եւ հայ աչքին մէջ , այնքան սիրուն ու թաւչեայ այդ նշխարը նոր փայլ մը դրած է :

Հայ Տխրութիւն . . . . . մարա՛ծ օճախ , կործան՛ երգիք , անդէ՛ն մորթուածներ , արեան հո՛տ . . . ուր սակայն կարծես երու մահը վրէժի ծարաւ քօղի մը ներքեւ , կը մռնչէ , յօնքեր կը պստէ , կուրծքեր կ'ուռնցնէ . . .

Հայ գաղթականներու մէջ հոս պիտի հանդիպիս նաեւ Մամաթիացի նորարոյս պիտով քսանամեայ երիտասարդին , Մշեցի յաղթանազամ բեռնակրին , Տիվրիկի , Սերաստիոյ , Տըրապիզոնի խրոխտ քաջերու , Չէյթուսի , Մարաշի , Սասնոյ լեռներէն եկող յեղափոխականին , Վանայ , Կարնոյ լեռնամէջներու յանդուգն արծիւներուն . . .

Ի՛նչպէս չսիրէի եգիպտոսը .

Չայնը հնչեց երգը մի Հայոց լեռներէն  
Թունդ թունդ ելան Հայոց սրտեր զէնքի  
չարժումէն .

Պաշտելի՛ երգ զոր ստէպ երգեցի իրիկնաւ զէմին , ման գալով աւազուտ ծովափին վրայ Աղեքսանդրիոյ արեւելեան նաւահանգստին որ լքեալ ու ամայի է , ուր միայն ձկնորսներու լոխն նաւակներ կը սահին հեռուն գրոշմու հորիզոնին վրայ իրենց առագաստներուն գորշ ստուերագիծը , եւ ուր իրիկուն մը տեսայ քարերու կոյտի մը վրայ հոտած մէկը որ անշարժ՝ աչքը հեռուն՝ կը մտնար . գլուխը առախնի մը . . . Հայ էր . անշուշտ նոր եկող մը . օդը գաղջ էր եւ քաղքին սղմուկը կը մարէր հոն : Մովեզրին ստաղները քայլերս կը խղզէին եւ անշուղ յատաճապայ , մօտեցայ անոր . սակայն արախնին անշարժ կը մնար , ճակատը ծովին հեռաւորութեանց անշուղին մէջ խորատուգեալ :

Հայ տխրութեան ոգին էր ան , որ լեռներ , ձորեր ու սարեցու վրայէն սուրբալով եկամ թառած էր հոն քարերու կոյտին վրայ :

Կը մտնար , կը հառաչէր արախնին . զեռ նոր հասած , արդէն կ'երագէր վերագառնալ երկիր . հոգին կը հեռուէր շողմուսներուն հեռաւոր ծուխին , հորիզոնին զօրութեան մեծ պատին վրայ դրոշմեալ թեւատարած ուրուական առագաստներուն , ու յետոյ կ'անցնէր ալիք-ալիք փրփրակատար տարածութիւններէն անդին , ուր ծովու ու երկնից միջեւ գի-

չերներ օրեր կ'ալեկոծէր մահուան վտանգով . փոթորիկներ , գոռում գոչում թնդացուցին ականջը . . . . . եւ ահա բանասարկութիւն : փախուստ , վտանգներ , աւաղակի կեանք , ճիւղ արտի , ծիռոց աւերակներ , Տաճիկն ու Գիւրաք , գաշոյնի փայլ , սուլող գնդակներ , արիւն ու գիւակ . . . վրէժի գոչեր խոժոռոցուցին աչուրները . . .

Վերադա՛րձ , վերադա՛րձ . . . ահա ներքին ճիշը որ իրանն ու թոքերը կ'ուռեցնէ . ոգին կը սառնուի . վերադա՛րձ դէպ ի հոն ուր սրբաներն թողած ենք . վերադարձ դէպ ի անէծքի երկիրը ուր Յոյսը եթէ երբեք ծնի իսկոյն կը խեղդուի , ուր ողջերը մահուան հետ կը խաղան եւ ուր մեռելները այնքան շուտով կը մոռցուին . . . վերադա՛րձ , վերադա՛րձ դէպ ի քու ծոցդ , ո՛վ արտատուքի օձախ , ուր դառնալ չարչարուիլը , մաքառիլն ու մեռնիլը կը նախընտրէ Հայր քան թէ օտար պապաութեան մէջ թափախի :

Գահիրէ

Խիր-ԵՐՕ



### ՆԵՐԿԱՆ

— 00 —

Նոր ձգնաժամ մը կ'անցընէ մեր ժողովուրդը այս վայրկեանիս . կոտորածէն յետոյ , Սովը Երկրորդ ազէտքը՝ արգիւնք առաջնոյն : Եւ երկուքն ալ կազմակերպուած նոյնսեւ Ձեռքովը որմերցեղին ջնջման ծրագիրը ստորագրեց : Ու Սովին հետ Հալածանքը , անընդհատ , խուլ բայց յատուց խաղաց , ու սխտեմական : Հազարակցութիւնները բրտօրէն կարուած , կեանքի ամէն ճիգ , առեւտուրի , գործունէութեան , վերանորոգման ամէն փորձ խափանուած : Բոռն սերը աւելի ծանրաբեռն քան երբեք հայ հեծեծանքներով : Գիւրտերը սանձարձակ , պաշտօնեաները բարբարոս , զէնուորները կատուած . եւ այդ ամբողջ վոնմակը՝ մեր խեղճ ատուած , ու վախցուած , ցեղին գէմ աւտամնացից : Եւ ահա որբանոցներն իսկ կը փակուին , օտար պաշտպանութեան այգ տարրական նշանը կը քանդուի , ու հարիւրաւոր սպեկներ հովուին կը տարողներն : Թշուառութեան համապատկեր մըն է , որուն առջեւ ամենէն յամառ , ամենէն անվհատ լաւատեւ սութիւնը կը տկարանայ . եւ տխրութեամբ կը յիշեմ խանդի ու հաւատքի բողբոջն ուր , մէկ քանի կարեւոր ունշանակալից երեւոյթներու առջեւ , հաշուի գնելով բարոյական շա-

հերը որոնք ծնան մեր երեկուան ազէաքներէն , ու գնահատելով այն կորուրը զոր մեր ցեղը կը ցուցընէր իր կրած կորուստը դարմանելու , մղուեցայ կարծել թէ , հակառակ կորուստին մեծութեանը , հակառակ պայմաններուն խախուտութեանը , այդ ցոյց տրուած կորուրը , արտաքին բարոյական աշակցութիւններուն վրայ կրթնած , պիտի յաջողէր ցեղին կեանքը վերանորոգել , սպասելով ապագայ արմատական լուծումներուն : Հիմայ , բոլոր չարիքները կը միանան , բնութեան ու մարդոց դաւերը կը գործակցին մեզի գէմ : Եւ այս տագնապը թերեւս աւելի վտանգաւոր է քան առաջինը , որովհետեւ սի կ'անցնի մութի մէջ , խուլ գալարումով մը , խեղդուկ հեծեծանք մը միայն հասցնելով մինչեւ Եւրոպան որ , իր հաշիւները կարգադրուողապաձ , մտացի ուշագրութիւն մը լոկ կը դարձընէ այդ լուութեան մէջ սագրուած ու ճիրին :

Այս ոտխ ուժերու միահաղոյն յարձակմանը առջեւ , ի՞նչ կ'ընենք մենք : Ի՞նչ կ'ընեն մենէ անոնք որ ցեղին շահերուն պաշտօնական կամ անպաշտօն ներկայացուցիչներն են :— Գարչելի ապիրատութիւնը կամ զարհուրեցնող անգիտակցութիւնը զոր ատոնք կ'ընծայեն , ազէտք մըն է այլապէս վտանգաւոր քան արտաքին չարիքները որ մեր վրայ կը խուժեն : Պուլիս , մեր ազգային իշխանութիւնները վատութեան սանդուխի մը վրայ կը գտնուին , բարձրագոյն աստիճաններուն մօտեցած . պատրիարքը փոր մըն է միայն , եւ Արթին Փաշան քսակ մը լոկ . երկուքը մէկանց , Սուլթանին ուշիմ գործակիցներ՝ ջնջելու համար ինչ որ կը մնայ մեր իրաւունքներէն , մեր յոյս սերէն . Օրմանեան ըողորականութեան տաւաճումը արգիլելու պատրուակով , Սուլթանին առիթ կուտայ անգլո - ամերիկեան քաղաքակրթիչ ու պաշտպանողական զօրութիւնը Հայաստանէն վտարելու : Օրմանեան ու Տատեան կը փորձեն մէջ խաղցնել ազգային սահմանադրութիւնը՝ դայն վերաքննելու երեւոյթին տակ , ու Սիւրի Աթուոր ջնջելու գաղափարը կը ջանան իրականացնել : Եւ Վանէն ու Ձէյթունէն եկած անթութեան ձայներուն , կրօնափոխական պայթակղութիւններուն առջեւ , Պուսոյ կզերը գանդաղ ու աստուածաբանական վրդովմուռնքի մը զգուելի շարժումը ուրուադրուծելով կը շատանայ :

Արտասահմանի մէջ , քանի մը ազնիւ խումբակներու եւ մէկ քանի անձնուէր անհատներու ճիգերուն ջրով որոնք անվկանգ կը շարունակուին , այն սրտաշարժ ու կազդուրիչ երեւոյթին քով որով օտար երկիրներու մէջ հայ գաղթականութեանց ոչ-ունեւոր դասակարգերը իրենց փութկոտ ու սրտաբուխ հանդանակութիւնները կը հասցնեն Ձէյթուն կամ Վան , կը տեսնենք եսամուլ անտարբերութիւնը մեր թրջահայ հարուստներուն որոնք իրենց միլիոններէն մէկ երկու ֆրանք հազիւ կը փրցնեն զժկամակ շարժումով մը , (միայն երեք հազար ֆրանք Բարիզի Հայերէն!) մինչդեռ իրենց պարտքն էր չէ թէ ողորմութիւն զրկել իրենց հազարաւոր անօթի ազգակիցներուն , այլ զոնողորմ յանձն առնել , որպէսզի ազգին ընդհանուր մարտիրոսութեանը մէջ գոնէ բաժին մը ունենային , քիչ մը իրենց զբամէն զատուելու տեսակ մը շարչարանքին ենթարկուելով : Կը տեսնենք մահաւանդ , անփոփոխ , եւ թերեւս աւելի բիրտ քան երբեք , զճուճ կըքի պայթումներ , անամօթ բարքերու յայտնութիւններ , սղայականութեան եւ անբարոյականութեան շղթայազերծում մը , «ազգասիրական գործունէութիւն» անունին տակ :

Լրագրական անիմաստ աճում մը արտասահմանի գաղթականութեանց մէջ վէճի եւ պառակտումի շարժառիթ կը դառնայ եւ իր մեծամասնութեանը մէջ՝ անխոհեմութեան , իմաստակութեան եւ ինքնախաբուծեան զպրոց մը ժողովրդին համար : Հայրենիքը ազատելու յաւակնութիւն ունեցող այդ քուրջի կտորներուն մէջէն , կան որ սարսափ կը պատճառեն իրենց ապուշութեան ու վնասակարութեան խոշորութեամբը : Միմիայն աղմուկ հանելու եւ զբամ վաստկելու հետամուտ , ատոնք կը հրատարակեն ամէն տեսակ յիմարութիւններ , առանց քննելու , առանց հետեւանքը մտածելու : Վերջերս , ատոնցմէ մին , Աթէնքի Միւռքիւնը , ամենայն լրջութեամբ կը հրատարակէր կատակասէրի մը իրեն զրկած մէկ նամակը որով որպէս թէ Տէլքասէ , Ֆորի յուղարկաւորութեան հանդէսին առիթով տրուած խնջոյքի մը մէջ , ո եւ է հայ պատգամաւորի մը արտասանած մէկ ճառին վրայ , (պատմութիւն մը որ բոլորովին շինծու է ,) կ'ելլէ կը պատասխանէ թէ հայկական խնդիրը պիտի լուծէ մէկ քանի ամիսէն (!) . եւ Նիւ-Եորքի Տիգրիսը , զոր կ'ուզէի աւելի խոհական

տեսնել , իրական լուրի մը պէս կ'արտատպէ այդ շոշորութիւնը : Այս օրերս նոյն այդ Միւռքիւնը կը հրատարակէ ուրիշ լուր մը որուն համեմատ հայ հարուստ մը որպէս թէ առաջարկած է Միւռքիւնին՝ 100,000 ոսկի զնել անոր տրամադրութեան ներքեւ՝ եթէ հայ յեղափոխական մարմինները միանան եւ իր ուղածին պէս գործեն : Ահռելի բան է տեսնել որ մեր «հայրենասէր» օրագրողները զեռ չեն գիտեր թէ արտաքին գործոց նախարար մը յի կրնար երբեք , խնջոյքի մը մէջ , ո եւ է Հայու քաղաքական յայտարարութիւն մը ընել , եւ թէ զեռ չեն հասկնար որ , նոյն խկ եթէ անակնկալ դիպուածով մը հայ հարուստ մը գումար մը նուիրէ ազգային գործին համար , այդ տեսակ իրողութիւն մը հրատարակելը ամենէն գարշելի ոճիբը պիտի ըլլար ինչնին : Ու Շարժուին անտանելի «Վարդօ» գիշեր ցորկ կը մտմտայ միջոց մը գտնել որպէսզի Պոլսոյ հայութիւնը ջարդել տայ . . . Ու Դրոշակի խմբագրութիւնը Կառիպալտիին կը դիմէ , որպէսզի , մէկտեղ Վան երթան , թերեւս , սովաւ մահներուն մէջ քանի մը պօմպ նետելու . . .

Այն խել մը բաղդախնդիրները որ «գործիչ» կ'անուանեն զիրենք եւ կը խլրտան այս շարագուշակ լրագրութեան ետին , աւելի քստմնելի են քան զիրենք փառաբանող լրագիրները : Այս օրերս Բարիզ հասած անձ մը կը հաստատէր թէ Պուլկարիոյ բոլոր քաղաքներուն մէջ տասնեակներով երիտասարդներ կան որոնք ամսական կ'առնեն «տուրը գործ» ինչաչուոյն , որոնք յեղափոխութիւնով կ'ապրին . . . եւ այդ վարձուած հերոսներն են որ Ֆիլիպէի եկեղեցին գրաւելու կ'երթան զէնքով , կամ չեմ գիտեր որ քաղաքին Վարդանանց հանդէսը ատրճանակի մրցման կը փոխեն . . . Իսկ իրենցմէ անոնք որ երկրին մէջ կ'աշխատին , կը խոստովանիմ թէ որոշ սեղեկութիւն չունիմ այն եղանակին վրայ որով կը կատարին իրենց հայրենասէրի պաշտօնը . բայց եթէ հաւատանք Շարժուին տուած սեղեկութեանց , այդ պարոնները գործելու շատ աւելի տխուր մեթոտ մը սկսած են որդեգրել . «Անոնք , կը գրէ Շարժուին Վանի թղթակիցը (7 սպրիլ) որ երբեմն մասնիչները կ'աշխատէին վերցնել , իրենք սկսեր են մասնութիւն ընել» : Ու Դրոշակը վեց պետութիւններուն կը զրկէ յայտարարագիր մը , որով կը սպառնայ աշխարհիս խաղաղութիւնը տակնուվրայ ընել եթէ Հայոց ուղածը չկատարեն . . . եւ բոլոր

այս մարդիկը չեն տեսներ թէ Մակեդոնացիք, որոնք ունին խնդիր մը շատ աւելի ծանօթ, իրազործելի, եւ Պերլինի գաշնագրին մէջ շատ աւելի որոշապէս գծուած քան մեր խնդիրը, մինչեւ այս վայրկեանս ոչ մէկ յիմարութիւն չգործեցին, եւ՝ մենէ շատ աւելի ուժ ունենալով հանդերձ՝ կը սպասեն; որովհետեւ կ'ըմբռնեն թէ քաղաքականութիւնը անըպաս է իրենց եւ չեն ուզեր յախուռն շարժումներով ջարդուելու ենթարկուիլ:

Ահաւասիկ մեր տխուր պատկերը: Ահաւասիկ մեր դէմքը՝ ներկային մէջ: Ահաւասիկ ինչ որ կ'ընենք մեր Հայրենիքին դժբաղդութեանը առջեւ: Եւ ասիկա արամաբանական շարունակութիւնն է երէկուան սխալներուն, երէկուան անխղճատութիւններուն: Այն դառնութեան ու անվերապահ անկեղծութեան յօդուածը, որով մատնանիչ ըրեր էի մեր երէկուան գործունէութեան հիմնական սխալները, առիթ տուաւ որ ջրհանկիրի անհատնում քնարերգութիւն մը պոթկայ չորս դիս: Պիտի շատանամ խոստովանելով թէ այդ ամբողջ կանչուընտուըը զիս ոչ զարմացուց ոչ ալ վրդովեց: Երբեք ինծի նպատակ չեմ ունեցած, գաղափարներս արտայայտած ատենս, հաճելի ըլլալու եւ է կուսակցութեան մը, կամ ո եւ է անհատի մը. յամաս միամտութիւնը ունիմ միմիայն օգտակար ըլլալ ուզելու: Յօժարակամ ետ պիտի առնէի բոլոր ըսածներս եթէ սպացուցած ըլլային ինծի թէ սխալած եմ մտածելու եղանակիս մէջ: Ինծի դէմ գրուած յօդուածները չփոխեցին դատումս: Ընդհակառակն:—Մտածումս խեղաթիւրել եւ զիս ներկայացնել իբրեւ թրքամոլ (!), կամ հայ հարուստներու արձագանդ (!!), կամ պահպանողական ու հակառակորդ՝ հայկական շարժման (!!!) տխմար ստախօսութիւն մըն է պարզապէս, եւ չի թեթեւցներ իրական պատասխանատուութեան բաժինը զոր ունին տեսակ մը պարոններ մեր ցեղին քայքայման գործին մէջ: Ես անցեալէն ի վեր, դարերու մէջէն, ցուցուցած եմ ճակատագրական հակումը հայ ցեղին դէպ ի Արեւմուտք, դէպ ի յառաջգիմութիւն, եւ ինծի համար ամենէն բնական երեւոյթն է որ հայ ժողովուրդը անջատուէր զինքը պաշարող մահմետական բարբարոսութենէն եւ ցանկար ունենալ ուրոյն կեանք մը, ուրոյն քաղաքակրթութիւն մը, եւրոպական քաղաքակրթութեան կապուած:

Այդ նպատակին հասնելու համար, ժողովուրդը դարէ մը ի վեր կը նախապատրաստուէր. այդ նախապատրաստութիւնը բնական, գեղեցիկ շարժում մը եղաւ, եւ ան ինքնին պիտի ունենար իր վերջնական կազմակերպութիւնը եւ բնական կերպով պիտի փորձէր իր վերջնական նպատակակէտին հասնելու ճիգը: Եթէ —միշտ պիտի կրկնեմ այդ տեսնելու եղանակս— քանի մը խակ, անհամբեր ու սղայական մտքեր չհապճեպէին այդ գործը: Մեր դատը չլուծուեցաւ վերջին դէպքերուն մէջ, ոչ միայն որովհետեւ արտաքին պայմաններն անպատէին, այլ նաեւ ու մանաւանդ որովհետեւ մենք խակ էինք, դէչ պատրաստուած էինք մեր գործին, անիրագործելի, տարաւամ ու հակասական ծրագիր մը ունէինք (եթէ կարելի է ծրագիր անուանել զայն) եւ շատ խոշոր յանդուրթիւններու ձեռնարկեցինք՝ առանց ո եւ է դիմագրութեան ուժ ցուցնել կարենալու (բաց ի Զէյթունէն): Ծնշուած ժողովուրդներուն դատը կը լուծուի երկու պայմանով, նախ երբ այդ դատը որոշապէս գծուած է (ինչպէս Կրէտէինը, ինչպէս Գուպայինը), երկրորդ՝ երբ այդ ժողովուրդը իր դատը շահելու համար, չէ թէ մարտիրոսի արիւն, այլ հերոսի արիւն կը թափէ եւ կը ցուցնէ թէ տէրն է այն հողին ուր ազատ ապրիլ կ'ուզէ: Կ'ատեմ (երբեք պիտի չզագրիմ կրկնելէ) գործելու այն անբարոյական մեթոտը որով գործիչներ գողունի կը մտնեն Վան կամ ուրէ քաղաք մը, դէպք մը կը բռնկցնեն, ու կը փախչին, թողլով որ ժողովուրդը ջարդուի, եւ կարծելով թէ այդ ջարդը եւրոպական միջամտութիւն յառաջ պիտի բերէ: Այդ պայմաններուն մէջ, եթէ նոյն իսկ օտար միջամտութիւն յառաջ գայ, ջարդուողին իրապէս նպաստաւոր ո եւ է ձեւ չի կրնար առնել. ասիկա հասկնալու ենք: Եւ հայ ժողովրդին նպատակակէտը օտար գրաւումը (այսինքն ուսական գրաւումը չէ. կալիցին իշխանին վերջին տեղեկագրէն ի վեր այլեւս շատ յստակ կերպով գիտենք, —եթէ հասկցած չէինք մինչեւ հիմայ,— թէ ուսական գրաւումը ինչ կը նշանակէ: Ս կը բռնաբով համակարծիք եմ Պ. Չիբրիանիին, որ Գրոշակի խմբագրութեան կը գրէ նամակ մը, ուր յորդորելէ յետոյ որ միմիայն Եւրոպայի վրայ յոյս չդնեն, եւ ըսելէ յետոյ թէ ճնշուած ազգերու փրկութեան միջոցը ապստամբութիւնն է, կ'ըզակացնէ՝ «Եթէ ապստամբութիւն մը խեղացի կերպով պատրաստուելու մի-

ջոցները ունիք, ինքզինքս ձեր արամազրու-  
թեանը կը գնեմ. » Ժրնէվի («այդուկ»)ները պէտք  
եղած ուշիմութիւնը չեն ունեցած հասկնալու  
համար թէ այդ («խելացի կերպով») սուր քըն-  
նազատութիւն մըն է վարպետ յեղափոխա-  
կանին կողմէն իրենց ուղղուած :

Արդ, ես կը հաւատամ որ հայ ցեղը, եթէ  
կարենանք զինքը կեցնել ահաւոր զանդ-  
թափին վրայ ուր սահեցաւ, կրնայ գծել իւ-  
րեն այն անհրաժեշտ ծրագիրը, որ միակ կա-  
րելին է եւ որ թերեւս իրեն թոյլ պիտի տայ խու-  
սափիլ ձուլումէն ու ջնջումէն եւ իր ցե-  
ղացին գոյութիւնը պահպանել իբրեւ ուրոյն  
աարր . . . Աւելորդ եւ անխորհուրդ կը նկա-  
տե՞ ծանրանալ այս կէտին վրայ : Եւ արդէն  
կը մտածեմ թէ ըսած եմ ամէն ինչ որ ունիմ  
ըսելու : Այս բոլորը կը կրկնեմ միայն ան-  
կեղծներուն, անձնուէրներուն համար, որոնք  
գոյութիւն ունին բազմախնդիրներուն ու  
խենդեբուն քով . երէկ, այդ անկեղծներն  
ու անձնուէրներն էին որ իրենց անհատական  
քաջութիւններովն ու հերոսական մահերովը  
սրտաշարժ պեղեցկութիւն մը գրին այն աղի-  
տութեան ու միամտութեան հիւսուածքին մէջ  
որ մեր երկիւղան գործունէութիւնը եղաւ :  
Դիտեմ որ այսօր այդ դժբաղդ գիւցապ-  
ներուն բազմութիւ ընկերները կան ու յա-  
ջորդները, անկեղծ ու տաք երիտասարդ-  
ներ, որոնք կ'ուզեն գործել, եւ կը  
մղուին այս կամ այն կողմ, չգիտնալով ինչ  
ճամբայ բռնել : Դիտեմ որ անոնց մէջ  
կան նաեւ մաքեր այնքան գիտակից ու խու-  
հական որքան ազատամոլ ու արի. ումանք, հին  
զէպթերու մէջ, հոյակապ ապացոյցներ տուած  
են անձնագոհութեան եւ այսօր իրենց վաս-  
տըկած փորձառութեամբն իսկ կը զգան գործու-  
նէութեան եղանակը փոխելու եւ գործնական  
ու սահմանազժուած ծրագիր մը ունենալու  
անհրաժեշտ պէտքը . անոնք աղմուկը չեն  
սիրեր, լրագրական յօդուածներով, միթիւնկ-  
ներով ու եկեղեցիի կոիւններով, թոռցիկ  
թղթերով ու անհաշիւ յանկարծական յար-  
ձակումներով գործելու գրութեանէն կը խորշին .  
երկիրը կը ծանչնան, եւ կը մտածեն թէ երկ-  
րին գործը երկրին հարազատ զաւակներուն  
կամքովն եւ անոնց ձեռքովը պէտք է կատա-  
րուի . եւ անոնք համոզուած են թէ որպէսզի  
գործը յաջողի, անհրաժեշտ պայման մըն է Եւրո-  
պան ու անոր հոգեբանութիւնը այնքան խորա-  
պէս ճանչնալ որքան իրենց երկիրն ու անոր

մէջ գործածուելիք բոլոր ուժերը : Դիտեմ, կամ  
մանաւանդ կը սիրեմ հաւատալ, (որովհետեւ  
առանց այդ հաւատքին պիտի ստիպուէինք  
վերջնականապէս յուսահատել մեր ցեղէն) թէ  
գոյութիւն ունին այդ սիպարները : «Ատենն է  
որ աւերակներուն մէջէն վաճան Մամիկոնեանին  
հոգին երեւայ» կը գրէ իանցեալ տարի Նոր Կեանի-  
ին մէջ, բաղձալով որ վարպետեան հերոսամուլու-  
թեանէ մը յետոյ, ունենայինք վերջապէս պիւա-  
նազէտ պատերազմի կիսոյն որ վաճանինը եղաւ :  
Լուութեան մէջ մտածող, ուսումնասիրող ու  
գործող այդ Հայերն են որ պիտի տան մեզի  
վաճանը որուն պէտք ունինք : Թող անոնք  
կազմակերպուին իրենց խորհրդապահ ստուե-  
րին մէջ, միացած միմիայն իրենց անձնու-  
րութեամբը եւ զիրենք վառող որոշ գաղա-  
փարովը : Եւ ամէն բան կորուսած չէ :

Մինչեւ հիմա ինչ որ տեղի ունեցաւ, հետուէն  
գիտողի մը համար, ուրիշ բան չէ բայց եթէ  
նախապատրաստութիւն մը ճաճկատանի քայ-  
քայման, եւ մենք Հայերս անգիտակից տար-  
րի պաշտօն մը կատարեցինք այդ քայքայման  
գործին նպաստող ու եւրոպական ուժերուն  
հոն այսօր տարածումը գիւրացիող ու վաղը սի-  
րապետեմը հանդերձող : Եթէ շարունակենք  
նոյն գործը նոյն միջոցներով, եւրոպական  
քաղաքակրթութեան շահերուն ծառայած կ'ըլ-  
լանք, եւ ատի գեր մըն է որ իր գեղեցկու-  
թիւնը ունի : Բայց մեր գերը այդ պէտք  
չէ ըլլայ միայն . մենք իբր ցեղ, իբր ուրոյն  
տարր, կրնանք քաղաքակրթութեան մէջ  
գեր մը կատարել վաղը, եւ մեր ջանքերը  
պէտք է ձգտին ձեռք ձգելու այն պայմանները  
որոնք մեզի թոյլ տան իբր Հայ ապրելու եւ  
գործելու : Եթէ մենք շարունակենք այն  
ճամբան որով քաղցիկք մինչ այսօր, մեր ցե-  
ղին բացարձակ ջախջախումը ձեռք պիտի ձը-  
գենք, ու եւրոպական ուժերը որ մեր մարտի-  
րոսի արիւնին շնորհիւ պիտի գան մեր հո-  
ղերուն տիրապետել, մեզ պիտի կոխ-  
կրտեն, մեզ պիտի ձուլեն, մեզ պիտի հա-  
լեցնեն իրենց մէջ : Անոնց եկած օրը մենք  
պէտք է ներկայանանք իրենց՝ ուժի մը վրայ  
կրթնած : Եթէ մեր ժողովուրդը այս պարզ  
ճշմարտութիւնը չըմբռնէ, մենք դատապար-  
տուած ենք ջնջուելու սուրով ու ձուլումով :

Ա . ԶՊԱՆԵԱՆ



# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Դեռ Խաղաղութեան Դեպարտամենտը չգտուած, զէպքերը կը թուին առաջուց պատշաճիլ այն բաղձանքին զոր Չարը հանդիսաւորապէս յայտնեց եւ որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին բաղձանքն է : Անգլո-Ֆրանսական պայմանագրութենէն, Ֆրանսո-իտալական գաշնագրութենէն, անգլո-ամերիկեան մերձեցումէն յետոյ, հիմա կ'իմանանք որ ամենէն զժուարին, ամենէն կ'նճուտ խընդիրը, բուն մեծ պատերազմին շարժանիւթը դառնալու սպառնացող վէճը, անգլո-ռուս վէճը, սկսեր է համաձայնութեան ձեւով լուծուիլ : Չարին առաջարկութենէն հասկնալով որ Ռուսիա որոշած է պատերազմ չընել առ այժմ, Անգլիա օգտուեցաւ այդ առիթէն եւ ուզեց առկախ խնդիրները լուծել, խաղաղութեան մէջ, բանակցութիւններով . ճարտար վարմունք մըն էր աս, եւ Սուլզպէրիի զէմքը շատ մեծցած կ'երեւնայ հիմայ . անաւասիկ ինչպէս կը թացատրէր իր այդ գործը մայիս 1ին Լորա Քիմպլըրիի հարցումին պատասխանելով . «Այս (անգլո-ռուս) կարգադրութիւնը վիստորապէս երկաթուղիներու մասին է Չիւնստաւանի մեր գործունէութեան դաշտին մէջ . Անգլիան յանձն կ'առնէ չձեռնարկել, եւ Անգլիացիներ կամ ուրիշ զգէ անձեր չքաջալերել որ ձեռնարկեն, » եւ է երկաթուղիի գիծ հաստատելու Մեծ-Պարիսպին հիւսիսային կողմը . Ռուսիան ալ միեւնոյն պայմանը կ'ընդունի Եանկ-Տէ-Քեանկի հովան համար : Ասկից զատ, Նիւ-Չուստիկի գծին նկատմամբ մանրամասնութեան մէկ քանի համաձայնութիւններ կան որոնք բազմաթիւ վիճաբանութեանց առարկայ եղան : Ուժգնապէս կը փափաքէի որ այս կարգադրութեան մասնաւոր պայմանագրութիւններուն ծայրայեղ կարեւորութիւն մը տալու ձեւը չառնեմ . բայց բնականաբար մեծ կարեւորութիւն կ'ընծայեմ այս կարգադրութեան ստորագրուելուն, որովհետեւ ատիկա երկու կառավարութեանց միջեւ բարի զգացումներու նշան մը կը թուի ինծի, եւ ատի մեծապէս շահեկան է : Ինչ որ առաւել եւս բաղձալի է, այն է որ այս բարի զգացումները կարենան քիչ քիչ մեծնալ Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ : Այս կարգադրութիւնը այն արժէքը պիտի ունենայ որ աշխարհի այդ հեռաւոր մասին մէջ կառավարութեանց միջեւ բաղխումի մը կարելիութիւնը պիտի արգիլէ : Ապագայ համաձայնութեան գրաւական մըն է ուրեմն՝ երկայն ժամանակամիջոցի մը համար : Ես հաւատք ունիմ թէ այս կարգադրութիւնը պիտի առաջնորդէ ուրիշ նիւթերու վրայ ուրիշ կարգադրութեանց :»

Եւրոպական մամուլը, կը գրէ Թան այս հատուածը մեկնելով, այս կարգադրութենէն յետոյ կը սկսի ըմբռնել երկաթուղիներու զե-

րը Չիւնստաւանի մէջ կամ, աւելի ճիշդ է ըսել, բոլոր նոր երկիրներուն մէջ : Մենք միշտ կրկնած ենք թէ՛ նոր երկիրներու մէջ, երկաթուղին աշխարհակալութեան ճշմարիտ գործիքն է : Պետութիւն մը երբ ձեռք ձրէ երկաթուղեոյ գծի մը շնորհումը եւ զայն պաշտպանելու իրաւունքը, կարելի է ըսել թէ գրաւած է այդ երկիրը աւելի լաւ քան թէ պատերազմով մը :»

Ապագան պիտի բնէ թէ որոնք են այն «միւս խնդիրները» որոնց լուծուիլը կը յուսայ Սուլզպէրի խաղաղական միջոցներով : Երանի թէ, կը գրէր Նուպար փաշան իր Յուշագրութեանց վերջաբանին մէջ որ գեղեցիկ էջ մըն է, Արեւելեան խնդիրը լուծուէր, ոչ թէ պատերազմով, այլ երկաթուղիներով, այսինքն քաղաքակիրթութեան տիրապետութեամբը : Նուպար երկաթուղիներուն նշանակութիւնը խորապէս հասկցած էր : Լորա Սուլզպէրի պիտի յաջողի՞ Ռուսիոյ հետ համաձայնութիւն մը ձեւացնել որպէսզի երկաթուղին Ասիական Տաճկաստանն ալ կտրէ ամէն ուղղութեամբ եւ բարբաթութիւնը սպաննէ հոն :

Ապասելով ապագային, որ չի կրնար հեռաւոր ըլլալ, այս վայրկեանիս եւրոպական պետութեանց ձգտումները կը շարունակեն մըրքիլ Տաճկաստանի մէջ : Դեռմանիս վերջապէս ունեցաւ Հայտար-Փաշայի նաւահանգիստը : Ռուսիա, Թուրքիոյ պատերազմական տուգանքին սարեկան վճարումը անբաւական նկատելով, կ'ուզէ հինգ վիլայէթի առ բերուն գանձումն ալ Պանք-Օթոմանին ենթարկել եւ այդ միջոցով իր աննելիքը սարեկան աւելի ստուար վճարումներով ընդունել . կը կարծուի թէ Բոնիայի, Հալէպի, Ատանայի, Սվազի, Կասթէմունիի եւ Պոսուսայի վիլայէթները պիտի ենթարկուին Պանք-Օթոմանին : Նոյն ստան, Ռուսիա Երուսաղէմը ուսուցնելու ծրագիրը կամայ կամաց առաջ կը տանի : Անախթէն կը սկսի . հոն ուսուսէր պատրիարք մը (սպասելով ուսու պատրիարքին) ընտրել տալ յաջողեցաւ, հակառակ Պոլսոյ արեւելեան կան յոյն պատրիարքին ընդդիմութեանը . եւ այս տարի Զատիկին 8000 ուսու ուխտաւորներ կային Երուսաղէմ, թիրդով ուսու ծովակալին հետ որուն կ'ընկերանային 20 սպայ եւ 300 նաւազ : Պրանսա ի՞նչ գիրք պիտի բռնէ այս իրեւոյթին առջեւ :

Այս խնդիրները չեն որ իրենց վերջնական լուծումը պիտի ունենան Լա Հէի Դեպարտամենտովին մէջ որ անա մօտեցաւ : Պաշտօնապէս յայտարարուեցաւ առաջուց թէ պետութեանց ներքին խնդիրներով չպիտի զբաղուի, ոչ ալ միջազգային խնդիրներով որոնք գաշնագրով արգէն լուծուած են (\*) : Դեպարտամենտովը պիտի վիճի սպառազինութեանց աճումը գաղթեցնե-

(\*) վերջին պահուն «Մաթէն»ի մէջ կը կարգաւք՝ «Մասնաւոր ընկերակցութեանց առաջարկութիւնները»

լու եւ միջազգային իրաւարարութեան մշտական յանձնարարութիւն մը հաստատուելու գլխաւոր խնդրոյն վրայ : Այս ծրագրին առաջին մասը յաջողութեան հաւանականութիւններ չի ցուցնէր . դեռ Եւրոպայի մէջ շատ կան մտածողներ թէ նոյն իսկ որպէսզէ եւրոպական խաղաղութիւնը անվրդով մնայ , սպառազինութիւնները պէտք է շարունակուին . իսկ Գերմանիա Դեսպանաժողովին կը զրկէ , իր քաղաքական եւ գինուորական ներկայացուցիչներուն հետ , երկու դասախօս , Սթէնկլ եւ Չորն , որոնք խաղաղութիւնը մարդկութեան համար վնասակար կը նկատեն եւ պատերազմի գաղափարին ջերմ պաշտպաններ են . կը տեսնուի որ Լա Ղէի Դեսպանաժողովը գիւտնագիտական վէճէ աւելի բարձր նկարագիր մը պիտի ունենայ , բարոյական նշանակութիւն մը պիտի առնէ : Բայց դեռ ոչ ոք գիտէ թէ ի՞նչ դրական ելք պիտի ունենայ Դեսպանաժողովը : Կարելի չէ ըսել թէ միայն պղատոնական վիճարանութիւն մը պիտի ըլլայ ան : Դիւանագիտական շրջանակներու հետ մօտէն յարաբերութիւն ունեցող անձ մը կ'ըսէր ինձի այս օրերս . «Այդ Դեսպանաժողովին մէջ ամէն տեսակ անակնկալներ կրնան պատահել . ժողովը պիտի տեսէ հինգ-վեց շաբաթ , թերեւս աւելի , եւ որքան ալ որոշուած ըլլայ տեսակ մը առկախ կամ հրատապ խնդիրներով , ինչպէս՝ օրինակի համար հայկական խնդիրը : չղբաղել , անկարելի չէ որ , որ ո եւ է տէրութեան մէկ ներկայացուցիչը , իր կառավարութեան հրահանգովը , այդպիսի խնդիր մը յուզէ , (եթէ ոչ պաշտօնպէս , գոնէ մտերմական խորհրդակցութեանց մէջ ,) իբր միջազգային խնդիր մը , եւ իբր պատերազմի պատճառ դառնալ կրցող խնդիր մը :» Մեր ամբողջ ջանքը պէտք էր կեդրոնանար Եւրոպայի եւ Ամերիկայի ժողովուրդներուն հանրային կարծիքը բորբոքելու ի նպաստ մեր խնդրոյն , որպէսզի կառավարութիւնները , հանրային կարծիքէն ազդուած , մղուէին մեր խնդիրը Դեսպանաժողովին մէջ յիշելու . չորս ամիս առաջ , պէկտեմբերին , կը շեշտէի այս պարտքը զոր ունին Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ հայ ժողովուրդը ներկայացնող անձերը : Կարծելը թէ ո եւ է Հայ մը իբր պատգամաւոր՝ ձեռքը յիշատակագիր մը բռնած՝ Լա Ղէ երթալով , կրնայ Դեսպանաժողովին ներկայացնել հայկական խնդիրը , մանկական ինքնախաբուութիւն մըն է : Եւրոպական հայ գաղթականութիւնները բարոյական պարտք մը կատարած կ'ըլլան իւրաքանչիւրը խնդրագիր մը զրկելով Դեսպանաժողովին , ինչպէս պիտի ընեն ամէն երկրէ ամէն տեսակ խմբակներ . կ'ըմբռնեմ նոյն իսկ որ հայ անհատներ երթան Լա Ղէ՝ խաղաղասիրական ազգային ազատ մի-

պիտի չնդունուին , ուրիշ երկիրներու ներքին կացութիւնը փոփոխելու համար ո եւ է կառավարութեան կողմէ ներկայացուած առաջարկութիւնները վիճարանութեան պիտի չգրուին : Այս որոշումները մասնաւորապէս թուրքիոյ ե Պալքանեան երկրներու համար են :»

թիւններուն մասնակցելու , կամ այնտեղ գումարուած դիւանագիտներուն հետ տեսակցութիւններ ունենալ ջանալու : Բայց այդ ամէնքը ոչ մէկ կերպով կրնան նպաստել որ մեր խնդիրը Համաժողովին օրակարգին մէջ մտնէ : Դրական գործը , անհրաժեշտ գործը որ կայ կատարելու , աշխատիլն է որ Եւրոպայի կառավարութիւններէն մին , իր երկրին հանրային կարծիքէն մղուած , որոչէ իր պատգամաւորներուն յանձնարարել որպէսզի մեր խնդիրը ներկայացնեն Դեսպանաժողովին : Շատ գոհ եղայ տեսնելով որ Ամերիկայի Հայերը զգացեր են այդ պէտքը եւ կատարել են դիմումներ Միացեալ Նահանգներու նախագահին մօտ , թէ եւ շատ մտգոյն , շատ տարտամ աւարական կերպով կազմակերպուած դիմումներ (ինչպէս կը հասկցուի Շարժումը մէջ հրատարակուած Նիւ-Յորքի թղթակցին յօդուածէն) որոնք միջակարգիւնք մը տուեր են , հետեւեցնելով նախագահին մերժողական չոր պատասխանէն : Ուրախ պիտի ըլլայի որ մեր Լոնտոնի ազգակիցները նոյն բանը կատարած ըլլային անգլիական շրջանակներուն մէջ , ուր հողը այնքան պատրաստ է արդէն . մենք այստեղէն դիմեցինք Պ . Սթէնկլին , որուն հայասիրական զգացումներուն անձնապէս տեղեկանալու առիթն ունեցած էինք , եւ խնդրեցինք որ ինքը իր ազդեցութիւնը իւրապա դնէ մեր դատին : Եւ ըրինք մասնաւորապէս ինչ որ կարելի էր՝ Փրանսայի պաշտօնական շրջանակներուն ու շաղթութիւնը մեր խնդրոյն վրայ դարձնելու համար : Իմ խնդրանքովս , Ֆրանքո-հայկական ընկերութիւնը , որուն կազմուելուն սկզբնապատճառ եղան երկու տարի տոաջ Պ . Պ . Մոնիէ , Մառիլիէ , Գիլլեան , Հ . Գառնիան , Յ . Իսքէնտեր եւ այս առգերը գրողը , եւ որ այժմ իր անդամներուն մէջ կը հաշուէ Պ . Պ . Լավիս , Տընիս Գոչէն , Անաթոլ-Լըոուա - Պոլիէօ , Փրանք Բիւօ , Պաոնո ա Ալոնի , կոմս Վանտալ , Վիոյէ , Ժիոի , Պէոառ , Ժան Ռէվիլ , եւն , գումարուեցաւ Լավիսի առնը եւ որոշեց դիմում մը ընել Ֆրանսական կառավարութեան եւ զրկել մանրամասնալ ու բողոքաւոր յիշատակագիր մը Դեսպանաժողովին , եւ նոյն ատեն , հանրային կարծիքը բորբոքելու համար , հրատարակախօսութեանց շարք մը սկսել իսկոյն եւ կարող մը յօդուածներ տալ լրագիրներուն հայ ժողովրդին արգի կացութեանը վրայ : Այս որոշումները սկսան արդէն գործադրուիլ :

Ոչ մէկ ապահովութիւն ունինք թէ այս բոլոր ջանքերը պիտի հասնին լիակատար յաջողութեան մը . բայց կը կարծենք թէ ըրած ենք Փրանսայի մէջ ինչ որ կարելի էր , ամենէն լուրջ եւ կարեւոր ուժերուն միջոցով , որպէսզի Լա Ղէի Դեսպանաժողովին մէջ մեր դատին ներկայացման հաւանականութիւնները բազմապատուին :

Ա . Չ .

Le Gérant : GEORGES WALINE.  
Paris. — Imp. V<sup>o</sup> ALBOUY, 75, avenue d'Italie.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմի դէմ պատերազմը . . . . .	ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ
Ատելութեան ոգեւարը . . . . .	ԲՈՂ ԱՏԱՆ
Ցայգերգ . . . . .	ՏԵՐՎԻՇ
Մտքիս խառնարանէն . . . . .	ԽՈՍՐՈՎ
Բարի դահիճը . . . . .	ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
Արձագաքներ . . . . .	ԱՐԱՄ ՉԱՐԸԳ
Վարդ եւ Սոխակ . . . . .	ԽՕՃԵՆՑ
Ուրուագիծ .—Քամին . . . . .	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ
Ազգային քրոնիկ . . . . .	Չ .
Խաչագող մը . . . . .	ՄԻՐ-ԵՐՕ
Եգիպտական սպաւորութիւններ . . . . .	Ա . ՉՊԱՆԵԱՆ
Եերկան . . . . .	Ա . Չ .
Քաղաքական կացութիւնը . . . . .	

Պոօշեանցի վրայ յօդուածը պիտի հրատարակենք յաջորդ թուով :

ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտ պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2,50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել՝

A. TCHOBIANIAN

6 Place de l'Odéon

PARIS,

ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ՊՈՒԼԿԱՐԻԱ. —

Պ . Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսմուք)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. —

Տր . Կ . Փաշեան

ԴԱՀԻՐԷ. —

Պ . Առաքել Փափագեան (Դավրէժ)

ԻՍԹ ԲԷՄՊՐԻՃ. — (Մաս . , Ամերիկա)

Պ . Աշոտ Տէր-Մանուէլյան

ԻՍԹ ՈՒՈԹԸՐԹԱՌԻՆ. — (Մաս . , Ամերիկա)

Պ . Մանուկ Պ . Գալստեան

ՈՒՍԹԸՐ. — (Մաս . Ամերիկա)

Պ . Յակոբ Գասապեան